

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots  
“MATENADARAN” and “Friends of the Matenadaran” Benevolent  
Fund express their gratitude to “JTI ARMENIA” CJSC for sponsoring  
the publication of this book

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և «Մատենադարանի  
բարեկամներ» բարեգործական հիմնադրամը երախտագիտություն են  
հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»  
ՓԲԼ-ին սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար



“МАТЕНАДАРАН”  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МЕСРОПА МАШТОЦА

**ИОАНН ДАМАСКИН  
АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ**

Том I  
ДРЕВНЕАРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ “ДИАЛЕКТИКИ” ИОАННА  
ДАМАСКИНА. КРИТИЧЕСКИЕ ТЕКСТЫ И ИССЛЕДОВАНИЕ

**Издание подготовила Гоар Мурадян**

Ереван - 2019



“MATENADARAN”  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**JOHN OF DAMASCUS  
ARMENIAN TRANSLATIONS**

Volume I  
OLD ARMENIAN VERSIONS OF THE *DIALECTICS* BY JOHN OF  
DAMASCUS. CRITICAL TEXTS AND STUDY

**Edited by Gohar Muradyan**

Yerevan - 2019

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀՈՎՀԱՆ ԴԱՄԱՍԿԱՅԻ  
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՐԿԵՐ**

**ՀԱՏՈՐ Ա.**

**ՀՈՎՀԱՆ ԴԱՄԱՍԿԱՅՈՒ «ԴԻԱԼԵԿՏԻԿԱ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի

ԵՐԵՎԱՆ  
2019

ՀՏԴ 1/14

ԳՄԴ 87

Հ 851

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագիր՝ փ. գ. թ. Օլգա Վարդապարյան**

Հ 851

Հովհան Դամասկացի հայերեն թարգմանված երկեր / Աշխատասիրություն  
թյամբ Գ. Մուրադյանի. - Եր.: Մատենադարան, 2019.

Հատոր Ա: Հովհան Դամասկացու «Դիալեկտիկա» երկի հայերեն  
թարգմ.: Քննական բնագրեր և ուսումնասիրություն. 317 էջ:

Հովհան Դամասկացու հայերեն անտիպ պատկանելի ժառանգությունը, որ ծրագրում ենք հրատարակել երեք հատորով, բացի աստվածաբանական գրվածքներից, պարունակում է «Դիալեկտիկա» տրամաբանական երկի երկու միմյանցից անկախ թարգմանություն՝ հունարենից և վրացերենից: Դրանց քննական բնագրերը կազմում են առաջին հատորը:

Որպես հավելված գրքում զետեղված են Գրիգոր Երուսաղեմացու կազմած հունարենից թարգմանված անանուն փիլիսոփայական սահմանումների ժողովածուները:

ՀՏԴ 1/14

ԳՄԴ 87

ISBN 978-99941-890-5-2

© Մուրադյան Գոհար, 2019

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԱՌԱՋԱԲԱՆ .....	11
Հովհան Դամասկացիին և նրա երկերը .....	11
Հովհան Դամասկացու երկերի գրվածքների հայերեն թարգմանությունը .....	14
Հովհան Դամասկացու «Դիալեկտիկա» երկը .....	15
«ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՐԵՆԻՑ .....	18
Բազարատ Մամիկոնյանի թարգմանության լեզվական բնութագիրը.....	21
ԲՆԱԳԻՐ .....	33
ՍՐԲՈՅՆ ՅՈՂԱՆՆՈՒ ԴԱՄԱՍԿՅՈՅԻՈՅՆ ԱՍՏՅԵԱԼ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՀԱՅ ԼԵՋՈՒ Ի ՅՈՒՆԱՐԷՆ ԳՐՈՅ ԲԱԳԱՐԱՏ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ: ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԻՄԱՍ- ՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ, ՈՐ Է ԻՍԱԳՈՒԹԻԿԻ, ԶԿՆԻ ԱՅՍՐ և ԶԱՄԵՆԱՅՆ ԻՄԱՍՏԱ- ՍԻՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ, ՈՐ Է ՂԱՆՈՆՆ ԸՍՏ ՀԵԼԼԷՆԱՅԻՈՅ ԲԱՐԲԱՌԻ .....	35
Ա. Յաղագս գոյի, էություն և պատահման .....	35
Բ. Յաղագս սեռի, սեռականի և տեսակի, տեսականի և միմեանց .....	36
Գ. Յաղագս անհատի .....	42
Դ. Յաղագս տարբերության .....	46
Ե. Յաղագս պատահման .....	47
Զ. Յաղագս յատկի .....	48
Է. Յաղագս ստորոգությանց .....	49
Ը. Յաղագս հոմանուն և փաղանուն ստորոգության .....	51
Թ. Յաղագս թէ զինչ ստորոգության և զինչ որակությի ստորոգության .....	52
Ժ. Յաղագս անձնատրության և որ յանձնատրության .....	53
ԺԱ. Յաղագս էության և բնության և կերպի, անհատի և դիմի և անձնատ- րության .....	54
ԺԲ. Յաղագս բաժանման և առանց բաժանման .....	55
ԺԳ. Յաղագս բնութամբ կանխագունի .....	57
ԺԴ. Յաղագս սահմանի .....	58
ԺԵ. Յաղագս հոմանունաց .....	60
ԺԶ. Յաղագս փաղանունաց .....	61
ԺԷ. Յաղագս բազմանունաց .....	61
ԺԸ. Յաղագս այլևայլ անունաց .....	61
ԺԹ. Յաղագս գերադրականացն .....	62

Ի. Յաղագս տասն սեռականության սեռականից .....	62
ԻԱ. Յաղագս համասեռից և համատեսակաց, և այլասեռից և այլատեսակաց և թուոց տարբերությանց .....	63
ԻԲ. Յաղագս որ առընչի .....	64
ԻԳ. Ես յաղագս էութեան .....	65
ԻԴ. Յաղագս բնութեան .....	65
ԻԵ. Յաղագս կերպի .....	66
ԻԶ. Յաղագս անձնատրութեան .....	67
ԻԷ. Յաղագս դիմի .....	68
ԻԸ. Յաղագս որ յանձնատրութեան .....	68
ԻԹ. Յաղագս անանձնատրութեան .....	69
Լ. Բաժանումն գոյի և էութեան .....	69
ԼԱ. Յաղագս ֆանակի և ֆանակութեան .....	70
ԼԲ. Յաղագս առընչի .....	74
ԼԳ. Յաղագս որակի և որակութեան .....	76
ԼԴ. Յաղագս առնելոյ և կրելոյ .....	81
ԼԵ. Յաղագս կալոյ .....	82
ԼԶ. Յաղագս որ առ ուրն .....	82
ԼԷ. Յաղագս որ առ երբ .....	83
ԼԸ. Յաղագս ունելոյ .....	83
ԼԹ. Յաղագս ներհակի .....	83
<b>ՀՈՒՆԱՐԵՆԻՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ</b> .....	<b>86</b>
[Ա.] Յաղագս, էութեան և պատահման, թարգմանեալ Բագարատ Մամիկոնեան յունարէն գրոց .....	88
[Բ.] Վասն սեռի, տեսակի, տեսականի և միմեանց .....	88
[Գ.] Յաղագս անհատի .....	89
[Դ.] Վասն տարբերութեան .....	89
[Ե.] Յաղագս պատահման .....	90
[Զ.] Յաղագս յատկի .....	90
[Է.] Ստորոգի .....	91
[Ը.] Յաղագս փաղանուան և հոմանուան ստորոգութեան .....	92
[Թ.] Թէ զինչէ ստորոգութիւն և զինչ որակութիւն ստորոգութեան .....	92

[Ժ.] Յաղագս անձնատրոսթեան և որ յանձնատրոսթեան և անձնատրոսթեան .....	93
[ԺԱ.] Յաղագս էութեան և բնութեան և կերպի, անհատի, դիմի և անձնատրոսթեան .....	93
[ԺԲ.] Յաղագս բաժանմանց .....	94
[ԺԳ.] Յաղագս բնութեան կանխագունի .....	94
[ԺԵ.] Յաղագս հոմանոսանց .....	94
[ԺԶ.] Յաղագս փաղանոսանց .....	94
[ԺԷ.] Յաղագս բազմանոսանց .....	94
[ԺԸ.] Յաղագս այլևայլ անոսանց .....	95
[ԺԹ.] Յաղագս գերադրականաց .....	95
[Ի.] Յաղագս տասն սեռականից սեռականութեան .....	95
[ԻԱ.] Յաղագս համասեռից և այլասեռից, համատեսակաց և այլատեսակաց և թոսց և տարբերութեանց .....	95
[ԻԲ.] Յաղագս որ առընչի .....	96
[[ԻԳ.] Յաղագս բնութեան .....	96
[ԻԴ.] Յաղագս անձնատրոսթեան .....	96
[ԻԵ.] Յաղագս դիմի .....	96
[ԻԸ.] Յաղագս որ յանձնատրոսթեան] .....	96
[ԻԹ.] Անանձն .....	97
[Լ.] Գոյ .....	97
[ԼԱ.] Քանակ .....	97
[ԼԲ.] Յաղագս առընչի .....	98
[ԼԳ.] Յաղագս որակի և որակութեան .....	99
[ԼԴ.] Յաղագս առնելոյ և կրելոյ .....	99
[ԼԵ.] Յաղագս կարոյ .....	100
[ԼԶ.] Յաղագս որ առ ուր .....	100
[ԼԷ.] Երբ .....	100
[ԼԸ.] Ունել .....	100
[ԼԹ.] Յաղագս ներհակի .....	100
«ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՅԵՐԵՆԻՑ .....	101
Սիմեոն Պղնձահանեցու թարգմանության լեզվական բնութագիրը .....	102

ԲՆԱԳԻՐ .....	115
Գլուխ՝ գրոցն Յոհաննու Դամասկացոյ .....	116
Պատասխանի թղթոյն Կոզմայի Մամիացոյ եպիսկոպոսի: Արժանագով և աստուածապատիւ հարդ Կոզմայի արքեպիսկոպոսի Մամիացոյ: Նուաստ կրանատրս Յոհաննէս: Ողջոյն տերամբ .....	118
ՍՐԲՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՅ ՀԱԻՐ ՄԵՐՈՅ ՅՈՂԱՆՆՈՒ ԴԱՄԱՍԿԱՅՈՅ ՀԱ- ՄԱՌԱԽԵԱԼ ԲԱՆՍ Ի ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆՅ ՀՌԵՏՈՐԻՅՆ, ԶՆՈՅԱՅՆ ՀԱՃԵԱԼՄՆ ԱՍԵԼՈՎ ԵՒ Ի ԲԱՅ ԹՈՂԵԱԼ ԶՀԱԿԱՌԱԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՅԼՈՅ ԵՒ ԶԸՆԴՈՒ- ՆԱՅՆԱԲԱՆ ԱՌԱՍՊԵԼՄՆ, ԶԱՅՆ ՅԻՇԵԼՈՎ, ԶՈՐ ԸՆԴՈՒՆԻ ԵԿԵՂԵՅԻ .....	121
Ա. Յաղագս էութեան և գոյութեան և պատահման: Պրաֆս առաջին .....	121
Բ. Վասն սեռի և սեռականագոյն սեռի և տեսակի և տեսակագոյն տեսակի և որ առ միմեանս են .....	122
Գ. Վասն բաժանման .....	128
Դ. Վասն պատահման .....	129
Ե. Վասն բաժանացելոյն .....	130
Զ. Վասն լոյ և լսողականի .....	131
Է. Վասն համանունութեան .....	133
Ը. Վասն զինչէ-ի և որ[պիսի]զինչէի լոյ .....	134
Թ. Վասն սեռականի և անսեռականի .....	136
Ժ. Վասն գոյութեան և բնութեան և կերպարանի և անհատի և դիմաց և սեռի .....	136
ԺԱ. Վասն բաժանելոց .....	138
ԺԲ. Վասն բնութեամբ առաջնոյ .....	141
ԺԳ. Վասն սահմանադրութեան .....	142
ԺԴ. Վասն յարանունութեան .....	144
ԺԵ. Վասն փաղանունութեան .....	145
ԺԶ. Վասն բազմանունութեան .....	146
ԺԷ. Վասն այլ և այլ անուանութեանց .....	146
ԺԸ. Վասն յարանունութեանց .....	146
ԺԹ. Վասն տասանցն ազգական ազգի, այսինմն՝ ստորոգութեանց .....	147
Ի. Վասն համազգեաց և համատպից և այլազգեաց և այլակերպից և բարժանմանց թուոց .....	148



ԻԱ. Վասն յորում է .....	150
ԻԲ. Վասն գոյացութեան .....	151
ԻԳ. Դարձեալ վասն գոյացութեան .....	152
ԻԴ. Վասն բնութեան .....	153
ԻԵ. Վասն պատկերի, տպի եւ կերպարանի .....	154
ԻԶ. Վասն սեռի մարմնոյ, որ է անձն .....	155
ԻԷ. Վասն դիմաց, զի դէմք երիւ. եւ սեռ եւ տեսակ եւ անձն մի են .....	156
ԻԸ. Վասն անհատիցն .....	157
ԻԹ. Վասն էականի, որ է անձն .....	157
Լ. Վասն անսեռի .....	159
ԼԱ. Բարժանումն էութեան եւ դպրութեան .....	159
ԼԲ. Դարձեալ վասն համազգեաց եւ հոմանուանց, այլազգաց եւ այլանուանց եւ այլ տեսակաց, եւ որք թոտվ բարժանեալք են .....	160
ԼԳ. Վասն քանակի եւ քանիւնութեան .....	161
ԼԴ. Վասն առընչի .....	165
ԼԵ. Վասն ոյր եւ որպիսութեանն .....	168
ԼԶ. Վասն առնելոյ եւ հանդիպելոյ .....	172
ԼԷ. Վասն անկալոյ եւ կալոյ .....	174
ԼԸ. Վասն ուրին .....	175
ԼԹ. Վասն երբի .....	175
Խ. Վասն ունելոյ .....	175
ԽԱ. Վասն ներհակացն հակառակ .....	176
ԽԲ. Վասն ունելոյ եւ պակասութեան .....	178
ԽԳ. Վասն առաջնոյ եւ վերջնոյ .....	179
ԽԴ. Յաղագս ի միասին համանգամայնց .....	181
ԽԵ. Վասն շարժողն գոլոյ եւ շարժողութեան .....	181
ԽԶ. Վասն ունելոյ .....	184
ԽԷ. Վասն նառելոյ եւ աննառելոյ, որ է այր եւ ոչ .....	185
ԽԸ. Վասն սահմանի եւ յառաջադիմութեան եւ ներհադրեալ խորհրդոց .....	186
ԽԹ. Վասն անձնական միատրութեան հոգաց .....	187
ՀԱՎԵԼՎԱԾ: ԳՐԻԳՈՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ .....	190

Առաջաբան .....	191
Բնագրեր .....	206
Գրիգորի երոնիսաղեմացիոց սուղմանք քանաքանք ԱՐՏՈՐՈՇԵԱԼՔ ԸՍՏ ՍՐԲՈՑ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԳԱՊԵՏԱՑ .....	207
Ա.1 ՅԱՂԱԳՍ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՆՈՒԱՆՑ .....	207
Ա.2 ՀԱՐՑՄՈՒՆՔ ԿԱՐՃԱՌԱԻՏԱԲԱՐ .....	208
Ա.3 ԲՆՈՒԹԻՒՆ Է, ՈՐ Ի գոյացողականաց ոմանց բաղկանայ .....	218
Բ. ՍԱՀՄԱՆՔ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆՔ .....	221
Գ. ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՅԵՂԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆ .....	239
Դ. ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ ՄԻՋԱԿՔ .....	244
Ե. ԲԱՆԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆՔ .....	248
Զ. ՄԱՍՈՒՆՔ ՄԱՐՄՆՈՑ .....	254
Է. ՅԱՂԱԳՍ ՏՆԿՈՑ ՎԵՐՋԻՆ ԳԼՈՒԽ .....	256
Ը. ՆԻՒՍԱՑԻՈՅՆ .....	257
Թ. ՍԱՀՄԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԻԲՐ ՀԱՐՑՄԱՄԲ .....	258
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	290
Древнеармянские переводы “Диалектики” Иоанна Дамаскина. Критические тексты и исследование. Резюме .....	310
Old Armenian Versions of the <i>Dialectics</i> by John of Damascus. Critical Texts and Study. Summary .....	313
Հապավումներ .....	316

## ԱՌԱՋԱԲԱՆ

### Հովհան Դամասկացին և նրա երկերը

Ուղղափառ եկեղեցու հայր Հովհան Դամասկացին (Ἰωάννης ὁ Δαμασκηνός)<sup>1</sup> ասորի վանական և ֆանանա էր: Ծնվել է Դամասկոսում 675/676 թ., մահացել 749 թ. դեկտեմբերի 4-ին (որը սրբի հիշատակի օրը դարձավ) Երուսաղեմի մոտ գտնվող Սուրբ Սաբասի (արաբ. Մար Սաբայի) վանքում: Կաթոլիկ եկեղեցու վարդապետ է 1890 թվականից:

Դամասկացու մասին կենսագրական տեղեկությունների հիմնական աղբյուրը Հովհան Երուսաղեմացու անունով պահպանված՝ չափազանցություններով լեցուն ու առասպելախառն վարժատիպ հունարեն երկն է՝ հատվածաբար թարգմանված արաբ վանական Միխայելի հեղինակած 1084 թ. արաբերեն «հոգեշահ» գրվածքից<sup>2</sup>:

Հովհանը ծնվել է Դամասկոսի երևելի քրիստոնյա Մանսուր քնտանիքում, որն այդ անունը ստացել է նրա պապ՝ Հերակլ կայսեր օրոք Ասորիքի հարկահավաք Մանսուր իբն Սարջունից: Մանսուրը հայտնի է նաև որպես ֆղափր մահմեդականներին հանձնելու ակտիվ մասնակից: Մի կարծիքի համաձայն՝ այդ ասորի քրիստոնյա ընտանիքը արաբական ծագում ուներ: Հովհանը մեծացել է Դամասկոսի քրիստոնյա արաբական միջավայրում: Ըստ որոշ պատմամաների՝ պատանեկության տարիներին կապ է ունեցել ապագա խալիֆ Յազիդ I-ի և արժանի քրիստոնյա բանաստեղծ ալ-Ախթալի հետ:

Երբ 630-ականներին արաբները գրավեցին Ասորիքը, Դամասկոսի արժանիքը պահեց քրիստոնյա իր մեծամասնակ պաշտոնյաներին, այդ թվում՝ Հովհանի պապին: Հայրը՝ Սարջուն-Սերգիուսը, Ումայյադ խալիֆների արժանի ֆարտուղարը դարձավ: Անվավեր տեղեկություն կա, որ Հովհանն ինքն էլ ծառայել է արժանիքում, մինչև բոլոր ստրուկներին ազատ արձակելը և իր որդեգրյալ եղբայր Կոսմասի հետ Երուսաղեմի մոտ ս. Սաբասի վանք մտնելը (հավանաբար 706 թ.) և 734 թ. նույն վանքում ֆանանա ձեռնադրվելը:

Ուսումնասիրության տարիներին Հովհանը ուսումնասիրել է ինչպես արաբների, այնպես էլ հույների գրքեր (հեթանոսական և քրիստոնեական)՝ տիրա-

<sup>1</sup> Նրա մականունն էր Χρυσορρόας (բառացի՝ «ոսկի հորդոդ»), այսինքն՝ հարտարախոս): Այդպես է նրան անվանել արդեն Թեոփանես Խոսովանոզը (758-818), “*Theophanis chronographia*, vol. 1”, ed. de C. Boor, Leipzig: Teubner, 1883, Repr. 1963, էջ 408.26:

<sup>2</sup> Ն. Ակինյանի բնորոշումն է, տե՛ս Ն. Ակինեան, *Սիմէոն Պրնձաճանեցի և իւր թարգմանությունները վրացերէնէ, Վիեննա, 1951, էջ 57:*

պետելով երկու լեզուներին: Ղուրանի նրա ֆննադատությունը վկայում է, որ նա ծանոթ էր այդ գրքին:

726 թ., երբ Լևոն III Իսավրացի կայսրը պատկերներ պաշտելու և հասարակական վայրերում դրանք ցուցադրելու դեմ հրովարտակ հրապարակեց, Հովհանն Երեմի Գրեմի հանդես եկավ կայսեր և նրա որոշման՝ պատկերամարտության խիստ ֆննադատությամբ: Պարզ ու մատչելի ոճի շնորհիվ դրանք մեծ ժողովրդականություն էին վայելում և կարևոր դեր խաղացին Նիկիայի երկրորդ ժողովում (787 թ.), որը վերջ դրեց այդ վեներին:

Դամասկացի գիտնականի հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում էր օրենք, աստվածաբանություն, փիլիսոփայություն, երաժշտություն: Նա բեղուն գրիչ է ունեցել, հեղինակել է ֆրիստոնյա դավանանքը լուսաբանող աշխատություններ ու հիմներ, կատարելագործելով ուղղափառ եկեղեցու կանոնը, և դրանք մինչ օրս էլ ծեսի մասն են կազմում:

Նրա գրվածքներն են՝

1. Երեմի Գրեմի պատկերների մասին (*Orationes de imaginibus tres*):

2. Մեծակտավ «Գիտության աղբյուրը» (*Fons scientiae*)՝ բաղկացած երեմի մասից.

ա. Տրամաբանական «Դիալեկտիկա» (*Dialectica sive capita philosophica*) երկը՝ երկար (68 գլուխ) և համառոտ (50 գլուխ) խմբագրություններով: Համառոտը երկու անգամ թարգմանվել է հայերեն՝ հունարենից Բագարատ Մամիկոնյանի և վրացերենից՝ Սիմեոն Պղնձահանեցու ձեռքով (վերջինս՝ ի թիվս Դամասկացու մյուս երկերի):

բ. «Հերակլիանի մասին» (*De heraclitibus*). վերջին գլուխը նվիրված է «խամայելական» հերակլիանի, որ իսլամի առաջին հերոսն է ֆրիստոնեա հեղինակի կողմից:

գ. Աստվածաբանական՝ «Ասանդոսին ուղղափառ հաստոյ» (*Expositio fidei*): Սա ֆրիստոնյա աստվածաբանության և փիլիսոփայության համակարգված շարադրանքի առաջին փորձն է<sup>1</sup>: Թարգմանված է հայերեն:

<sup>1</sup> О. Б. Ионайтис, “Традиции Иоанна Дамаскина в русской средневековой философии,” *Verbum*, Вып. 6: *Аристотель и средневековая метафизика, Альманах центра изучения средневековой культуры при философском факультете Санкт-Петербургского университета*, СПб, 2002, с. 203.

3. «Համառոտ ներածութիւն հրամանակարգ աստուածաբանութեան»<sup>1</sup> (*Institutio elementaris*)՝ «Գիտության աղբյուրի» նախապատրաստական աշխատություն:

4. «Բանք ընդդիմադրականք ի ֆակումն հերձուածոց Յակոբիկ Ասորոց» (*Contra Jacobitas*): Թարգմանված է հայերեն:

5. «Ընդդիմադրութիւն Նեստորիանոսի» (*Contra Nestorians*): Թարգմանված է հայերեն:

6. «Երկխոսություն մանիքեացիների դեմ» (*Contra Manichaeos*):

7. «Բաղադրյալ բնության մասին կամ ակեփալների<sup>2</sup> դեմ» (*De natura composita sive Contra acephalos*):

8. «Քրիստոնյայի և սարակենոսի վեճը» (*Disputatio Christiani et Saraceni*):

9. «Նամակ երիցս սրբասացության մասին» (*Epistula de hymno trisagio*):

10. «Ճիշտ կարծիքի մասին» (*De recta sententia*):

11. «Բանք վասն հաւատոյ եւ ընդդիմադրութիւն Նեստորիոսի» (*De fide contra Nestorians*): Թարգմանված է հայերեն:

12. «Վասն որ ի Քրիստոս երկու բնութեանց, եւ այլ ամենայն բնութեանց ինքնութեանց համատատեայ» (*De duabus in Christo voluntatibus, nam et innotescitibus*)՝ միակամականների դեմ: Թարգմանված է հայերեն:

13. «Սուրբ զուգակշիռ»<sup>3</sup> (*Sacra Parallela*)՝ հոգեշահ գործ՝ պահպանված հատվածաբար:

14. «Սուրբ պահի մասին» (*De sacris jejuniis*):

15. «Ի ննջումն Աստուածածնի» (*Homilia in dormitionem Virginis Mariae*): Թարգմանված է հայերեն:

<sup>1</sup> Ն. Ալիսյանի բնորոշումն է, նշվ. աշխ., էջ 62: Սակայն նրա վկայակոչած էջերը սխալ են. PG 95, 99-112-ի փոխարեն կարողում ենք PG 95, 9-18:

<sup>2</sup> «Ակեփալներ» (հուն. ἀκέφαλοι, բառացի՝ «անգլուխներ») էին կոչվում Ե. դարավերջին Ալեքսանդրիայի եկեղեցու այն անդամները, ովքեր բաժանվեցին Պետրոս Մոնզոսից, երբ նա 482 թ. ընդունեց Ջենոն կայսեր՝ Քաղկեդոնի ժողովի բանադրանք չպարունակող «Հենոտիկոնը»: Անվանումը բազմաթիվ է նրանով, որ հերձվածողները չունեին իրենց առաջնորդող եպիսկոպոս: Այդ միջավայրից էր միաբնակների առաջնորդ Սևերոս Անտիոքացին (512-519), իսկ հետագայում ուղղափառ հեղինակները, այդ թվում և Դամասկոսցին, այդպես էին կոչում միաբնակներին առհասարակ (*Православная энциклопедия*, т. 1, с. 390: “акефалы”):

<sup>3</sup> Այսպես է թարգմանել Ն. Ալիսյանը, նշվ. աշխ., էջ 62:

16. «Պողոսի թղթերի մեկնություն» (*Commentarii in epistulas Pauli*)՝ ծաղկափայլ Հովհան Ոսկեբերանից, Թեոդորեոսու Կյուրացուց և Կյուրեղ Աղեֆսանդրացուց:

17. Այլևայլ հատեր, երգեր և շարականներ հունաց եկեղեցու երգարաններում:

18. Հովհանին ձեռագրերում վերագրված «Բարաղամ և Հովասափ»<sup>1</sup> (*Vita Barlaam et Joasaph*) վեպի հեղինակակային պատկանելության վերբերյալ տարբեր կարծիքներ կան, օրինակ՝ ուր հեղինակը Եվթիմիոս Իբերացին է, և այն հունարեն է թարգմանվել ԺԱ. դարում վրացերենից<sup>2</sup>: Ըստ Կաթողանի՝ այն գրվել է Թ. դարում ոմն Մար Սաբասի վանական Հովհանի ձեռով<sup>3</sup>:

### Հովհան Դամասկացու երկերի գրվածքների հայերեն թարգմանությունը

Դամասկացու մի շարք գրվածքների հայերեն թարգմանությունը ԺԳ. դարի առաջին կեսին («Իբր 1240-ին»<sup>4</sup>) իրականացրել է հայ ֆաղկեղոնիկ Սիմեոն Պղնձահանեցին<sup>5</sup> վրացերեն թարգմանությունից:

Պղնձահանը (Գուգարք) ԺԳ. դարում Իվանե Զաֆարյանի միջնորդությամբ անցել էր Վրաց եկեղեցու իրավասության տակ<sup>6</sup>:

<sup>1</sup> Հայերեն թարգմանությունը տե՛ս *Նկարագրութիւն հոգևորական վարուց Յովասափու որդւոյ թագաւորին հնգկաց, գրեալ Յովհաննու կրանաւորի, աշխատասիրեց Մ. Տէր-Մովսեսեան, Վաղարշապատ, 1898*:

<sup>2</sup> Օրինակ այստեղ՝ S. Der Nersessian, *L'illustration du roman de Barlaame et Joasaph*, préface de Charles Diel, Bocard, 1937:

<sup>3</sup> A. Kazhdan, "Where, when and by whom was the Greek Barlaam and Ioasaph Written," *Zu Alexander d. Gr. Festschrift G. Wirth zum 60. Geburtstag am 9.12.86*, vol. 2, Amsterdam, 1988, pp. 1187-1209.

<sup>4</sup> Ն. Ակինեան, *Սիմէոն Պղնձահանեցի...*, էջ 67:

<sup>5</sup> Նրա մասին տե՛ս Ն. Ակինեան, *Սիմէոն Պղնձահանեցի...*, էջ 4-9: Սիմեոնի մյուս թարգմանություններն են՝ Պրոկղ Դիաղոխոսի «Շաղկապ աստուածաբանականի», Հովհաննես Սինայեցու «Սանդղոյ աստուածային ելից» (ընդ որում առաջին ֆան գրույններ հունարենից թարգմանել է Մինասր Տրապիզոնից, իսկ Սիմեոնը շարունակել է), «Պատմութիւն վրաց», «Ժամագիրք հունաց» (այս թարգմանությունը ևս արված է նույն Մինասի մասնակցությամբ), անդ, էջ 8-9, էջ 132, 190: Տե՛ս Պրոկղ Դիաղոխոս, *Շաղկապ աստուածաբանականը և Իրանե Պետրիժիի Լուծմունք, հայերեն թարգմանություն*, III, հետազոտությունը հավելել և տեխնիկական ապագրության է պատրաստել Մայա Ռափավյան, ֆննական ապարատը և բառարանը պատրաստել են Մայա Ռափավյան, Խաթունա Գափրինդաշվիլին և Իրմա Խոսիտաշվիլին, Թբիլիսի, 2016 (գիրքն ունի վրացերեն, հայերեն ու անգլերեն «Ամփոփում» և հայերեն-վրացերեն բառացանկ, բնագիրը կազմվել է երկու ձեռագրի համեմատությամբ՝ ՄՄ 1500 և ՄՄ 1832):

<sup>6</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 222. «Վախճանեցաւ և Իւանէ, եղբայր Զաֆարէի, և թաղեցաւ ի Պղնձահանէն, ի դուռն եկեղեցայն, զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց վրացի վանս հաս-

Վերը տեսանք, որ «Գիտության աղբյուրից» Սիմեոնը թարգմանել է առաջին և երրորդ մասերը՝ զանց առնելով «Հերձվածների մասին»-ը: Հայերեն ունենք նաև «Բանք ընդդիմադրականի ի ֆակումն հերձուածոց Յակոբիկ Ասորոց», «Ընդդիմադրութիւն Նեստորիանոսի», «Բանք վասն հատոյ եւ ընդդիմադրութիւն Նեստորիոսի», «Վասն որ ի Քրիստոս երկու բնութեանց, եւ այլ ամենայն բնութեանց ինքնութեանց համառատեալ», «Ներբողեան ի ննջումն ամենասուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու» (Վատիկան, Բորգեան 41 (ԺԸ դ.), 57ա-63բ, Զմմատ 86 (ԺԸ դ.), 82բ):

Դամասկացու անունով կա նաև մի ֆանի անհարազատ՝ միայն հայերենով պահպանված երկ՝ «Բանք յաղագս Հոովմէացոց, թէ որպէս եղեն անմիաբան ի սոցանէ չորից եկեղեցեաց», «Պատասխանի առ հայս»<sup>1</sup>, որ Դամասկացու անունով պահպանված՝ մինչ այժմ միակ հրատարակված երկն է<sup>2</sup>, «Պատասխանի առ հրեայս»:

### Հովհան Դամասկացու «Դիպեկտիկա» երկը

«Դիպեկտիկա» երկն ունի մի նախաբան՝ ուղերձ որդեգրյալ եղբայր՝ Մայրումայի Կոսմաս եպիսկոպոսին, որ պարունակում է «Գիտության աղբյուր» եռագրության նախագիծը. նախ խոստանում է ներկայացնել հելլենացի իմաստունների յավագույն նվաճումները («Յառաջագոյն գհելլենացոց իմաստնոցն առարեցից այլ զրնտրեալսն ի նոցանէ»), որ համապատասխանում է «Դիպեկտիկա» երկին, երկրորդ՝ հերձվածողների ստահող բարբաջանքները («Եւ զկնի նոցա կարգեցից զաստուածատեաց հերձուածողացն բարբաջմունսն, որպէս զի ծանաթութեամբ ստութեան նոցա»), հմմտ. «Հերձվածների մասին»), երրորդ՝ բացահայտել ճշմարտությունը, այսինքն՝ ուղղափառ ուսմունքը (հմմտ. «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ»):

տասեաց»: Տե՛ս նաև A. Bozoyan, “Le traductuer Siméon Plndzahank et la question d’identité nationale,” *Actes du colloque “L’Europe et le Caucase. Les relations interrégionales et la question de l’identité*, sous la direction de M. Dokhturichvili, G. Dédéyan, I. Auge, édition Université d’état Ilia, 2012 (pp. 164-172), p. 167:

<sup>1</sup> Ըստ Ակինյանի՝ երկի իրական հեղինակը Նիկիայի մեսոբյուրիս Եվստրատիոսն է: Մրա դեմ գրվել է «Վուծումն զրպարտութեանց Յովհան Դամասկացոյ» (Եղմ. 1040, 1737 թ., էջ 251-274), տե՛ս Ն. Ակինեան, *Սիմէոն Պղնձահանեցի...*, էջ 97:

<sup>2</sup> Տե՛ս Բ. Կիլեսերեան, «Հին էջեր. Յովհաննէս Դամասկացի եւ Հայ եկեղեցին», *Լոյս շաբաթաթերթ*, 1905, էջ 1008-1012, 1065-1066 (նախաբան), 1066-1068, 1112-1115, 1906, էջ 45-48, 116-119, 213-216, 355-359, 474-479, 589-592, 810-815, 957-960, 981-984, 1075-1079, 1124-1126, 1196-1199: Հիմքում մեկ ձեռագիր է՝ Գալաթիայի Ազգային մատենադարանի ձ. 77, 1-86: Երկը պահպանվել է նաև հետևյալ ձեռագրերում՝ ՄՄ63 (ԺԶ դ.), 198ա-229բ, ՄՄ 5495 (1696-1697), 92ա-107բ (բնագիրը քերի է), ՄՄ 5859 (ԺԷ դ.), 374ա-440բ:

Բուն երկը պահպանվել է համառոտ խմբագրությամբ (50 գլուխ), որ սովորաբար ձեռագրերում նախորդում է «Ասանդոքին ուղղափառ հաստատոյ» (*Expositio fidei*) գրվածքին, և ավելի երկար տարբերակով (68 գլուխ). դա հեղինակակի հետագա հավելումների արդյունք է:

«Դիալեկտիկայի» առաջին գլուխները (2-6) նվիրված են այն հինգ տրամաբանական հասկացությունների (πέντε φωνάί) ֆննարկմանը, որոնք Պորփյուրիոսը (234-305) Արիստոտելի «Կատեգորիաներ» երկի իր հոշակավոր «Ներածության» մեջ արտաբերել էր 10 կատեգորիաներից («սեռ», «տեսակ», «տարբերություն», «յատուկ», «պատահում»), իսկ Դավիթ Անհաղթը բնորոշում է որպես πέντε φωνάί՝ հինգ «ձայն»<sup>1</sup> կամ «բարբառ»<sup>2</sup>: Կան բուն արիստոտելյան կատեգորիաներին նվիրված գլուխներ (23, 33-40), մնացածներում ֆննվում են ստորոգության հետ կապված այլևայլ հարցեր: Ուստի «Դիալեկտիկայի» հիմքում արիստոտելյան տրամաբանությունն է՝ «Ստորոգությունները» և Պորփյուրիոսի՝ դրանց ներածությունը<sup>3</sup>: Հովհանն Բնիկ է նաև աստվածաբանության համար կարևոր հասկացություններ, ինչպես, օրինակ՝ ὑπόστασις եզրը, որի համար հունարենից թարգմանիչ Բագարաս Մամիկոնյանն օգտագործել է «անձնատրություն» համարժեքը, հմմտ. նաև՝ ἀνυπόστατον – «անանձատրություն» (գլ. ԻԹ.), իսկ Սիմեոն Պղնձահանեցու թարգմանության մեջ գտնում ենք տարբեր համարժեքներ՝ «անձն» (գլ. Բ.<sup>4</sup>, Դ., ԼԲ., ԽԹ.), «առանձնատրություն» (գլ. Դ., ԽԹ.), «սեռ» (գլ. ԼԴ.), «անհատ» (գլ. Ը., Ի. F<sup>5</sup> «սեռ» ուղղված «անհատ»), «էակ» (գլ. Թ., F՝ «սեռ» ուղղված «էակ»), «անձնատրություն սեռի» (գլ. ԽԹ.), «մարմին» (գլ. ԽԹ.), նաև «անձնատրություն» (գլ. ԼԴ.), նաև՝ ἀνυπόστατον – «անսեռ», «անանձն» (գլ. Լ.), ὑποστατικός – «սեռական, այս ինքն անձնական» (գլ. ԽԹ.), օստի,

<sup>1</sup> Դաւ. Պորփ. 2.1, 2, 3, 7, 4.2, էջ 64, 65, 70, 86:

<sup>2</sup> Դաւ. Պորփ. 4.2, 5, 6, 6.2, 7.3, 10.1, 4, 12.2, 3, +1.1, էջ 86, 88, 102, 114, 126, 128, 140, 274:

<sup>3</sup> Արիստոտելյան տրամաբանական հասկացություններն ու ֆննարկները Հովհանն կիսուել է նաև իր զուտ աստվածաբանական երկերում, օրինակ՝ պատկերամարտության դեմ գրված երեք հատում մեծ դեր է խաղում πρόσωπον – «դէմ»/ «դէմք»-ը՝ աստծու, հրեշտակների և մարդու համար, տե՛ս Joseph Koterski, S.J. “On the Aristotelian Heritage of John of Damascus,” *The Failure of Modernism: the Cartesian Legacy and Contemporary Pluralism*, ed. B. Sweetman, American Maritain Association Publications, 1999, pp. 58-71 (<https://maritain.nd.edu/ama/Sweetman/Sweetman05.pdf>):

<sup>4</sup> Հղումները շճանաբեռնելու համար նշում ենք միայն հայերեն թարգմանությունների գլուխները:

<sup>5</sup> F-ն ՄՄ 116 ձեռագիրն է, որում առավել ցայտուն է դրսևորվել վրացերենից թարգմանված բնագրի՝ հունարենի համեմատությամբ խմբագրելու աշխատանքը. այդ մասին տե՛ս ստորև, էջ 102, 105-112:



որ Բագարատը միշտ թարգմանել է «էութին», միայն մեկ անգամ «էականութին», իսկ Սիմեոնը՝ «գոյացութին» ( գլ. Բ., ԺԳ., ԺԵ., Ի., ԻԳ., ԻԶ., ԼԱ., ԼԲ., ԼԵ., Խ., ԽԵ., ԽԶ.), «գոյութին» (գլ. Բ., Զ., Է., Ը., Թ., ԺԳ., ԺԸ., ԺԹ., Ի., ԻԲ., ԻԳ., ԻԴ., ԻԵ., ԻԶ., ԻԷ., ԻԹ., ԼԵ., ԼԶ., Խ., ԽԶ.), «էութին» (գլ. Ա.), «դպրութին» (գլ. ԼԱ.), «գոյական» (գլ. ԼԳ.), «ազգ գոյութին» (գլ. Խ.):

Դամասկացին դիմել է նաև այլ փիլիսոփաների գրվածքներին<sup>1</sup>: Լինոս Բենակիսը մասնավորապես նշում է Դավիթ Անհաղթի «Սահմանն իմաստասիրութեան» և «Վերլուծութին Ներածութեանն Պորփիրի» երկերի ազդեցությունը<sup>2</sup>: Առհասարակ երկը բնորոշվում է որպես կոմպիլատիվ: Հովհանն ինքն էլ խոստովանում է դա. «Այլ ասացից զիմ և յիմոցս մտաց և ոչ ինչ, որպէս նախ ասացի, այլ զմեծ և զհոչակելի և զյառաջ ընտրեալ վարդապետաց եկեղեցոյ զվաստակս ի մի ժողովելով և համառօտելով զբանս նոցա, որչափ կարողութին է» (Կոսմասին հասցեագրված նամակի վերջին պարբերությունից):

«Դիալեկտիկան» շարունակում է տրամաբանության ֆրիստոնեսական դասագրքերի ավանդույթը, ըստ որի՝ դոգմատիկ երկերին երբեմն տրամաբանական գլուխներ էին նախորդում: «Դիալեկտիկան» թարգմանվել է ասորերեն (VIII դ.), արաբերեն (X դ.), վրացերեն (XI դ.) և հին բուլղարերեն (1073 թ.)<sup>3</sup>: Հայերեն թարգմանությունները հրատարակված չեն, և դրանց գոյությունը հայտնի է միայն հայագիտության մեջ:

<sup>1</sup> Երկի աղբյուրներն ուսումնասիրված են հետևյալ աշխատության մեջ՝ G. Richter, *Die Dialektik des Johannes von Damaskus: eine Untersuchung des Textes nach seinen Quellen und seiner Bedeutung*, Ettal, 1964 (Studia Patristica et Byzantina, 10):

<sup>2</sup> Լ. Բենակիս, «Դավիթ հայր Արիստոտելի բյուզանդական մեկնիչների երկերում», ՊԲՀ, 1981, 1 (էջ 46-55), էջ 48-49:

<sup>3</sup> Հմմտ. «Иоанн Дамаскин», *Православная энциклопедия*, т. 24, сс. 27-66.

### «ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՐԵՆԻՑ

«Դիալեկտիկան» հունարենից թարգմանել է Բագարատ Մամիկոնյանը, ինչպես նշված է թարգմանության վերնագրում (բոլոր ձեռագրերում)՝ «Սրբոյն Յոհաննու Դամասկացոյն ասացեալ և թարգմանեալ ի հայ լեզու ի յունարէն գրոյ Բագարատ Մամիկոնեան: Ներածութիւն իմաստասիրութեան, որ է Իսաղոծիկի, զկնի այս և զամենայն իմաստասիրութեան գործարան, որ է դանոնն ըստ հելլէնացոց բարբառի»:

Բագարատի անձի և ժամանակի մասին տեղեկություն չի պահպանվել: Վնակ. 1598 (1708 թ.) ձեռագրի հիշատակարանում կարդում ենք, որ այն արտագրված է 1339 թ. մի ձեռագրից<sup>1</sup>: Իսկ Թյուբինգենի 74 (ԺԳ դ.) ձեռագրում այդ թարգմանության առկայությունը ցույց է տալիս, որ այն արվել է ԺԳ դարից առաջ<sup>2</sup>:

Ակիմյանը ենթադրում է, որ Բագարատը Կոստանդին Միրանաձնի հիշատակած՝ Տարոնի իշխան Գրիգորիկ (Κρικορίκιος) Մամիկոնյանի որդի Պանկրատիոսն (Παγκράτιος) է և Ռոմանոս կայսրից (919-944) ստացել էր պատրիկ տիտղոսը<sup>3</sup>, ուստի թարգմանությունն արվել է Ժ. դարում:

Համեմատությունը ցույց տվեց, որ ինչպես այս, այնպես էլ Սիմեոն Պղնձահանեցու թարգմանությունը «Դիալեկտիկայի» համատոտ տարբերակից է:

Ստորև ներկայացվող բնագրերը չեն հրատարակվել՝ բացառությամբ P ձեռագրի սկզբից թերի բնագրի (սկսվում է ԼԲ. գլխի կեսից և պարունակում է ողջ բնագրի մոտ 2/5 մասը) Մատուռ Զոնտայի (կից անգլերեն թարգմա-

<sup>1</sup> «Փառք ամենասուրբ Երրորդութեան, Հօր եւ Որդոյ և Հոգւոյն սրբոյ, ասարտեցաւ ի թուրքերութեան հայկազուն տումարի ԹՉԸ Երրորդի (1339) եւ հին օրինակի. իսկ եւ սա նորս՝ ՌՃԾԵ (1708) ամին ի փառս սրբոյ երրորդութեան» (թ. 144բ), տե՛ս Ս. Ճեմնեմեան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հատոր Ը, Վենետիկ, Ս. Ղազար, 1996, էջ 396, նաև Գ. Զարպհանալեան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ-ԺԳ)*, Վենետիկ, Ս. Ղազար, 1889, էջ 579:

<sup>2</sup> Հմմտ. Հր. Ահառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 1, Երևան, 1942, էջ 358-359:

<sup>3</sup> Ն. Ակիմեան, *Սիմեոն Պղնձահանեցի...*, էջ 70-71. Ակիմյանի ենթադրությունը հիմնված է այն փաստի վրա, որ Բագարատ անունը հատուկ էր Բագրատունիներին, և սա աղբյուրներից հայտնի միակ Մամիկոնյան Բագարատն է: Տե՛ս Constantinus Porphyrogenitus, *De administrando imperio* 43, հմմտ. *Կոստանդին Միրանաձին*, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970 (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 6, Բյուզանդական աղբյուրներ Բ), էջ 5. «Կրիկորիկ», էջ 8-9. «Պանգրատ» (էջ 223-ում Բարթիկյանը ծանոթագրում է վերջին անունը. «Բագարատ անվան բյուզանդական արտահայտությունն է»):

նությամբ) և մեր հրատարակությունների<sup>1</sup>: «Մատենագիրք հայոց» մատենաշարի Ի հատորի համար «Դավթ Անյաղթին վերագրուած եւ նրա անուանն առնշուող գրուածքներ» հավելվածը պատրաստելիս այդ ձեռագրի (Aldini 178) անհայտ բնագիրը զետեղեցինք այլ երկերի շարքում, քանի որ դեռևս չէինք պարզել նրա ծագումը<sup>2</sup>: Զոնտային նույնպես բնագրի հեղինակային պատկանելությունը հայտնի չէր: Վերլուծելով այն՝ նա ենթադրություն է հայտնում, որ հեղինակը կարող էր Ժ. դարի կաթոլիկ դավանության հայ լինել<sup>3</sup>: Ուշագրավ է, որ Զոնտան նմանություն է նկատել Դավթի Պորփյուրի Ներածության մեկնության հետ<sup>4</sup>: Հետագայում Զոնտան և Բենեդետտա Կոնտինը վերահրատարակեցին Ալդինի 178 ձեռագրում պահպանված հատվածը՝ խնամքով վերանայելով, շտկելով բազմաթիվ ընթերցումներ և նշելով առանձին հատվածներին համապատասխանող տեղիները Հովհան Դամասկացու հունարեն բնագրում<sup>5</sup>:

Ակինյանն իր ուսումնասիրության մեջ ներկայացրել է գլխակարգությունը և Ա. գլուխն ու Բ. գլխի կեսը Թյուրինգենի ձեռագրից՝ «նաշակ մրտալու ընթերցողներու»<sup>6</sup>:

Բագարատի թարգմանությունը հունարենից ամբողջական չէ՝ թարգմանված չեն 50 գլուխներից մի քանիսը՝ 30-րդ գլխի զգալի մասը, 31. Περὶ τοῦ τί ὑπάρχει ἴδιον τῆς οὐσίας (այսինքն՝ \*«Յաղագս թէ զինչ է յատուկն էութեանն») և 32. Ἔτι περὶ ὁμογενῶν καὶ ὁμοειδῶν ἕτερογενῶν τε καὶ ἕτεροειδῶν καὶ ὁμοὑποστάτων καὶ ἀριθμῶ διαφερόντων (այսինքն՝ \*«Դար-

<sup>1</sup> Մատենագիրք հայոց, Ի հատոր, Ժ. դար, Մխիթար Գոշ, գիրք Բ, Երևան, 2014, «Յատենաշար», էջ 740-744՝ «Արխատուելի «Ստորագրությունների» անանուն մեկնությունը Պավիայի գրադարանից», M. Zonta, “An Unpublished Fragment of a Medieval Commentary on Aristotle’s *Categories* (Pavia, Biblioteca Universitaria, Aldini 178, Folios 110<sup>r</sup>-114<sup>v</sup>), First Edition and English Translation,” *Բազմավէպ*, 2013, էջ 94-120:

<sup>2</sup> Իտալիայի գրադարանների հայկական ձեռագրերի ցուցակում Գ. Ուլուհոջյանն անվանել է այն “Testo Filosofico non identificato: Commente alle *Categorie* di Aristotele?”, տե՛ս G. Uluhogian, *Catalogo dei manoscritti Armeni delle biblioteche d’Italia*, Roma, 2010, 62, pp. 248-252:

<sup>3</sup> Անդ, էջ 97: Զոնտան միշտ չէ, որ նիշտ է տառադարձել և թարգմանել բնագիրը, ինչը բնական է. այն հասկանալի է դառնում միայն հունարեն սկզբնագրի հետ համադրելուց հետո:

<sup>4</sup> Անդ, էջ 98-99:

<sup>5</sup> Mauro Zonta – Benedetta Contin, “A Fragment of a Classical Armenian Version of John of Damascus’ *Dialectica*, Revised Critical edition,” *Rassegna degli Armenisti Italiani*, vol. XVI (Anno 2015), pp. 5-18: Տողատակում հողվածագիրները նշում են, որ մենք ենք մի նամակով հուշել իրենց բնագրի հեղինակային պատկանելությունը, էջ 6, ծան. 6:

<sup>6</sup> Ն. Ակինեան, *Միմէոն Պղնձահանեցի...*, էջ 74-79:

ձեալ յաղագս համաստեղից և համատեսակաց, և այլաստեղից և այլատեսակաց և թուոց տարբերութեանց») գրուխները, 41-րդ գլխի վերջին հատվածը (38-46 տողեր) և վերջին ինը՝ 42-50 գրուխները<sup>1</sup>: Գ. «Յաղագս անհատի» գլխի մեջ երկու հատված կա, որ համապատասխանում են հունարեն ընդարձակ խմբագրության 47.4-21<sup>2</sup>, իսկ հաջորդը՝ համառոտ խմբագրության 30.6-23 հատվածին (երկուսն էլ *Διαίρεσις το ὄντος καὶ τῆς οὐσίας*). գլխից են, հմմտ. [Լ.] «Բաժանումն գոյի և էութեան», որտեղից այն տեղափոխված է, այդ պատճառով [Լ.] գլխում մնացել է մեկ նախադասություն):

ՄՄ 8132 (մեր A) և ՄՄ 8444 (մեր B) ձեռագրերում ԻԱ. գլխի («Յաղագս համաստեղից և համատեսակաց, և այլաստեղից և այլատեսակաց և թուոց տարբերութեանց») մեջտեղում՝ նախադասության կեսից ներմուծված է մի մեծ հատված (ԻԸ.՝ «Յաղագս որ յանձնատրութեան» գլխի կեսից մինչև ԼԲ.՝ «Յաղագս առնչի» գլխի կեսը). հավանաբար նախագաղափար օրինակում պրակների շփոթություն է տեղի ունեցել: Դրա հետևանքով նաև փոխվել են գրուխների համարները: Հետևաբար տեղափոխելով ՄՄ 8132-ի 167բ-169բ ու 169բ-172բ, իսկ ՄՄ 8444-ի 331ա-333բ ու 333բ-337բ էջերի

<sup>1</sup> Գրուխ 42. *Περὶ ἕξεως καὶ στερήσεως* («Ունենալու և զրկվելու մասին»): Արիստոտելի համապատասխան հասկացությունների հայերեն համարժեքները գտնում ենք նրա երկերի հին թարգմանության մեջ, որն ուղեկցվում է մեկնությամբ (հմմտ. Անանուն, *Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի, Մատենագիրք հայոց*, Ժէ հատոր, ԺԱ դար, Երևան, 2016, էջ 960. «ունակութիւն և պակասութիւն»): Գրուխ 43. *Περὶ προτέρου καὶ ὑστέρου* («Առաջինի և վերջինի մասին»), հմմտ. անդ, էջ 971. «Յաղագս նախկնի»): Գրուխ 44. *Περὶ τοῦ ἄμα* («Միաժամանակի մասին»), հմմտ. անդ, էջ 973. «Յաղագս համանգամայնց»): Գրուխ 45. *Περὶ κινήσεως* («Շարժման մասին»), հմմտ. անդ, էջ 975. «Յաղագս շարժութեան»): Գրուխ 46. *Περὶ τοῦ ἔχειν* («Ունենալու մասին»), հմմտ. անդ, էջ 978. «Յաղագս ունելոյ»): Գրուխ 47. *Περὶ ἀποφάνσεως, ἀποφάσεως τε καὶ καταφάσεως* («Պնդման, բացասման և հաստատման մասին»), հմմտ. Անանուն, *Յաղագս մեկնութեան Պերիարմենիաս, Մատենագիրք հայոց*, Ժէ հատոր, էջ 796. «զի՛նչ է բացասութիւն եւ ստորասութիւն եւ բացերեսութիւն»): Գրուխ 48. *Περὶ ὅρου καὶ προτάσεως καὶ συλλογισμοῦ* («Եզրի, նախադրյալի և սիլլոգիզմի մասին»): Գրուխ 49. *Ὅρισμοὶ τῆς φιλοσοφίας εἰς τὸν ἕξ* («Փիլիսոփայության սահմանումները վեցն են»): այդ վեց սահմանումները բառացի համընկնում են Դավիթ Անհաղթի «Սահմանի իմաստասիրութեան» երկի հունարեն սկզբնագրի հետ, տե՛ս *Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium*, ed. A. Busse, Berolini, 1904, pp. 20.26-31): Գրուխ 50. *Περὶ τῆς καθ' ὑπόστασιν ἐνώσεως* («Ըստ անձնավորության միավորման մասին»), նաև կրկին 49 համարը կրող *Ἐτερον κεφάλαιον* («Մյուս գրուխը»):

<sup>2</sup> Հավանաբար թարգմանելու պահին համառոտ խմբագրությունը փոքր-ինչ այլ է եղել և մեզ է հասել հետագայում փոփոխության ենթարկված տեսքով: Համարյա նույն հատվածը (47.6-21) թարգմանել է նաև Սիմեոն Պնձնահանեցին վրացերենից՝ «Ա. Բարձանունն էութեան եւ դպրութեան» գլխում, որ համապատասխանում է հունարեն 30. *Διαίρεσις τοῦ ὄντος καὶ τῆς οὐσίας* գլխին, ուստի թարգմանության նախօրինակում այն ներմուծված է եղել այդտեղ:

հատվածները և հերթականությամբ համարակալելով գլուխները, ստանում ենք բնագրի նախնական վիճակը: Նույնպիսին է դասավորությունը Թյուրինգենի ԺԳ. դարի ձեռագրում, Վնտկ. 1598-ում և հավանաբար (ձեռագրացուցակներում գլուխների ցանկեր չկան) մնացած ձեռագրերում՝ Եղմ. 1213 (1635-36), Եղմ. 898, Նոր-Ջուղա 394:

ՄՄ 1686 (մեր C), ՄՄ 1739 (մեր D) և ՄՄ 1740 (1634-1636 թթ., 411ա-416ա), ՄՄ 1744 (1637 թ., 370բ-377բ) ձեռագրերում բնագիրը թերի է. այն ընդհատվում է է. գլխի վերջին պարբերության «Զի եթէ ծիծաղիլ ասի կայիկն» բառերից հետո, և ավելացված է մի այսպիսի հատված. «Կատաղարիսա՝ Ստորոգութիւն: Ի պերիարմէնիսա՝ Յաղագս մեկնութեան: Անաղատիկի՝ Վերլուծական: Ապատիկտիկի՝ Ապացուցական: Դիադիֆդիկի՝ Շարաբանութիւն: Կատաֆասիս՝ Ստորասութիւն: Ապաֆանէս (ՄՄ 1740 Ապաֆանէս)՝ Բացասութիւն: Ապաֆանսիս՝ Բացերևական: Պրաֆասիս՝ Նախադասութիւն»: Սա երկում արծարծվող հիմնական հասկացությունների հունարեն եզրերի, իսկ առաջին երեքը՝ Արիստոտելի երկերի վերնագրերի տառադարձումն է: Հունարեն բառերին կցված են հայերեն համարժեքները:

Վերնագրից և էջերի ֆանակից դատելով՝ այդպիսի բնագիր է պարունակում նաև Եղմ. 925 (1634, էջ 610-619) ձեռագիրը: Վերնագրից դատելով՝ հավանաբար այս նույն թերի բնագրի սկզբի հատվածն է պարունակում նաև ՄՄ 698 (1719, 133բ-134ա):

### **Բագարատ Մամիկոնյանի թարգմանության լեզվական բնութագիրը**

Թարգմանիչը մի կողմից ձգտել է կիրառել հունարան թարգմանությունների տառացիության հասնող ճշգրտության սկզբունքը, պատճենելով բառեր, երբեմն էլ՝ շարահյուսական կառույցներ, սակայն մյուս կողմից շատ հաճախ խախտել է տարրական շարահյուսական կապերը՝ խաթարելով բնագրի իմաստը:

Ա. Կան մի շարք թարգմանական սխալներ, որոնց հիմքում արտասանական նմանությունն է (որոշ սխալներ կարող են նաև հունարեն հիմք ձեռագրի այլևայլ ընթերցումների հետևանքով ծագած լինել).

προσληφθεῖσα – «առ ի պակասեալ» (ԻԸ.), հմմտ. «առեալն» (Վր.<sup>1</sup> ԻԹ.).

<sup>1</sup> Համեմատությունները Սիմեոն Պղնձահանեցու վրացերենից արված թարգմանության նույն հատվածների հետ են (որի գլուխների համարների անհամապատասխանությունը պայմանավորված է տեղափոխություններով ու բացթողումներով):

πρὸς- նախածանցով λαμβάνω («վերցնել, ստանալ») բայի կրավորական աորիսաք (ἐλήφθην) շփոթված է λείπω («թողնել», կրավորականում՝ «չունենալ, զրկված լինել») բայի նույն ձևի (ἐλείφθην) հետ, իսկ նախածանցը բարգմանված է որպես համապատասխան նախդիր:

ἀντιδιηρημένως – «գհակառակասացեալսն» (ԻԵ.), *հմմտ.* «հակառակ բաժանելեաց» (*Վր.* ԻԵ.). դերբայի երկրորդ մասը՝ διηρημένως, αἰρέω («ընտրել», իսկ δια նախածանցով՝ «բաժանել») բայի պերֆեկտի կրավորական դերբայն է, որ շփոթվել է εἶρω «խոսել» բայի ձևի հետ:

ἔξις – «յուրէջ» (ԼԳ.)՝ չորս անգամ, *հմմտ.* «շինուած» (*Վր.* ԼԵ., նաև ԽԶ.),

«արտաբոյ» (ԼԳ.), *հմմտ.* «շինուած» (*Վր.* ԼԵ.),

«արտաբին» (ԼԳ.), *հմմտ.* «շինուած» (*Վր.* ԼԵ.),

«են», «մինն», «ի յարտաբերոյն» (ԼԹ.), *հմմտ.* «ունակութեան» (*Վր.* ԽԱ.): Հավանաբար շփոթվել է ἔξις ἦς («որից») նախդրավոր կապակցության հետ: *Հմմտ.* Arist. Cat. 9a.4 – Արիստ. Ստորոգ. 939 «ունակութիւն»:

τέκτονα – «զմնող» (ԼԳ.): Շփոթված են τέκτων «հյուսն», *հմմտ.* «զհիւսն» (*Վր.* ԼԶ.) և τί κτω «ծնել», ներգործական աորիսաքի τεκών դերբայը: Նույն գլխում կա նաև ճիշտ բարգմանություն՝ «արհեստաւոր» (ԼԳ.):

πρὸς ἀνάκλισιν – «սո կոչումն» (ԼԵ.): Շփոթված են ἀνάκλισις «պատկած դիրք», *հմմտ.* «յեցեալն լինել ուրեք» (*Վր.* ԼԵ.), «բարգմական» (*Վր.* ԼԲ.) և ἀνάκλισις «դիմում, կանչ» գոյականները:

τὴν παρατροπήν τῆς φύσεως – «զառանց յեղանակի բնութեանն» (ԼԹ.): παρατροπή՝ «կանխում, հակադարձում», *հմմտ.* «հակադարձմունսն բնութեանն» (*Վր.* ԽԱ.), գոյականն ընկալվել է որպես տրօπή («շրջվելը») կամ տρόπος («եղանակ») գոյական՝ παρά նախդրով (բարգմանաւոր է, հայցական հոլովի հետ մասնավորապես նշանակում է «բացառությամբ»):

ἀκολασία – «անպատահար», «առանց պատահարի» (ԼԹ.): ἀκολασία-ի հետ նույնարմատ ἀκόλαστος ածականը (երկուսն էլ ածանցյալ են κολάζω «էտել, զսպել, պատժել» բայից) նշանակում է «անզուսպ, անառակ», *հմմտ.* «բրդախոհութիւն», «անառակութիւն» (*Վր.* ԽԱ.), նաև՝ «անպատիժ», որով հավանաբար և պայմանավորված է «անպատահար» մեկնաբանությունը:

ήλιθότης – «հարանմանն» (ԼԹ.). «հիմարություն» իմաստով գոյականը բարգմանիչը սխալմամբ կապել է λίθος «հար» բառի հետ, *հմմտ.* նույն սխալը Սիմեոնի մոտ՝ «հարանալն գոլ» (*Վր.* ԽԱ.):

ὕπερβολή – «վերարկու» (ԼԹ.): Շփոթված է ἀναβολή բառի հետ, իսկ իրական իմաստն է «առավելություն, չափազանցություն», *հմմտ.* «աւելազանցութիւնն» (*Վր. ԽԱ.*):

ἐπιπολλήσ – «ի բազումս» (ԼԳ.): Իրական իմաստն է «մակերեսին», *հմմտ.* «վեր ի վերոյ միայն» (*Վր. ԼԵ.*): Շփոթված է ἐπὶ πολλαῖς բառակապակցության հետ:

ἐπιφάνεια – «ըստ յայտնութեան» (ԼԳ.): Իրական իմաստն է «ճայտնություն»: Դարձյալ ἐπὶ նախածանցն ընթերցվել է որպես նախդիր, բայց և թարգմանվել սխալ:

ἡ ποιητικὴ δύναμις – «որակական զարուրին» (ԼԳ.): *ποιητικός* («ստեղծարար, արարչական») ածականը բխեցված է ոչ թե *ποιέω* («անել») բայից, այլ *ποιόν* («որակ») գոյականացված ածականից<sup>1</sup>: *Հմմտ.* նաև *ποιέω* – «որականամ» (ԼԳ.):

μόνιμα – «միանունմ» (ԼԳ.): Իրականում նշանակում է «մնայուն», *հմմտ.* «կայուն» (*Վր. ԼԵ.*), սակայն ընկալվել է որպես \**μονώνυμος* գոյություն չունեցող ածական:

Կան նախածանցները նախդրով թարգմանելու ևս այլ դեպքեր՝

καθολικώτερα – «ըստ ամենայնի» (Է.),

καταγινομένη – «ըստ լինելոյ» (ԺԳ.),

καταχρηστικῶς – «ըստ տկարութեան» (ԼԲ.), «ըստ շնորհի» (ԼԳ.),

ένυπόστατον – «որ յանձնատրութեան» (ԻԸ.):

Բ. *Կա հունարենից փոխառյալ մի քանի բառ.*

«Իսագոծիկի» (վերնագիր) – *είσαγωγική*, «ղանոն» (վերնագիր) – *κανών*, «աղամանի բար» (Գ.) – *ὁ ἀδάμας λίθος*, «պրատկ» (ԼԳ.) – *πράττειν*, *πραττόμενον*, «որ պրատենն» (ԼԳ.) – *τοῦ πράττοντος*, «անդրիանդ» (ԺԳ.)՝ իրականում՝ թարգմանության ուղեկցությամբ. «կուտ... է... և կոչի անդրիանդ» – *ἀνδριάς*:

<sup>1</sup> Այդ սոսկ հնչողությամբ իրար նման հունարեն բառերն իրար հետ կապել է արդեն Փիլոնի թարգմանիչը, երբ *ποιό*-ի դիմաց *ο* գոտագործել է «որակք արարուածք», *ποιότης*-ի դիմաց «որակութիւն արարչութեան» և «որակութիւն և արարուած», իսկ *ποιός*-ի դիմաց՝ «անորակ և անարարուած», տե՛ս Գ. Մուրադյան, «Փիլոն Ալեքսանդրացու գրաբար թարգմանությունների լեզվական որոշ առանձնահատկություններ», *ՊԲ*, 1997, 1, էջ 173:

Գ. ա. Տրամաբանական բառապաշարը, որ հայտնի էր Արիստոտելի և Դավիթ Անհաղթի թարգմանություններից, հիմնականում նույնն է, ինչը վկայությունն է այդ եզրաբանության՝ ընդունված լինելու փաստի.

«անանշատական պատահումն» (Ե.) – άχώριστον συμβεβηκός,

«անբան» (ստեպ) – ἄλογος, բայց և՛ «անասնանման» (ԼԳ.),

«անդրադարձիմ» (Է.), «անդրադարձուցանեմ» (ԺԳ.), «անդրադանամ» (ԺԳ.) – ἀντιστρέφω, բայց և՛ «դարձուցանեմ» (Է., ԺԳ.), «անդրէնդանայ» (ԺԳ.), ἀντιστρέφονται – «անդրադարձ» (ԼԲ.), «անդրադարձեալք» (ԼԹ.), բայց և՛ «յարադարձ» (ԼԲ.) (*հմմտ.* Դաւ. Պորփ. 5.8, 13.1 «անդրադարձիմ»),

«յանգգալի» (Բ.) – ἀναίσθητον (*հմմտ.* Դաւ. Պորփ. 23.5 «անգգայ»),

«անհատ» (Բ., Գ., Ե., Է., ԺԱ., ԻԱ., ԻԵ., ԻԶ., ԻԸ., ԼԲ.) – ἄτομον,

«անշունչ» (Բ., ԺԲ., ԻԶ., ԼԳ., ԼԴ., ԼԸ.) – ἄψυχον,

«առինչ» (Ի., ԼԲ., ԼԴ., ԼԹ.) – πρὸς τι (*հմմտ.* Arist. Cat. 8a – Արիստ. Ստորոգ. 920-921 «առինչ», բայց Դաւ. Պորփ. 11.5, 15.1, 2, 7, 16.1, 20.7, +2.1, +3.4. «առինչունակ»),

«բաժանելի», «բաժանական» (Բ., ԻԱ.) – διαιρετικός, բայց և՛ «կայուն» (ԻԱ.), «բաժանումն» (ԼԲ.),

«բաժանեմ» (Բ., Զ.) – διαίρω,

«բաժանումն» (ԺԲ., ԻԲ., Լ.) – διαίρεσις, բայց և՛ «հատուած» (Բ.), τὸ διαιρούμενον – «որ բաժանի» (Բ.), «բաժանելի» (Բ.), «որ հատանի» (Բ.),

«բաղկացական» (ԺԳ., ԻԱ., ԼԲ.) – συστατικός, բայց նաև՛ «դադարի» (Բ.), «հաստատական» (Բ. Գ.), «կացումն» (ԼԲ.), «կայուն» (Թ., ԻԱ.), «շարակցութիւն» (ԻԱ.), σύστασις – «կայումն» (ԻԳ.),

«բանական» (ստեպ) – λογικός,

«բառ» (ԺԳ., ԺԹ., ԼԱ.) – λέξις,

«բացալիմի» (Ե.) – ἀπογίνεται,

«բացասութիւն» (ԼԹ.) – ἀπόφασις, բայց և՛ «վհիռ» (ԼԳ.), «ուրանալն» (ԼԳ.), ἀποφατικῶς – «յայտնական» (ԼԳ.), «յայտնաբար» (ԼԳ.),

«բնութիւն» (ստեպ) – φύσις,

«բոլոր» (ԻԲ.) – ὅλος,

«գոյ» (Ա., Է., ԺԲ., ԻԳ.) – τὸ ὄν (*հմմտ.* նաև Դաւ. Պորփ. «զգոյն», «էակ», «ինչ»),



- «դիւրաբողի» (ԼԳ.) – εύαπόβλητος (*հմմտ.* Դաւ. Պորփ. «դիւրակոր-  
ծանելի» – εὐανάτρεπτος),
- «դիւրաշարժելի» (ԼԳ.) – εύκίνητος,
- «էնթակայ» (Ա., ԺԴ., ժԸ., ԻԲ., ԼԱ., ԼԴ., ԼԹ.) – ὑποκείμενον, բայց և՛  
«առաջիկայ» (Դ., Ե.), «ընդ իւրի կայ» (Ը.), καθ' ὑποκειμένου – «որ ընդ  
նմին կայ» (Ը.),
- «զգայական» (ԻԵ., ԼԱ., ԼԲ.) – αἰσθητικός,
- «ընդմիմեանս» (ԻԱ.) – ὑπάλληλα, բայց և՛ «միմեանց» (Բ.), «ի մի-  
մեանց բաժանեալ» (Բ.),
- «ընդունակ» (ԺԴ.) – δεκτικός,
- «ի բաց կատարեմ» (ԻԵ.) – ἀποτελέω (*հմմտ.* Դաւ. Պորփ. «բացակա-  
տարեմ»), բայց և՛ «կատարիմ» (ԻԵ., ԻԸ.),
- «կիրք եւ կրական որակութիւնք» (ԼԳ.) – πάθος καὶ παθητικὴ ποιότης  
(*հմմտ.* Arist. Cat. 9a.28 – Արիստ. Ստորոգ. 943՝ παθητικὴ ποιότης –  
«կրական որակութիւնք», Arist. Cat. 11b.1 – Արիստ. Ստորոգ. 955՝ πάσχειν  
– «կրել»), բայց նաև՛ «ախտական որակութիւնք» (ԼԳ.), πάθος – ախտ (ԼԳ.)  
(*հմմտ.* Arist. Cat. 9a.29 – Արիստ. Ստորոգ. 943՝ ախտ),
- «համաստեռ» (ԻԱ., ԻԵ) – ὁμογενής (*հմմտ.* Դաւ. Պորփ. 28.5 «հոմա-  
ստեռ», 27.8 «նմանաստեռ» – ὁμοιογενής),
- «համաստեսակ» (Դ., ԻԱ.) – ὁμοειδής, բայց և՛ «համաստեսական» (ԻԶ.),
- «հոմանուն» (Ը., ԺԲ., ԺԵ., ԺԹ., Լ.) – ὁμώνυμος, «հոմանուն» (ԼԳ.) –  
ὁμωνύμως,
- «ծիծաղական, ուղղագնացիկ, լայնեղունկն» ԺԴ. – γελαστικόν, ὀρθο-  
περιπατητικόν, πλατώνυχον, «լայնեղունգութիւն» (Զ.) – τὸ πλατώνυχον  
(*հմմտ.* Դաւ. Պորփ. 2.5, 5.8, 10.2, 13.3, 14.2, 19.2, 24.3, 27.5, 28.2, 5-7, 10-  
15, +4.1 «ծիծաղական», «ուղղորդագնաց», «լայնեղունկն»),
- «մակացութիւն» (Ը., ԺԴ., ԻԱ.) – ἐπιστήμη, բայց նաև՛ «արհեստ»  
(ԼԳ., ԼԸ.),
- «յատկութիւն» (ԻԱ.) – ἰδιότης,
- «յատուկ» (ԼԲ. և այլուր), «յատկութիւն» (ԺԴ.) – τὸ ἴδιον, բայց և՛ ἴδια  
– «տեսակ» (ԼԳ.),
- «ներգործութիւն» (ԻԷ.) – ἐνέργημα,
- «ներկայ, անցեալ, ապառնի» (ԼԷ.) – ἐνεστώς, παρωχημένος, μέλλον,

«ներհակութիւն» (ԼԳ.), «ներհակ» (ԼԳ.), «ներհակայ» (ԼԹ.) – ջնանտի-  
 օն, «ներհակ» (ԼԹ.) – ճնտկէմեոն, «ներհակ կայ» (ԼԹ.) – ճնտկեաա,  
 րայց և՛ «հակառակ կայ» (ԼԹ.),  
 «ներհակութիւն» (ԼԳ., ԼԳ.) – ջնանտիօտյ,  
 «նիւր» (Ա., ԺԳ., ԻԲ.) – յլղ,  
 «շարաքառնամ» և կրավորական՝ «շարաքառնիմ» (ԼԲ., ԼԹ.) –  
 սոնանաաւրէւ, րայց նակ՝ սոնանաաւրօւն – «որ ընղ նմին հատանի» (ԺԳ.),  
 «շարաքերեմ» (ԺԳ., ԼԲ.) – սոնեաաւրօւն, րայց նակ՝ «որ ընղ նմին քա-  
 ժանի» (ԺԳ.) – սոնեաաւրօւն, «որ առաքերի» (ԺԳ.) – սոնեաաւրօւն,  
 «շարաքերի» (ԻԵ.), «շարաքերական» (ԻԵ., ԻԸ.) – սոնեաաւրօւն,  
 «շարաքերակ» (ԻԸ.) – սոնեաաւրօւն, րայց նակ՝ «գոյաղեակ» (ԻԵ.),  
 «յարմարեակ» (ԻԸ.),  
 «շարամանութիւն» (Ի.) – սոնեաաւրօւն,  
 «որակ» (Ի., ԻԱ., ԼԳ.) – սոնեաաւրօւն,  
 «որակութիւն» (Բ., Գ., ԻԱ., ԼԳ., ԼԳ.) – սոնեաաւրօւն,  
 «պատահում» (Ա., Գ., Ե., Զ., ԺԱ., ԺԲ., ԺԳ., ԺԸ., Ի., ԻԳ., ԻԴ., ԻԶ., ԻԸ.,  
 ԻԹ., Լ., ԼԱ., ԼԸ.) – սոնեաաւրօւն,  
 «սահման» (Ը., ԺԳ., ԺԶ., ԺԸ., ԺԹ.) – սոնեաաւրօւն, (ԺԲ., ԺԳ., ԼԳ., ԺԵ., ԺԶ.) –  
 յորաաւրօւն,  
 «սահմանեմ» (Բ.) – սոնեաաւրօւն, րայց յորաաւրօւն – «սահմանական» (ԼԱ.),  
 «սեռ» (Բ., ԺԳ., Ի., ԻԱ., ԻԲ., ԻԸ., Լ., ԼԲ.) – սոնեաաւրօւն,  
 «ստորա[գ]րական» (ԺԳ.) – սոնեաաւրօւն,  
 «ստորագրեր» (Զ., ԺԶ., ԺԶ.) – սոնեաաւրօւն,  
 «ստորագրութիւն» (ԺԵ., ԺԶ., ԺԸ.), «ստորագիր» (ԺԳ.) – սոնեաաւրօւն,  
 «ստորասութիւն» (ԼԹ.) – սոնեաաւրօւն,  
 «ստորագրութիւն» (Ե., Ը., Ի., ԻԱ., ԼԱ., ԼԲ., ԼԳ., ԼԳ., ԼԶ., ԼԶ.) – սոնեաաւրօւն,  
 րայց նակ՝ «ստորագրութիւն» (ԻԱ., ԼԲ.), հմմտ. նակ «ստորագրութիւն» (Բ.,  
 Ե., Ը., ԼԹ.) – սոնեաաւրօւն,  
 «տեսակ» (Բ., Զ., Ե., ԺԱ., ԺԳ., ԻԱ.) հմմտ. «տիւր», «տեսակ» (Վր. Ի.,  
 ԻԲ., ԻԵ., ԻԶ., ԻԸ., Լ., ԼԲ., ԼԳ., ԼԵ., ԼԶ., ԼԶ.) – սոնեաաւրօւն, որ քարգմանակած է նակ  
 «յատուկ» (ԼԲ.),  
 «տարբերութիւն» (Բ., Գ., Ե., Զ., ԺԳ., ԼԲ., ԼԶ., ԼԶ., ԼԸ.) – սոնեաաւրօւն,  
 «փաղանուն» (Ը., ԺԶ., ԺԶ., ԺԹ.) – սոնեաաւրօւն (հմմտ. Գա. Պորփ.  
 14.8), րայց նակ՝ «փաղանունութիւն» (ԺԹ.) – սոնեաաւրօւն:

Գ.ա.1 Թարգմանութիւնը պարունակում է նաև նույն ճշգրտութեան սկզբունքով պատճենված բառեր.

«այլաբողբոջ» (ԻԵ.) – էտերոփոնիս,

«այլաէութիւն» (ԻԵ.) – էտերոօսիոս,

«այլանուանի» (ԺԸ.) – էտերօնոմա, բայց նաև՝ «այլկայլ անուանի» (ԺԸ.),

«այլասեռ» (ԻԱ.) – էտերօգենիս,

«այլատեսակ» (ԻԱ.), «այլակերպ» (ԻԵ.) – էտերօեյծիս, բայց նաև՝ «այլ տեսակ» (ԻԶ.),

«բազմանունի» (ԺԷ.) – փոլւօնոմա,

«դժուարահաս» (Գ.) – ճստմիտոս (հմմտ. Դաւ. Պորփ. 20.9 «դժուարահաստական» – ճստճորիտոս),

«դժուարաշարժելի» (ԼԳ.) – ճստկինիտոս,

«համաբողբոջ» (ԻԵ., ԻԷ.) – ճմօփոնիս,

«շարագալոցն» (Զ.) – սոներճոմենօն,

«վերածիմ» (ԼԸ.) – անագոմա, բայց նաև՝ «վերագայիմ» (ԼԳ.), «յարածիմ» (ԼԳ.), «ածիմ» (ԼԲ.), «երևեցուցանեմ» (ԼԳ.), «յարածգիմ» (ԼԳ.), «գոյանամ» (ԼԳ.),

«փաղակերպ» (ԻԵ.) – սսմմօրփօս,

«փոխաստի» (Բ.), «փոխատուեմ» (Բ.) – մետաճիճօմա,

«փոխարկիմ» (ԻԳ., ԼԳ., ԼԹ.) – մետաբալլօ:

Գ.բ. Կան նաև նախորդ շրջանի տրամաբանական երկերի թարգմանութիւններից տարբերվող, մեծ մասամբ՝ ձեռնարկային համապատասխանութիւններից զուրկ համարժեքներ.

«անդրաստորոգութիւնի» (Է.) – անտիկատիլօրօմենա (հմմտ. Դաւ. Պորփ. +9 «միմեանց ստորոգիմ» – անտիկատիլօրօմենա),

«առանձինն» (ԻԳ.) – անթսփօստատօս (հմմտ. Դաւ. Պորփ. 8.3, 19.5 «ինննաստորակայ», 23.1 «ինննագոյ»),

«առանց պատահման» (Ե.) – ճօրիստօն սսմբեթիկօս (հմմտ. Դաւ. Պորփ. 2.5, 7, 14.10, 20.2-5, 21.1, 23.1, 29.2, 4, 5 «անջատական պատահում»),

«առանց քանակի» (Գ., ԼԱ.) – անփօսա (սպասելի էր «անքանակ»),

«առաստիւն» (ԺԹ.) – փրօսիլօրիա (հմմտ. Դաւ. Պորփ. 7.1 «առկոչութիւն»),

«բազում» (ԻԸ.) – ճիփօրօս (հմմտ. «տարբեր»),

«ի բաժանմանէ» (ԺԲ.) – անփօճիլօրիս,

- «բացասութիւն» (ԼԹ.) – ἀπόφανσις (*հմմտ.* Arist. *Interp.* 16a.2 – Արիստ. Մեկն. 796 «բացերևութիւն»),
- «բացարկելի» (ԼԳ.) – εὐμετάβλητος (սպասելի էր «դիւրափոխարկելի»), կամ թերևս՝ «դիւրափոխոյ»),
- «բուն նիւթ» (ԺԱ.), «բնականն» (ԺԱ.) – τὸ πεφυκέναι, «գոյանամ» (ԻԳ.) – πέφυκα (*հմմտ.* Դաւ. Պորփ. 27.1, 3, 20.4, +1.6, +2.2, +6, +7, +8 «բնատրիմ»),
- «բնական» (ԼԳ.) – κατάφασις (*հմմտ.* Դաւ. Պորփ. 25.6, +3.6 «ստորասութիւն»), «յայտնարար» (ԼԳ.) «յայտնագոյն» (ԼԳ.), «ծածկարար» (ԼԳ.) – καταφατικῶς,
- «գերարական» (ԺԹ.) – παρώνυμος,
- «գոյանամ» (Ժ., ԺԱ., ԻԸ.), «ի բաց կամ» (ԻԶ., ԻԷ.), – ὑφίσταμαι (*հմմտ.* Դաւ. Պորփ. 3.7, 7.1, 8.2, 9.1, 3, 4, 10.3, 12.1 «ենթակայանամ»),
- «զգալի» (Բ., Ը., ԺԳ.) – αἰσθητικός (*հմմտ.* Դաւ. Պորփ. 6.8, 10.3 «զգալի» – αἰσθητός),
- «զգայարան» (Բ., ԺԱ.) – αἴσθησις (*հմմտ.* Դաւ. Պորփ. 9.8, 8.3, 16.5, 6, 25.1 «զգայութիւն»),
- «էական» (Բ., Գ., Դ., ԺԳ., ԼԲ.), «իշխանագան» (ԺԳ.), «ի յէութենէ» (ԻԵ.), «էութեան» (ԼԳ.) – οὐσιώδης (*հմմտ.* Դաւ. Պորփ. 2.5-8, 5.7, 8, 8.2, 18.3, 6, 19.5, «եղուտ», 21.1-3, 5, 6, 9, 23.3, 24.1, 25. 3, 27.5, 7, 10, 28.1, 11, +9, «գոյեղ», 21.1. «գոյեղուտ»),
- «էական» (ԺԳ.), «էականագոյն» (ԺԳ.), «ըստ էութեան» (Դ.), «ի վերայ էութեան» (Զ.), «էութիւն» (ԺԳ.) – ἐπουσιώδης (*հմմտ.* Դաւ. Պորփ. 2.5, 7, 8, 5.7, 8, 8.2, 18.3, 6, 19.5, «մակեղուտ», 21.2, 3, 27.8, 28.1, 3, 11, 13, +5.2, +9, «մակագոյեղ», 21.1. «մակագոյեղուտ»),
- «էութիւն» (Ա., Է., Ը., ԺԱ., ԺԲ., ԺԳ., ԺԵ., ԺԶ., ԺԸ., ԺԹ., Ի., ԻԱ., ԻԳ., ԻԴ., ԻԵ., ԻԶ., ԻԸ., Լ., ԼԲ., ԼԳ., ԼԸ.), «էականութիւն» (ԻԶ.), «էութեան» (ԼԳ.) – οὐσία (*հմմտ.* Դաւ. Պորփ. 29 անգամ՝ «գոյացութիւն», նաև 6 անգամ՝ «էութիւն», 4 անգամ՝ «գոյ», 1 անգամ՝ «էակ»),
- «ընդմիմեանս» (ԻԱ.), «ցմիմեանց» (ԼԲ.) – ὑπάλληλα (*հմմտ.* Դաւ. Պորփ. 16.4, 19.2, 3 «ընդմիմեամբ»),
- «ի բաց կատարեմ» (ԻԵ.) – ἀποτελέω (*հմմտ.* Դաւ. Պորփ. 3.8 «բացակատարեմ»),

- «ինչականութիւն» (ԼԲ.), «ինչ ունի» (ԼԲ.), «տենչումն» (ԼԲ.), ԼԹ. – σχέσις (*հմմտ.* Դաւ. Պորփ. 7.6, 8.2, 11.2, 6, 12.4, 5, 15.6, 16.3 «բաղադանութիւն», 36.5 «կալումն»), άσχετως – «յանտենչութեան» (ԼԲ.),
- «ինքնագոյ» (Ա., Բ.) – αὐθόπαρκτος (*հմմտ.* Դաւ. Պորփ. αὐθόποστατος), «կիսամասնի» (ԺԲ.), «կիսամասն» (ԺԲ.) – ὁμοιομερής (*հմմտ.* Դաւ. Պորփ. 17.2, 3 «նմանամասնեայ»),
- «ի կիսամասնէ» (ԺԲ.), «առանց կիսամասանց» ԺԲ. – ἀνομοιομερής (*հմմտ.* Դաւ. Պորփ. 17.2 «աննմանամասնեայ»),
- «համատեսական» (ԻԶ.) – ὁμοειδής (*հմմտ.* Դաւ. Պորփ. 22.2 «համատեսակ»),
- «հոմանուն» (ԼԳ.) – ὁμωνύμως (*հմմտ.* Դաւ. Պորփ. 17.6 «հոմանունաբար»),
- «հրաշագործալ» (ԺԱ., ԼԳ.) – ὁ δημιουργός (*հմմտ.* Դաւ. Պորփ. 9.4 «արարիչ»),
- «հրաշագործեալն» (ԼԳ.) – τὸ δημιουργούμενον (*հմմտ.* Դաւ. Պորփ. 16.6 «արարած» – δημιουργημα),
- «հրաշակերտութիւն» (ԼԳ.) – δημιουργία (*հմմտ.* Դաւ. Պորփ. 8.1 «արարչութիւն», 16.5 «արարչականն»),
- «մակադրեալք» (ԼԳ.) – παρώνυμος (*հմմտ.* Arist. Cat. 10a.28 – Արիստ. Ստորոգ. 138 «յարանունաբար», Դաւ. Պորփ. 11.2 «յարանունաբարասեմ» – παρονομάζω),
- «մակընդունիմ» (ԺԲ.), «ընդունիմ» (ԺԲ.) – ἐπιδέχομαι (*հմմտ.* Դաւ. Պորփ. 3.1, 21.4, 7, 8, +8 «ընդունիմ»),
- «յայլմէ անձնաւորական» (ԻԸ.) – ἑτεροῦπόστατον (*հմմտ.* Դաւ. Պորփ. 16.5 «այլաստորակայ»),
- «յատուկ» (Գ.) – ἰδιαίτατα (*հմմտ.* Դաւ. Պորփ. 20.2-6, 10, 11, 21.4-6, 9, 22.1, 24.1 «յատկեղ»),
- «յարակայի» (ԼԳ.) – διάκειται (*հմմտ.* Դաւ. Պորփ. 6.1 «յարակայանամ» – παράκειμαι),
- «յինչն այն» (Թ.), «զինչէ» (Թ.) – ἐν τῷ τί ἐστι (*հմմտ.* Դաւ. Պորփ. 2.6 «ի զինչեումն», 2.6, 7, 13.5 «ի ներ զինչեումն», 13.1 «ի ներում զինչէն», 13.3, 4, 14.1, 15.4, 5, 7, 20.1, +1.5, +2.5, +5.3, +6 «ի ներում զինչէին»),
- «ներհակաբաժինք» (ԺԲ.), «փոխանակ բաժանման» ԺԲ. – ἀντιδιδαιρούμενα (*հմմտ.* Դաւ. Պորփ. 28.13 «ընդդիմաբաժանեալք»),

«շարայարեմ» (Բ., Թ., ԺԴ., ԻԱ.) – συνίστημι (*հմմտ.* Դաւ. Պորփ. 3.7, 19.4, 20.4, 24.4, + 2.3, +3.6, +11 «բաղկանամ»),

«շնչատր» (Բ., Գ., Ը., ԺԲ., ԺԴ., ԻԱ., ԻԵ., ԻԶ., ԼԳ., ԼԴ., ԼԸ.) – ἔμψυχος (*հմմտ.* Դաւ. Պորփ. 16.6, 22.5, 24.2, +2.3, +3.2-4 «ներշնչական», 22.4 «ներշնչատր», բայց և 3.5, 13.4, 14.3, 16.4, 23.5 «շնչական», 3.6, 23.3 «շնչատր»),

«որակացեալ» (ԻԵ.) – εἰδοποιηθεῖσα (*հմմտ.* Դաւ. Պորփ. 23.3 εἰδοποιέω – «տեսակարարեմ»),

«որակութիւն» (Թ.), «զինչ որակութիւն» (Թ.), «յորակութեանն եթէ և զինչ» (Թ.) – ἐν τῷ ὀποῖόν τί ἐστι (*հմմտ.* Դաւ. Պորփ. 2.7 «յորպիսիինչեամն», 2.6, 7, 13.5 «ի ներ որպիսիինչեամն», 13.5 «ներ որպիսիինչէն», 13.3, 20.1, 26.1, 4, +1.5, +2.5, +5.3 «ի ներում որպիսիինչէին»),

«սեռական» (Բ., ԻԱ., ԼԲ.), «սեռականից» (Բ.), «սեռականաց» (Բ.), «սեռականի» (Բ., Ի.) «սեռականութեան» (Ի.) – γενικώτατος (*հմմտ.* Դաւ. Պորփ. 3.1, 16.1, 2, 4, 17.1, 6, 7, 9, 10, 18.1, 3, 4, 6, 22.1-3, +3.6 «սեռականագոյն»),

«տեսական», «տեսականից», «իրական» (Բ.), «յատկագոյն» (ԺԱ.), «յատկական» (ԺԱ., ԻԱ.) – εἰδικώτατος (*հմմտ.* Դաւ. Պորփ. 15.7, 16.2, 4, 17.1, 7, 18.1, 3-6, 19.2-4, 22.1 «տեսակա(ն)ագոյն»):

*Գ. Առանձնացնենք մի քանի կարևոր փրկիստփայական և աստվածաբանական եզր.*

Երրորդ տեսակ՝ կրական որակութիւն և կիրք, իբր ջերմութիւն, ցրտութիւն, սպիտակութիւն<sup>f</sup> և որ<sup>g</sup> այսպիսիք: Քանզի կիրքն դիւրաթողի է, իբր տրամադրութիւն, որպէս ոք վասն ամաւոյ կարմրագունի կամ վասն անի դեղնի, իսկ կրական որակութիւն դժուարաշարժ և<sup>h</sup> դժուարափոխելի է: Եւ կրական որակութեանցն կէտք ի կրիցն ոչ եղանին, այսինքն՝ ոչ<sup>i</sup> յայլուստ, այլ ըստ էութեանն են, որպէս հրոյ ջերմութիւն և մեղեր<sup>j</sup> ֆաղցրութիւն: Զի ոչ հրոյ ընդդիմանայ ջերմութիւն, և ոչ մեղեր ֆաղցրութիւնն, և ոչ յառաջագոյն ոչ գոյին այսոքիկ և յետոյ ընկալան զջերմութիւն և զֆաղցրութիւն, նոյնպէս և զնոյն կիրս կրել ըստ մերում զգայարանի: Քանզի հուրն ջերմ է և ջերմացուցանէ զմեզ, եւ մեղրն ֆաղցր է եւ ֆաղցրացուցանէ զմեզ<sup>k</sup>: Իսկ ոմանք ի յամեքէ կրից՝ խառնակութենէ եղանին և որականան, որպէս յորժամ կիրք<sup>l</sup> ըստ մերում զգայութեանս, այլ ոչ զնոյն կիրք և զնոյն որակութիւնք<sup>m</sup>, զոր ունին որ են գոյնք: Քանզի սպիտակն յորմէ կրից և խառնակութենէ լինի, կիրք լինին ի ձեռն տեսութեանն, այս ինքն՝ զբաղդատութիւն և զպարզու-

<sup>a</sup> Dial. 35.32 չիք

<sup>b</sup> Dial. 35.36-37 + και δύναμιν φυσικὴν ἢ ἀνεπιτηδειότητα

<sup>c</sup> B + ունի

<sup>d</sup> Dial. 35.39 + ἄμουσον

<sup>e</sup> P ընդունել զնա

<sup>f</sup> Dial. 35.43 + μελανία = Սիմ. Թարգմ. սևութիւն

<sup>g</sup> B որք

<sup>h</sup> B չիք դժուարաշարժ և

<sup>i</sup> AB չիք

<sup>j</sup> P մեղու ուղղված մեղեր

<sup>k</sup> AB չիք եւ մեղրն ֆաղցր է եւ ֆաղցրացուցանէ զմեզ

<sup>l</sup> որականան, որպէս յորժամ կիրք // Dial. 35.53 ποιούσιν ένίοτε πάθος = Սիմ. Թարգմ.

առնեն զայն ոմն պատուհաս

<sup>m</sup> A որակութիւն

թին և զլուսաւորութին, զի ոչ եթէ զմեզ սպիտակացուցանէ<sup>a</sup>: Թէ արդեաւ կրականն ոչ իցէ ստացական, կամ յամենայն տեսակս իցէ գոյացեալ, որպէս ջերմն<sup>b</sup> բոլոր հրոյ է, թէպէտ ոչ յամենայնի, իբր սևութին եթէովպացոյ. զի ոչ ամենայն մարդիկ սեւաւ: Այս ամենայն<sup>c</sup> յաղագս մարմնոյ տեսաւորի, այլ և յաղագս հոգոյ:

Չորրորդ որակութիւն՝ ձև և կերպ: Արդ ձևն ի շնչաւորս և յանշունչս տարբերի, իսկ կերպն՝ ի շնչաւորս միայն: Իսկ եթէ ասի յանշունչս կերպ կամ կերպարան, ոչ իսկապէս, այլ ըստ շնորհի ասի: Բոլորագոյն իցէ ձևն, զի և<sup>d</sup> կերպարան ձև կոչի<sup>e</sup>: Ուղղորդ<sup>f</sup> և թիւ, այսինքն՝ թիւութիւն, որակութեանն իցեն:

Պարտ է իսկ գիտել, եթէ որակի ի յաւելին իցեն մակադրեալ, որք ի յորակութեանց ասին, որպէս ի ջերմութենէ՝ ջերմն, իցեն իսկ և՛ հոմանունն, որպէս երաժշտական կամ արհեստ և երաժշտական անուն կնոջ, որ ունի զերաժշտական արհեստ, նաեւ քարանձ<sup>g</sup>, որպէս այլանուն ասի, որպէս յառափնութենէ արագ, զի առափնին<sup>h</sup> արագ ասի:

Իսկ պարտ է գիտել, եթէ կիրքն պարտելի<sup>i</sup> են, քանզի տեսակն ցանկալի<sup>j</sup> ասի, և յարածի յորակութենէն, իբր սպիտակացեալ<sup>k</sup> հանդերձ ասի սպիտակ<sup>l</sup>, և այժմու կրիլն<sup>m</sup> յարածի<sup>n</sup> ի կրեալ ստորոգութիւն, որպէս թէ ոչ էր սպիտակացեալ, բայց այժմ սպիտակացաւ<sup>o</sup>:

<sup>a</sup> A սպիտացուցանէ

<sup>b</sup> P ջերմ

<sup>c</sup> Dial. 35.60 οὐ μόνον = Սիմ. Թարգմ. ոչ միայն

<sup>d</sup> P չ/ք

<sup>e</sup> Dial. 35.66-67 + T δὲ τῶν ἀψύχων σχῆμα οὐ καλεῖται μορφή

<sup>f</sup> Dial. 35.67 + ἥγουν ὀρθότης, հմմտ. Սիմ. Թարգմ. որ է արդարութիւն

<sup>g</sup> B քարան

<sup>h</sup> AP առափնութիւն

<sup>i</sup> Dial. 35.74 διττόν = Սիմ. Թարգմ. երկու ազգ

<sup>j</sup> տեսակն ցանկալի // Dial. 35.74 ἢ γὰρ ἐν τῷ ἥδῃ πεπονθέναι = Սիմ. Թարգմ. կամ նախ պատուհասելն

<sup>k</sup> B սպիտակեալ

<sup>l</sup> B սպիտակ ասի

<sup>m</sup> B այժմ կրելն

<sup>n</sup> AP յերածի

<sup>o</sup> Dial. 35.78-81 + Χρὴ γινώσκειν, ὡς οὐκ εἰσὶν αἱ ποιότητες σώματα ἀλλὰ ἀσώματα. Εἰ γὰρ ἦσαν σώματα, ὑπὸ τὴν οὐσίαν ἦσαν· καὶ πάντα δὲ τὰ συμβεβηκότα ἀσώματά εἰσι καὶ καθ' ἑαυτὰ ἀνύπαρκτα, εἰ μὴ ἐν τῇ οὐσίᾳ θεωρηθῶσι, հմմտ. Սիմ. Թարգմ. Եւ զայս գիտել պարտ է, եթէ ոչ միայն մարմնաւոր սեւեւ, և այլ անսեւեւ գոն որպիսութիւն: Չի եթէ սեւականն էին, ընդ գոյացութեամբ ստորոգելին: Վասն զի ամեն պատահականն անսեւեւ են և յինքեանս անէութեան են, եթէ ոչ ի գոյութիւն երևիին

Հարկ է իսկ գիտել, եթէ հոբեան որակութիւնն<sup>a</sup> ընդ հոբեամբ յարած-գին, զի մասունք նորա են, որ բաժանեն զնա եւ ի սահմանէ տեսակացն նորին առնուցուն. յորմէ ստորոգութիւնն<sup>b</sup> բոլորին, ընդ նովիմբ եւ մասանց նորին երեւցուցանեն: Զծանրն եւ զթեթեն, թէպէտ եւ կշռով տեսաւորի, որպէս ի վերայ կշռոց եւ յարածի ի քանակաց, կամ հոբեամբ. իբր ի տարերց, այսինքն՝ հրոյ եւ հողոյ, եւ վերագային<sup>c</sup> թանձր և նուրբ, այսինքն՝ նաւս, քանզի հոբին ի տարերց, գոյանայ եւ յեթեմէ, իբր ներկ<sup>d</sup> ի հանդերձի, եւ յարածգին ի կայուն ստորոգութեմէ, քանզի դրութիւնն են:

Երեւ եւ տեսակք են որակութեանն, այսինքն հետեւողութիւնն: ա. Նախ առաջին, ներհակութիւնք առ յընդունելութիւն, զի ջերմն<sup>e</sup> հակառակ է ցրտոյն, եւ սպիտակն՝ սեւին: բ. Երկրորդ, կակուղն եւ խոշորն<sup>f</sup>, վասն զի աստ ներհակութեան իցեն եւ կակոյն եւ խոշորին<sup>g</sup> գտանելոյ: Իսկ սեւան<sup>h</sup> է ստիպումն<sup>i</sup> եւ նուազ որոշումն: Մարթի իսկ ասել զտեսակն կակուղ<sup>j</sup> եւ զսպիտակն եւ զխոշորն<sup>k</sup> ցուրտ: Իսկ երրորդ հետեւութիւն եւ յատկութիւն որակի՝ նմանն եւ աննմանն: Հարկ է իսկ գիտել, եթէ տեսակն ոչ ունի ներհակ:

Եւ պարտ է իմանալ, եթէ<sup>l</sup> ամենայն մեկուսական յայտնական ասի, այլ եւ մեկուսիք իցեն, որք յայտնաբար ասացան, իբր կոյր եւ խոյ: Եւ դարձեալ ոչ եթէ ամենայն տեսակ յայտնագոյն անուանի, այլ եւ այլ ցուցանելով, իբր անտաժանելի տեսակացն ոչ ծածկաբար, այլ յայտնաբար<sup>m</sup> անուանեալ: Քանզի ստորադրութիւնն բնական ասի, իբր «բարի է», իսկ ուրանալն՝ վնիւ, եթէ «ոչ է բարի»: Զի յորժամ ասեմք «անարէն»<sup>n</sup>, զյառաջուրացութիւնն նշանակէ, իբր թէ ոչ:

<sup>a</sup> AP որակութիւն

<sup>b</sup> P ստորոգութիւն

<sup>c</sup> Dial. 35.87-88 + ὑπὸ τὴν οὐσίαν ὡς οὐσιώδεις διαφοραί, ὁμοίως καὶ = Սիմ. Թարգմ. առ գոյացութիւն, իբրև գոյական բաժանմունս, նոյնպէս և

<sup>d</sup> իբր ներկ // Dial. 35.90 ἐπεισάκτω, հմմտ. Սիմ. Թարգմ. կամ յարանունս իբրև զանգումն

<sup>e</sup> P ջերմ

<sup>f</sup> Dial. 35.94 τὸ μᾶλλον καὶ ἥττον = Սիմ. Թարգմ. լաւն և վատբարն

<sup>g</sup> Dial. 35.95 τὸ μᾶλλον καὶ τὸ ἥττον = Սիմ. Թարգմ. լաւն և վատբարն

<sup>h</sup> Dial. 35.95 μᾶλλον, հմմտ. Սիմ. Թարգմ. լատիւն

<sup>i</sup> B + սպիտակումն

<sup>j</sup> Dial. 35.96 μᾶλλον, հմմտ. Սիմ. Թարգմ. առաւել

<sup>k</sup> Dial. 35.97 ἥττον = Սիմ. Թարգմ. վատբար

<sup>l</sup> Dial. 35.100 + οὐ

<sup>m</sup> B յայտնապէս

<sup>n</sup> Dial. 35.106 + εἶ, τὸ α



Իսկ որ ասի՝ «այս ինչ սպիտակ հաւասար է այլոյ ինչ սպիտակի», ոչ ըստ որակութեանսն ասի հաւասար լինել, այլ ըստ քանակի, եւ գոյն ըստ յայտնութեանս այսմիկ իցէ, այն յայտնութեամբ, որպէս եւ ի քանակի զնոյնն եւ զաննմանն տեսանել ոչ ըստ քանակի, այլ ըստ որակութեան:

#### ԼԴ. Յաղագս առնելոյ և կրելոյ<sup>41</sup>:

Հարկ է գիտել, եթէ առնելն եւ կրելն, այսինքն՝ որակական գաւորութիւն եւ կրական ընդ որակութեամբ են: Իսկ առնելն եւ կրելն էութիւն իմն է ներգործականի եւ կրականի:

Առնելն այն է, որ յինքեան ունի զպատեալ ներգործութեանն, իսկ կրելն՝ որ յինքն և յայլս ունի զպատեալ կրիցն, որպէս հրաշագործողն եւ հրաշագործեալն: Քանզի հրաշագործողն յինքեան ունի զպատեալս ներգործութեանն, իսկ հրաշագործեալն՝ ի հրաշագործողէն զսկիզբն հրաշակերտութեանն եւ յինքեան զյատկութիւն կրիցն: Հրաշագործող աստ<sup>a</sup> զարհեստաւորն<sup>b</sup> ասեմք, իբր զծնող<sup>c</sup>. հրաշագործելով՝ զնիւթն, որ ենթակայ է արհեստաւորին<sup>d</sup>, որպէս փայտ, զի նա ինքն ենթակայ է արհեստաւորին:

Իսկ առնելոյն եւ կրելոյն կէսք պարզ ասին առնել, որպէս յորակութեան<sup>e</sup> արհեստից, իբր բով<sup>f</sup> պղնձագործի եւ որ այսպիսիք, որք եւ<sup>g</sup> յեա դադարելոյ զարարն<sup>h</sup> մնայ արարեալն<sup>i</sup>, զի շինողն յորժամ դադարէ ի շինելոյն, մնայ շինուածն: Իսկ որ ասի պրատկ<sup>j</sup>, յորում ոչ մնայ պրատկն<sup>k</sup>, յորժամ դադարէ որ պրատենն, զի յորժամ դադարէ փողահարն, ոչ մնայ, այլ կորնչի փողահարութիւնն: Իսկ որ ասի տեսանել, որպէս աստեղագիտել, երկրաչափել, իմանալ եւ որ այսպիսիք եւս, եւ զերեւելիս տեսակ անշնչոց, իբր հրոյ, փարի, փայտի եւ որ սոցին նման: Առաջինքն ի բանականսն<sup>l</sup>, իսկ յետինքն՝ յանշունչս եւ յանբանս, զի ոչ որպէս շնչատուն առնէ, այլ որպէս մարմին մատաւոր է մարմնոյ:

<sup>a</sup> B ասէ

<sup>b</sup> P զարվեստաւորն ուղղված զարհեստաւորն

<sup>c</sup> Dial. 36.10 τέκτονα = Սիմ. Թարգմ. զհիւսն

<sup>d</sup> A արհեստին

<sup>e</sup> AB որակութեան

<sup>f</sup> բովք // Dial. 36.13 τεκτονικῆς = Սիմ. Թարգմ. ի հիւսնութեան

<sup>g</sup> B և որք

<sup>h</sup> Dial. 36.14 τὸν ποιοῦντα, հմմտ. Սիմ. Թարգմ. արուեստաւորին

<sup>i</sup> B յարարեալն

<sup>j</sup> B պրատիկ

<sup>k</sup> AB պրատն

<sup>l</sup> A բնականսն

Եւ երկու ունի տեսակս. առաջին՝ որ ընդունի գներհակութիւն, քանզի ջերմն ներհակ է<sup>a</sup> ցրտոյն, երկրորդ՝ այլոց եւ խոշորի<sup>b</sup>, զի մարթի կակդոյն ջերմանալ եւ խոշորին ցրտանալ, նոյնպէս եւ ջերմանալ եւ ցրտանալ:

Արդ ամենայն ստորոգութեամբ տեսանելի է առնելն եւ կրելն. ա. յէութեան<sup>c</sup> իմն՝ ծնունդն եւ ծնանիլն, բ. իսկ ի քանակն՝ թուելն եւ համարելն, եւ գ. յառինչն՝ կրկնել եւ կրկնակիւն, դ. որակութեանն՝ սպիտակ եւ սպիտակացեալն, ե. ի կալն՝ նստելն եւ նստուցանելն, զ. ի<sup>d</sup> յունելն՝ ագանել եւ ագուցանել, իսկ է. յուրն՝ ի կալ եւ յունել, եւ ը. յերբն՝ յունել եւ ի կալ<sup>e</sup>:

### 16. Յաղագս կայոյ<sup>42</sup>:

Կալն է ունել դրութիւն զիարդն առ այլոյ, իբր մարմին որ<sup>f</sup> կայ մերձ առ այնպիսի դրութիւն կամ առ կոչումն, կամ նիստ, կամ կայան: Տեսակք իսկ կայոյն<sup>g</sup> երեք՝ կանկնեալ, նստեալ, բազմեալ: Զի ուղղորդ<sup>h</sup> կալն առնէ զկանգնելն, իսկ ըստ մասին ինչ կալն<sup>i</sup>, ըստ մասին կալն՝ առնէ զնստելն, իսկ ամբողջ կալն առնէ զբազմելն: Բայց ոչ յայտնէ զկալն եւ ոչ զկանգնեալն եւ ոչ զտեղին, այլ զնոյն դրութիւնն զկանգնելոյն ի տեղին:

Իսկ կալն՝ այլք ըստ բնութեան կան, որպէս տարերքն յիւրեանց տեղիսն, իբր երկիր, ջուր, անձրեւ<sup>j</sup> եւ որ այսպիսիք իսկ դրութեան եւ արհեստի<sup>k</sup>, որպէս անդրիանդաց, սիւն, եւ այսպիսիք: Ապա բաժանին ասացեալքս, զի կացելոցն կայունք, որպէս երկիր, իսկ շարժելոցն՝ իբրեւ երկնային մարմինք: Եւ որ<sup>l</sup> կայունք են, զի զաւրութիւնք կան, այսինքն՝ զաւրատրքն կան, իսկ ներգործութիւն՝ իբր թէ ուր կան:

### 19. Յաղագս որ առ ուրն<sup>m</sup> 43:

Ուրն տեղի նշանակէ, քանզի հարցանեմք. «ո՞ւր է այս անուն», ասեմք

<sup>a</sup> B ներհակի

<sup>b</sup> Dial. 36.24 τὸ μᾶλλον καὶ ἥττον = Սիմ. Թարգմ. գլխն և գլորին

<sup>c</sup> P յէութիւն

<sup>d</sup> AB չ/բ

<sup>e</sup> Dial. 36.32-33 + ἐν τῷ ἐνεστώτι καὶ παρεληλυθότι καὶ μέλλοντι χρόνῳ

<sup>f</sup> A չ/բ

<sup>g</sup> B + են

<sup>h</sup> A յուղղորդ

<sup>i</sup> AB կալ

<sup>j</sup> անձրեւ // Dial. 37.10 ἀήρ, πῦρ

<sup>k</sup> B արուեստի

<sup>l</sup> B որք

<sup>m</sup> B ուրի և երբի

թէ «ի տան, ի քաղաքի»։ այս տեղիք նշանակեն։ Իսկ տեսակն<sup>a</sup> ուր ստորոգութեան ըստ տարբերութեան տեղեացն<sup>b</sup> վեր, վայր, աջ, ահեակ, առաջի, յետոյ։

**ԼԵ. Յաղագս որ առ երբ<sup>c</sup> 44:**

Երբն ժամանակ նշանակէ<sup>d</sup>. հարցանեմք «ե՞րբ եղեւ այս», ասեմք. «հերու, հերվինամ<sup>e</sup>»։ այս ժամանակ նշանակէ։ Իսկ տեսակ երբին ստորոգութեան իցեն այսֆան, եւ որքան և<sup>f</sup> իցեն ժամանակին տարբերութիւնք եւ են երեքեան տոքա՝ ներկայ, անցեալ, ապառնի։

**ԼԸ. Յաղագս ունելոյ<sup>g</sup> 45:**

Ունելն է էութիւն ի վերայ գոյական։ Եւ յայտնէ զունելն եւ զունելին և վասն ոչ ունելոյն կամ ունելոյն<sup>h</sup> եւ ոչ լինել ինչ մասն<sup>i</sup> իրաց։ Եւ ի վերայ ունելն<sup>j</sup> իբր պատմութեան<sup>k</sup> եւ զէնք եւ որ այսպիսիք<sup>l</sup>։

Իսկ յաղագս ունելոյն եւ ունողին էութիւն նշանակէ, զի է ինչ որ էութիւն, եւ է ինչ որ պատահումն, իբրու արհեստից եւ արհեստ, ոչ եւս ընդ ունելեան վերածի։ Զի ունելն բազումք լինին ըստ տարբերութեան գոյից, քան զի<sup>m</sup> շնչատու է կամ անշունչ։ Իսկ շնչատուն ունել ասեմք, որպէս մանուկ, ձի եւ որ այսպիսիք<sup>n</sup>։ Ասի եւ ունելն եւ ըստ բազմաց այլոց նշանակելոց համանուն գոլ<sup>o</sup>, զյետինն ասեմք։

**ԼԹ. Յաղագս ներհակի<sup>46</sup>:**

Ամենայն ներհակ որպէս իր հակառակ կայ, իբր բան։ Եւ որպէս բանի բան, որ առնէ ստորասութիւն եւ բացասութիւն։ Արդ ստորասութիւն է իր

<sup>a</sup> AB + ով (B ջնշված է)

<sup>b</sup> A տեղեաց B + այսինքն

<sup>c</sup> B երբի

<sup>d</sup> AB ասի P տողի վերևում ուղղված ասի

<sup>e</sup> P հերզինամ

<sup>f</sup> A որչափ և P և որչափ

<sup>g</sup> B գոյին

<sup>h</sup> Dial. 40.2 չիք վասն ոչ ունելոյն կամ ունելոյն

<sup>i</sup> B մասն ինչ

<sup>j</sup> B ունելոյն

<sup>k</sup> A պատմութեանք

<sup>l</sup> Dial. 40.4 + περιέχεται δὲ δακτύλιος καὶ εἴ τι ἕτερον τοιοῦτον σμικρόν = Սիմ. Թարգմ. Իսկ պարագրի մատանի կնիք և այլ ինչ որ այդպիսիք են փոքունք

<sup>m</sup> B վասն զի

<sup>n</sup> Dial. 40.9-10 + ἄψυχον δὲ ὡς δακτύλιον, ὑπόδημα καὶ τὰ τοιαῦτα, Սիմ. նույնպէս շունի

<sup>o</sup> Dial. 40.11 περὶ ὧν = Սիմ. Թարգմ. յաղագս որոյ

իրի<sup>a</sup>, որզան «բարոմ է»: Բացասություն իսկ է ասել<sup>b</sup> իր իրի<sup>c</sup> գոլ, իբր «ոչ է բարոմ»: Ասի եւ երկուս բացասություն<sup>d</sup>: Որպէս իր ներհակ կայ<sup>e</sup> կամ որպէս անդրադարձեալ ասին, եւ առնէ զառինչ, որ<sup>f</sup> եւ ժողովին ի միմեանս, եւ շարաբառնին, եւ<sup>g</sup> եթէ ոչ առ անդրադարձեալն ոչ ունին տենչումն: Եւ այս իբրու թէ ոչ փոխարկի ի միմեանս եւ շարաբառնին ոչ անդրադարձեալն<sup>h</sup> ոչ ունին տենչումն: Եւ այսուսիկ<sup>i</sup> թէպէտ եւ<sup>j</sup> ոչ փոխարկի<sup>k</sup> ի միմեանս, բայց սակայն երկոքեանն բնականֆ են եւ առնէ զհակառակն, որպէս ջերմ եւ ցուրտ, զի միմն փոխարկի ի միսն, իսկ միմն<sup>l</sup> ոչ փոխարկի: Զի նոցա կէսն բնական է, եւ կէսն արտաբոյ բնութեան, եւ առնէ զորոշումն եւ են ներհակայն<sup>m</sup>, որպէս լուսատւ եւ կոյր: Քանզի միմն<sup>n</sup> է լուսատւ, իբր յունելոյն, իսկ որոշումն ի յարտաբսելոյն<sup>o</sup>, այսինքն ի տեսչութենէ կուրություն:

Իսկ ներհակայիցն կէսֆ իցեն առանց միջոյ եւ կէսֆ միջաւորֆ: Արդ առանց միջոյ են, որ հարկաւորագոյն է<sup>p</sup> քան զընկերն, այսինքն՝ միմն<sup>q</sup> գոլով ենթակայից նոցունց, որոց ստորագունին, իբր հիւանդություն եւ առողջություն ի մարմնի<sup>r</sup>, որ կամ հիւանդ է կամ առողջ: Հիւանդություն ասացաւ<sup>s</sup> զամենայն զառանց յեղանակի բնութեանն: Միջաւորֆ են, որ ոչ հարկ է զմիսն գոլ ընդ ենթակային, այլ ի նոցանէ ստորագունին, իբր սպիտակն եւ սեւան: Ներհակայֆ են, եւ ոչ ամենեւին հարկ է նոցա գոլ մարմնոյ. զի ոչ հարկ է ամենայն մարմնոյ սպիտակ լինել կամ սեւաւ, քանզի իցեն մարմինֆ

<sup>a</sup> իր իրի // Dial. 41.4 τὸ εἶπεῖν, τί τινα ὑπάρχει, *հմմտ. Սիմ. Թարգմ.* է ինչ ումեք

<sup>b</sup> B *չիբ* իր իրի, որզան «բարոմ է»: Բացասություն իսկ է ասել

<sup>c</sup> Dial. 41.5 + οὐχ = *Սիմ. Թարգմ.* ոչ

<sup>d</sup> Dial. 41.5 ἀπόφανσις, *հմմտ. Սիմ. Թարգմ.* հակառակախաւություն

<sup>e</sup> P ներհակա

<sup>f</sup> B որֆ

<sup>g</sup> B *չիբ*

<sup>h</sup> AB + առ անդրադարձեալն և

<sup>i</sup> P այսոցիկ

<sup>j</sup> Dial. 41.8 *չիբ* ոչ փոխարկի ի միմեանս եւ շարաբառնին ոչ անդրադարձեալն ոչ ունին տենչումն: Եւ այսորիկ թէպէտ եւ

<sup>k</sup> B փոխարկին

<sup>l</sup> AB մին... մին

<sup>m</sup> B ներհակֆ

<sup>n</sup> AB մին | Dial. 41.13 ἕξις

<sup>o</sup> Dial. 41.13 τῆς ἕξεως = *Սիմ. Թարգմ.* ունակութեանն

<sup>p</sup> B որֆ հարկաւորագոյնֆ են

<sup>q</sup> AB մին

<sup>r</sup> Dial. 41.18 + ζῶου ὑποκειμένω, καὶ ἀνάγκη πάντως ἐν τῷ σώματι = *Սիմ. Թարգմ.* ի յանձն կենդանոյն, <և ենթակայ նոցա է մարմին կենդանոյն>: Եւ հարկ է ստուգիւ յանձին

<sup>s</sup> P ասաց

գոշֆ եւ խարտեաշֆ<sup>a</sup>: Զիարդ ոչ իցէ մինն ներհակայիցն որոշեալ բնութեամբ, որպէս ջերմն հոյ եւ ցուրտ ձեան: Արդ կէսֆն միջատրֆ, եւ կէսֆն ունին անուանֆ, իբրու ի մէջ սպիտակի եւ սեւի եւ սեւին<sup>b</sup> ասի գոշ, եւ այլֆն ոչ ունին անուանֆ, զի ի մէջ արդարոյ եւ անիրաւի ոչ գոյ անուն, այլ բացասութեամբ երկախանչիւրֆն ի միջոյ ճանաչին, որգան ոչ իրաւ, եւ ոչ անիրաւ:

Իսկ հետեւողֆ են ներհակայից տեսակֆ շորֆս<sup>c</sup>: Նախ զի մինն<sup>d</sup> բարի ի հարկէ շարն հակառակ, շարին՝ երբեմն բարի, երբեմն<sup>e</sup> շար. մինն<sup>f</sup> ողջախոնութիւն ներհակ կամ անպատահար, իսկ առանց պատահարի՝ երբեմն ողջախոնութիւն, իսկ երբեմն՝ ֆարանմանն: Քարանմանն այս ինչ է, որ ոչ շարժելի եւ ոչ յաննելի կիրֆն: Արդ առանց պատահարի պակասումն է ողջախոնութեան, իսկ ֆարացեալն՝ վերարկու: Եւ ներհակն վերարկու է պակասման: Երկրորդ, եթէ անհնարին է<sup>g</sup> ներհակային ի վերայ անհատիցն լինել ըստ նմին, զի ոչ մարթի<sup>h</sup> Սոկրատայ առողջանալ եւ հիւանդանալ<sup>i</sup>:

<sup>a</sup> B գորշֆ եւ խարտեշֆ

<sup>b</sup> Dial. 41.26 չիք եւ սեւին

<sup>c</sup> P շորս

<sup>d</sup> A մին

<sup>e</sup> Dial. 41.32 + ἄλλο = Սիմ. Թարգմ. այլ

<sup>f</sup> A մին

<sup>g</sup> Dial. 41.36 + ἄμα, հմմտ. Սիմ. Թարգմ. ի մի և նոյն ժամն միանգամայն

<sup>h</sup> Dial. 41.37 + ἄμα, հմմտ. Սիմ. Թարգմ. յանկարծակի միանգամ

<sup>i</sup> P + եւ այսֆ ել այլուստ. Ի գլուխ լուսատրոսիւն, իսելֆ ի յղի, ի պարանոցի հանկիստ, ի բագուկս՝ գաւրութիւն, ի ձեռս արարչութիւն: Հպարտութիւն ի բերան: Ծաղր՝ ի թաղանթի, ցանգութիւն՝ ի լեղտջ, սրտմտ[ութիւն...], գոյթ՝ ի փայծղան: Ագահութիւն՝ ի ստամոքս, ի ֆիթս՝ սէր: Հաննար՝ յերկամունս, ի սրտի՝ խորհուրդ:

## ՀՈՒՆԱՐԵՆԻՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Այս տարբերակում ԺԳ. «Յաղագս սահմանի», ԻԳ. «Շա յաղագս էութեան», ԻԵ. «Յաղագս կերպի», ԻԸ. «Յաղագս որ յանձնատրութեան» գլուխներն ընդգրկված չեն. այսպիսով մնացել է 36 գլուխ՝ շհամարակալված: Քառակուսի փակագծերում բերել ենք նախնական բնագրի համապատասխան գլուխների համարները:

Համառոտված են նաև գլուխների բնագրերը՝ հանված են նախադասություններ և մեծ ու փոքր հատվածներ: Գլուխները համառոտված են տարբեր չափով. ԺԵ., ԺԶ., ԺԷ., ԺԸ. և ԻԶ.-ն ներկայացված են մեկական նախադասությամբ: Իսկ ԻԹ. արդեն իսկ խիստ համառոտ գլուխը ներկայացված է նույնությամբ, միայն վերնագիրը՝ «Յաղագս անանձնատրութեան», համառոտվել-դարձել է «Անանձն»:

Երբեմն առկա է նաև բուն թարգմանությունից իմաստային տարբերություն: Օրինակ՝ «Իսկ մարդ յամենայն, որ ըստ մասին մարդոյ է, բաժանի, ոյ՛ անհաս իցեն, թուին» (գլ. Բ.) նախադասությունը դարձել է «Իսկ մարդ յամենայն, որ ըստ մասին մարդոյ է, բաժանի, քանզի հասու իցեն, թուին», ուստի ստացվել է հակառակ իմաստ: Նույնը՝ «Ըստ այսմ արդեամբ անանջատական պատահմանց անհատ անհատի» (գլ. Ե.), իսկ ձևափոխված տարբերակում՝ «Ըստ այսմ և անջատական պատահումն անհատ անհատի» («անանջատական»-ը համառոտում դարձել է «անջատական»):

«Յաղագս բաժանմանց» ծավալուն գլխի (ԺԲ.) փոխարեն համառոտ տարբերակում կարդում ենք մեկ նախադասություն. «Բաժանմանց յեղանակ ուրն են, զոր ի «Մահմանաց գիրքն» ասէ Դավիթ. անդ տե՛ս»<sup>1</sup>:

Այս համառոտությունն արվել է նախնական բնագրում հատվածների մեխանիկական տեղափոխությունից հետո. այնտեղ ԻԱ. գլխի մեջտեղում՝ նախադասության կեսից ներմուծված է մի մեծ հատված (ԻԸ.՝ «Յաղագս որ յանձնատրութեան» գլխի կեսից մինչև ԼԲ.՝ «Յաղագս առընչի» գլխի կեսը): Ուստի գլուխների ճիշտ հերթականությունը վերականգնելուց հետո [ԻԱ.] գլուխը մնում է շատ կարճ ու թերի, իսկ [ԻԸ.] գլուխը սկսվում է թերի նախադասությամբ (այն ձեռագրերում շարունակում է [ԻԱ.] գլխի թերի նախադասությունը):

<sup>1</sup> Տե՛ս Դավիթ Անհաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, աշխատասիրութեամբ Ս. Ս. Արևշատյանի, գլ. ԺԸ, *Մատենագիրք հայոց*, Գ հատոր, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 189. «Շա պարտ է գիտել, եթէ ոմանք ուր յեղանակս ասեն զոյ բաժանման, եւ են այտոյնի: Որպէս ի սեռէ ի տեսակս, որպէս ի տեսակէ յանհատս, որպէս ի բոլորէ ի մասունս... Որպէս ի հոմանուն ձայն է ի զանազան նշանակեալս, որպէս յերթենէ ի պատահումն, որպէս ի պատահմանէ յերթին, որպէս ի պատահմանէ ի պատահումն, որպէս ի միոջէ եւ առ մի»:

ԲՆԱԳԻՐ

Բնագիրը կազմել ենք հետևյալ ձեռագրերի համեմատությամբ.

L – ՄՄ 3883 (ԺԶ դ.), թթ. 356ա-369ա<sup>1</sup>,

M – ՄՄ 2332 (ԺԷ դ.), թթ. 55բ-60ա,

N – ՄՄ 2333 (ԺԷ դ.), թթ. 56ա-61բ:

Բնագրի այս տարբերակն առկա է նաև հետևյալ ձեռագրում՝ ՄՄ 2334 (ԺԷ դ.), թթ. 95բ-101բ, որը չենք ներառել համեմատության մեջ:

Այս բոլոր ձեռագրերում ևս մի քանի գրույթ է կցված վերջին՝ «Յաղագս ներհակի» գլխից հետո, ասես բնագրի մաս կազմելով՝ «Վասն արոց», «Յաղագս բնութեան»՝ հարց ու պատասխանի ձևով, «Յաղագս բնութեան յայլմէ», «Յաղագս անձին», «Դարձեալ յայլմէ յաղագս բնութեան»: Դրանց անմիջապես հետևում է «Դարձեալ անյաղթ փիլիսոփայի Յաղագս էակաց» բնագիրը<sup>2</sup>:

Տողատակերում առկա պայմանական նշանների բացատրությունը տե՛ս նախորդ բնագրից առաջ: Բուն թարգմանության ամբողջական տարբերակի հետ համեմատությունը ներմուծվում է «*Թարգմ.*» նշումով:

<sup>1</sup> Հավանաբար սա Դադյանի 84 ձեռագիրն է, տե՛ս Յ. Թօփնեան, *Յուզակ ձեռագրաց ինչիկ վարդապետի Դադեան ժողոված 1878-1898*, Վաղարշապատ, 1898, էջ 106բ, ձ. 84, 344ա-370բ:

<sup>2</sup> Տե՛ս *Մատենագիրք հայոց*, Ի հատուր, Յաւերած, էջ 708-723՝ «Դարձեալ անյաղթ փիլիսոփայի էակաց գիրք»:

**[Ա.] Յաղագս, էութեան և պատահման, թարգմանեալ Բագարատ Մամիկոնեան յունարէն գրոց:**

Գոյ հասարակ անուն ամենայն գոյից. և սա հատանի յէութիւն և<sup>1</sup> պատահումն: Եւ էութիւն իր իմն է ինքնագոյ, ոչ մաղթել յայլմէ, զի էութիւն ենթակայ է, որպէս նիւթ իրաց: Իսկ պատահումն յէութեան տեսանի, որպէս մարմին և գոյն<sup>2</sup>, զի ոչ է մարմին գունոյ, այլ գոյն մարմնոյ: Սոյնպէս ոգի և միտք, և ոչ ասի ոգի մտաց, այլ միտք ոգոյ:

է արդեաւ ոգի էութիւն, իսկ միտք պատահումն, զի պակասել մտացն, այսինքն՝ հանճարոյ, է ոգի, և ի պակասել ոգոյ միտք ոչ է: Եւ յամենայն իրի տես, որ ինքեամբ գոյանալ ոչ կարէ պատահումն:

**[Բ.] Վասն սեռի, տեսակի, տեսականի և միմեանց:**

Սեռ եռակի ասի. ըստ միոյ աղագի՝ ի ծննդենէ, որպէս իսրայէլացիք յԻսրայէլէ, և ըստ այլ աղագի, որպէս յԵրուսաղեմէ երուսաղէմացիք և ի պաղեստինացիք: Իսկ երեք աղագի սեռ ասի, որ բաժանի ի տեսակս, վասն որոյ առ իմաստասիրիս բանս է, որ սահմանեալ ասին. «որ ըստ բազմաց և տարբերութեան տեսակի յառընչիցն է ստորոգումնել»:

Իսկ տեսակ երկու նշանակութիւնս ունի՝ տեսակ, կերպ, կերպ, որզան անդրիանոսաց: Տեսակութիւն ի սեռէ հատանի, որպէս վասն հաւր ասել և որդոյ. յայտնեն զիրար: Նոյնպէս տեսակ, որ ոչ ունի տեսակ, ոչ է սեռ, և որ ոչ ունի սեռ, ոչ է տեսակ, որպէս Աղամ ոչ որդի, բայց հայր, և Աբել հայր ոչ ասի հայր, այլ որդի:

Եւ սեռական սեռ է, որ ոչ ունի սեռ ի վերոյ նորա քան զինքն: Եւ տեսակ միայն է, որ ոչ ունի ի ներքոյ իւր այլ տեսակ: Չի է, որ ասի սեռ և տեսակ: Տեսակ սեռի, որ նախ քան զինքն է, սեռ, որ ի նմանէ հատանի:

Սեռականաց սեռ էութիւնն է, թէպէտ և հատանի ի գոյէն էութիւն և պատահումն, այլ ոչ է գոյն սեռ նոցա: Թէ և զանուն գոյին ընդունի, այլ ոչ զսահման, զի գոյ է, որ հատանի էութիւն և ի պատահումն: Եւ էութիւն՝ զի<sup>3</sup> գոյ է և ոչ յայլմէ առեալ, և պատահումն՝ որ ոչ ըստ ինքեան կարող է լինել: Ունի էութիւն զկէս սահմանի գոյին և պատահումն՝ զմիս կէսն:

էութիւն հատանի ի մարմին և յանմարմին, որք են տեսակք էութեան:

<sup>1</sup> N + ի

<sup>2</sup> N գոյնն

<sup>3</sup> N ի



Մարմին բաժանի ի շնչաուր և յանշունչ, զի մարմինն տեսակ է էութեան և սեռ է շնչաուրի և անշնչի: Շնչաուրն բաժանի ի զգալի և յանզգալի. զգալին է, որ կեանս և զգայարանս ունի, իսկ անզգալի՝ տունկն, որ ոչ զգայարան: Բայց շնչաուր ասի, զի ունի սննդական և աճողական և սերմնական զօրութիւն: Եւ կենդանին բաժանի ի բանական և յանբանն, բանականն՝ ի մահկանացուն և յանմահն, և մահկանացուն՝ ի մարդ և ի Պետրոս և ի Պաւղոս՝ յանհատս, այսինքն՝ անձնատրութիւնս, և որ ոչ տեսակ: Զի տեսակին ոչ ունին զսահման միմեանց. մարմինն ոչ ունի զսահման անմահի, կամ մարդ՝ զձիոյ: Բայց Պետրոս և Յովհաննէս և Պաւղոս ունին զսահման միմեանց, զի մարդիկ են և ոչ զանուն:

Այլև<sup>1</sup> Պետրոս բաժանի ի հոգի և ի մարմին և ոչ զհոգոյն փոխաարէ զսահման և զանուն, և ոչ մարմնոյ:

Եւ ամենայն հատած ի սեռէ տեսակ լինի, մինչև յերկուս կամ յերիս և չորիս հասեալ, զի անհնարին է բաժանել զսեռ ի հինգ տեսակէ և ի վեր: Իսկ մարդ յամենայն որ ըստ մասին մարդոյ է, բաժանի, քանզի հասու իցեն թուին: Վասն այսորիկ ոմանք ոչ ասին բաժանումն զ՛ստ ի տեսակէ հատումն, այլ պարաթուին: Ուստի յայտ է, թէ ոչ են Պետրոս և Պաւղոս և Յովհաննէս տեսակ, այլ անհատ, և ոչ մարդն իցէ սեռ Պետրոսի, այլ տեսակ: Վասն այսորիկ իւրական տեսակ է մարդոյ:

**[Գ.] Յաղագս անհատի:**

Անհատն եռակի ասի. անհատ է, որ ոչ բաժանի և ոչ հատանի, որպէս զիծ և կէտ և կամ մի, որք առանց քանակի ասին: Անհատ ասի և դժուարահատն, որ հազիւ հատանի, որպէս անդամանդ քար, և որ սոցին նման: Անհատ ասի և տեսակ, որպէս մարդ, որ հատուի ի Պետրոս և ի Պաւղոս, որ հատանի և ոչ կէայ յետ հատանելոյն յառաջին տեսակէն, իբր Պետրոս հատանի յոգի և ի մարմին, և ոչ ոգի է մարդ կատարեալ, և ոչ մարմին: Վասն այսորիկ առ իմաստասէրս է<sup>2</sup> բանս:

**[Դ.] Վասն տարբերութեան:**

Տարբերութիւն երկակի ասի՝ հասարակ և յատուկ: Եւ յատուկն՝ քանզի անհնարին է երկուց ոմանց, որ ոչ տարբերին ի միմեանց: Ըստ այլոց՝ տե-

<sup>1</sup> ML չիք

<sup>2</sup> L իմաստասիրէ

ասկ ի տեսակս, և այլոց՝ անձնատրոփին համատեսակի և համանձնատրոփին և այլ անձնատրոփին<sup>1</sup> յինքենէ<sup>2</sup>: Ձի տարբեր է տեսակ մարդոյ և տեսակ ձիոյ ըստ բանականի և անբանի: Եւ այս է էական տարբերութիւն: Նոյնպէս և ամենայն, յորս տարբերի տեսակի տեսակս, բնական և էական և հաստատական և յատկական տարբերութիւն և որակութիւն ասի, որ կոչի առ իմաստասիրաց, իսկ յատկագոյն՝ որ բնութեանցն կայանան: Դարձեալ տարբերի մարդ ի մարդոյ, ձի ի ձիոյ, շուն ի շանէ՝ երկայն և կարն, ծեր և մանուկ, հանճարեղ և անմիտ: Այս ամենայն ըստ էութեան տարբերութիւնն և որակութիւնն ասին, որ է պատահումն:

### [Ե.] Յաղագս պատահման:

Պատահումն է որ լինի և բացալինի առանց ենթակային ապականութեան: Դարձեալ որ մարդ ի<sup>3</sup> լինել և ոչ լինել՝ մարդ սպիտակ լինել և թուխ, կարն և երկայն և ուշիմ և յաւէտ:

Իսկ այս պատահումս բաժանի յերկուս՝ ի հասարակ տարբերութիւն և յատուկ. հասարակ<sup>4</sup> որ առանց պատահման, իբր «նստի ոք» և «միւսն յառնէ»: Մարթի յառնելոյն<sup>5</sup> նստելոյն և նստել և տար, որ յոտն կալ: Տարբերութիւն ըստ պատահման, զի բաժանէ զիւրն ի նստելն և յառնելն, ի մանկանալն և ի ծերանալն, ի հիւանդանալն և յողջանալն և որ սոցին նման է: Իսկ յատուկ տարբերութիւն անանջատական պատահումն, որզան՝ ոմն նշանատր. անհնարին ի բաց կալոյ, նոյնպէս խարտեաշն ի խարտեշութենէ: Ըստ այսմ և անջատական պատահումն անհատ անհատի, այսինքն՝ անձնատրոփին անձնատրոփեան տարբերի: Ինքն իսկ յինքեան՝ ոչ երբէք. լինի նշանատր: Եւ ոչ լինել և բացալինել խարտեշութեան ոչ մնայ մարդ:

### [Զ.] Յաղագս յատկի:

Յատուկն երկակի ասի. առաջին՝ որ միոյ տեսակի է, որպէս երկրաչափութիւն մարդոյ է: Երկրորդ, որ ոչ է միոյ, որպէս երկոտանութիւն, որ մարդոյ է և թռչնոց:

Երրորդ, որ ամենայնի է և միոյ և հասարակաց, որպէս ակտրել մարդոյ:

<sup>1</sup> L չիբ և այլ անձնատրոփին

<sup>2</sup> M չիբ

<sup>3</sup> Հմմտ. *Թարգմ.* մարթի = Dial. 5.3 *ἐνδέχεται*

<sup>4</sup> L չիբ տարբերութիւն և յատուկ. հասարակ

<sup>5</sup> L յառնելոյ

Չորրորդ, որ լինի երիցն առաջնոցն, այսինքն է՝ ամենեցուն և միոյն, որ-  
պէս ծիծաղականութիւն մարդոյ և խրխնջականութիւն ձիոյ:

«Յատուկ է, որ ամենայնի է և միայնոյ ուրոյն և հանապազորդ է»: Իսկ  
այս եռակի բաժանի՝ ի գործարանութենէ, իբր լայնեղունկն մարդոյ, և ի  
ներգործութենէ, որպէս ի վեր բերումն հրոյ, և ի զաւրութենէ, որպէս ասեմք՝  
հրոյ է ջերմական զաւրութիւն առաւել քան այլ ջերմոց: Իսկ յատուկն՝ ի վե-  
րայ էութեան:

### [Է.] Ստորոգի:

Ամենայն ստորոգութիւն ի վերայ բազմաց ասի կամ ի միոյ, ի վերայ  
նուազից իսկ՝ ոչ երբէք: Եւ ի վերայ յոլովից՝ յորժամ ըստ ամենայնի ստորո-  
գունին զ՛առ ի մասնականացն: Արդ ըստ ամենայնի են, որ ի վերոյ, իսկ  
մասնական՝ որ ի ներոյ: Եւ բոլորովիմբ ամենայն<sup>1</sup> իցէ գոյն, որով և ամե-  
նայն ստորոգունի, զի և էութիւն գոյ ասի, և պատահումն գոյ ասի: Եւ ոչ<sup>2</sup>  
կարեմ ասել զգոյն էութիւն, զի ոչ միայն գոյ է, այլ և պատահումն: Նոյնպէս  
և սեռական ստորոգունին զտեսակացն, որպէս բոլորովիմբ, տեսակք ոչ  
ստորոգին ի սեռս, զի տեսակք մասնականք են սեռիցն: Ստորոգունին  
յաւէտ յէութիւն կենդանոյ, և կենդանին՝ մարդոյ, զի կենդանին էութիւն է, և  
մարդն կենդանի է: Եւ ոչ դարձուցանէ իսկ, զի ամենայն կենդանի մարդ ոչ է,  
այլ և ձի և շուն:

Նոյնպէս և ոչ ամենայն էութիւն կենդանի, այլ և քար կամ փայտ: Եւ  
տեսակ ստորոգունի, որ ի յիւրոյ առաւելու անհատ: Իսկ անհատն ոչ ստո-  
րոգունի ի տեսակս, զի մասն է տեսակին: Նաև Պետրոս և Պաղոս՝ մարդիկ,  
և ոչ ամենայն մարդ՝ Պետրոս և Պաղոս:

Բայց և տեսակք ստորոգունի ի տեսակաց իւրեանց, զի ամենայն մարդ  
ծիծաղական, և ամենայն ծիծաղական մարդ: Թէ և ծիծաղիլ ասի<sup>3</sup> կապիկ,  
այլ ոչ ի սրտէ, այլ ձևով, զի նմանական կենդանի է: Որպէս ումանց սեռից  
ըստ տեսակաց ստորոգունին և ըստ տարբերութեանցն՝ ըստ տեսակացն, և  
որք ըստ տեսակացն՝ ըստ անհատիցն ի վերայ բազմաց ասի: Հաւասար  
անդրադարձին և անդա ստորոգութիւնք:

<sup>1</sup> L ամեն

<sup>2</sup> L չ/ք

<sup>3</sup> LN ասէ

**[Ը.] Յաղագս փաղանուան և հումանուան ստորոգութեան:**

Փաղանունն ստորոգութիւն է, յորժամ զանուն և զսահման իւրոյ անուանն ընդունի, իբր կենդանին ստորոգունի<sup>1</sup> մարդոյ: Եւ ընդունի մարդ զսահման կենդանոյն, զի կենդանին<sup>2</sup> է էութիւն շնչաւոր, զգալի: Եւ մարդ ընդունի զայս սահման:

Իսկ հումանուն ստորոգութիւն է, որ զանունն ընդունի, իսկ զսահմանն՝ ոչ բնաւ, իբր պատկեր մարդոյ:

**[Թ.] Թէ զինչէ ստորոգութիւն և զինչ որակութիւն ստորոգութեան:**

Ստորոգութիւն՝ յորժամ հարցանեմք. «զի՞նչ է մարդ», և ասեմք «կենդանի», իսկ ըստ որակութեան՝ ասելն «զի՞նչ կենդանի է», ասեմք «բանաւոր մանկանացոյ»: Որպէս թէ սեռ և տեսակ յինչն ստորոգունի, իսկ տարբերութիւն՝ պատահումն, և յատուկն որակութիւն է՝ զի՞նչ ստորոգունի:

Անձնատրութիւնն ոչ եթէ զինչն ցուցանէ և ոչ որակութիւն ինչ, բայց զիւր միայն, ի հարցանելն ասեմք. «ո՞վ է սա», ասեմք «Պետրոս»: Ասեմք<sup>3</sup> «մարդ է», թէ ասեն. «զի՞նչ է Պետրոս»: Դարձեալ հարց. «ո՞րպէս մարդ», «երկայն, կարն»:

Իսկ պարտ է զիտել, թէ որ ըստ բնութեան տարբերին, այլ և այլ ասեն, զի ասեմք՝ այլ է մարդ, և այլ է ձի: Իսկ որ ըստ թոյոյ տարբերին, այլ և այլ ոչ ասին, զի Պաւղոս և Պետրոս բնութեամբ մի են, թէ ոչ անուամբ:

Պարտ է զիտել, թէ էութիւն այլ կոչի, նոյնպէս և էական տարբերութիւնմ այլ են: Զի յաղագս բնութեան է տեսանելի և նովաւ շարայաւորն ըստ տեսակի, իսկ պատահումն՝ յաղագս անհատութեանն: Զի կայունմ են անձնատրութեան պատահմունքն: Այդ այլ է մարդ, և այլ է ձի: Ամենայն տարբերութիւն էական է և բ. էութեամբ՝ այլք որակութիւնմ, քանզի այլ որակութիւն նշանակէ զայլսն: Եւ եթէ զինչ նշանակէ, իսկ անձնատրութիւն՝ որ զայս ինչ և զայս ինչ: Իսկ ամենայն տարբերութիւն որակութիւն է:

<sup>1</sup> L + ի

<sup>2</sup> MN կենդանի

<sup>3</sup> L ասեմ

**[Ժ.] Յաղագս անձնատրութան և որ յանձնատրութան և անձնատրութան<sup>1</sup>:**

Անձնատրութան անուն բ. իր նշանակէ՝ զպարզն, իսկ որ ըստ իւրում անձնատրութան՝ զանհատութիւն նշանակէ և զբաժանական դէմ: Եւ որ յանձնատրութենէ, երկու նշանակէ, զի նշանակէ զպարզն, որպէս նշանակի ոչ միայն պարզ էութիւն, այլ զպատահումն ընդ անձնատրութան կոչիմք: Նշանակէ իսկ և զոր ընդ իւրում անձնատրութանն, այսինքն՝ զանհատն: Եւ որ<sup>2</sup> առանց անձնատրութան, երկակի ասի, քանզի ասի առանց անձնատրութան և ոչն ոչ բնաւ է: Ասի դարձեալ անձնատրութեամբ պատահումն, քանզի պատահումն ոչ ունի իւրական իսկութիւն, այլ յէութեան գոյանայ:

**[ԺԱ.] Յաղագս էութեան և բնութեան և կերպի, անհատի, դիմի և անձնատրութեան:**

Առաջին իմաստաստէրքն էութիւն ասացին ի պարզ լինելն, իսկ բնութիւն յատկագոյն յէական տարբերութեանց, յորոց պարզագոյն իցեն և<sup>3</sup> ի նոյն գոլ ունիցին՝ կամ զբանականն կամ զանբանն, զանփոխարկելի և զանփոխադրեալ սկիզբն և պատճառ և զօրութիւն, զոր առ ի հրաշագործողէն եղաւ յիւրաքանչիւս առ ի շարժումն<sup>4</sup>

հրեշտակաց առ ի յիմանալ և առանց յայտնութեան բանի տառ միմեանց զիմացութիւն,

իսկ մարդոյ՝ առ ի յիմանալ և բանատրել և ի ձեռն յայտնական բանի տառ միմեանց զստից իմացութիւնս,

իսկ մարդանոյ առնոց՝ զկենդանականն և զգալին,

տնկոց՝ զսննդականն,

բարանց՝ զշերմանալն և զցրտանալն:

Զայս կոչեցին բնութիւն, այսինքն՝ յատկագոյն ինչ, որպէս հրեշտակ, մարդ, այլ որ նոյնն կան և մնան միշտ: Զկիսոց մասնականագոյն կոչեաց անձնատրութիւն, իսկ զայլոց բոլորովիմբ և առաւելագոյն կոչեցին անձնատրութիւնն բնութիւն, իսկ պարզ գոլն՝ էութիւն:

<sup>1</sup> Հմմտ. թարգմ. Յաղագս անձնատրութեան և որ յանձնատրութեան // Dial. 10.t1-2 Περί υποστάσεως και ένυποστάτου και άνυποστάτου

<sup>2</sup> L չիբ

<sup>3</sup> L չիբ

<sup>4</sup> L շարժումն

Իսկ սուրբ հարֆն<sup>1</sup> թողեալ զնոցա բարբառանան՝ զյատկական տեսակս էութիւն և բնութիւն և կերպարան կոչեցին, որզան հրեշտակ, մարդ, ձի, շուն: Զի էութիւն յէնն ասի, և բնութիւն՝ առ ի բուն նիւթոյ նոցին, և կերպն և տեսակն: Իսկ մասնական կոչեցին անհատ և դէմ և անձնատրութիւն, որպէս Պետրոս, Պաղոս: Իսկ անձնատրութեանն պէտք է ունելութիւն ընդ պատահմանն և ըստ նմին գոյանալ և զգայարան, այսինքն՝ ներգործութիւն տեսանել: Իսկ անհնար է երկու անձնատրութեանց ոչ տարբերիլ ի պատահմունս և ի թիս: Եւ պարտ է գիտել, թէ նկարագրական տեսակս ի պատահմանց է, որ նկարագրէ զանձնատրութիւն:

**[ԺԲ.] Յաղագս բաժանմանց:**

Բաժանմանց յեղանակ ուրն են, զոր ի «Սահմանաց գիրքն» ասէ Դավթ. անդ տե՛ս:

**[ԺԳ.] Յաղագս բնութեան կանխագունի:**

Բնութիւն կանխագոյն է, որ արտաբերի և ընդ նմին հատանի և ընդ նմին բաժանի, իբր անասուն բնութիւն կանխագոյն է մարդոյ: Ոչ լինել անասնոց՝ և ոչ մարդ կարէ գոյ: Եւ առանց մարդոյ կարէ նոցա գոյ: Դարձեալ գոյ մարդոյ լինին կենդանիք, զի կենդանի է մարդ: Եւ ոչ Պետրոս յառաջ<sup>2</sup> է բնութեամբ, քան զՊաղոս, և ոչ գոյ Պետրոս կարէ գոյ Պաղոս: Եւ ոչ դեղ յառաջագոյն քան զդեղ, և զիրք բժշկական՝ բժշկական գրոց:

**[ԺԴ.] Յաղագս հոմանունանց:**

Հոմանունն են, որ անուանց հաղորդին, և սահմանաւ տարբերին, իբր շուն երկնային և զծովային և ցամաքային: Այլ երկնայինն և ծովայինն անուամբ միայն կցորդին:

**[ԺԵ.] Յաղագս փաղանունանց:**

Փաղանուն է որ հասարակաց հաղորդին կամ ստորագրութեան իւրում անուանն, իբր կենդանի յայտնէ զմարդ, զձի և զշուն:

**[ԺԶ.] Յաղագս բազմանունանց:**

Բազմանունն են, որք սահմանաց կցորդին և անուամբ տարբերին, իբր երկաթ՝ սուսեր, թուր, դանակ, նիզակ և այլն:

<sup>1</sup> M հայրֆն

<sup>2</sup> L յառաջն

**[ԺԸ.] Յաղագս այլևայլ անուանց:**

Որ ենթակայ ունին մի և ասին այլևայլ անուամբ, որպէս մարմին և գոյն և որպէս ել և էջ, որպէս մի ունի ենթակայ զսանդուխտն:

**[ԺԹ.] Յաղագս գերադրականաց:**

Որ ի մէջ հոմանունանց և փաղանունանցն հաղորդին և տարբերին, որպէս ի ֆերականութենէ ֆերական, որ տարբերի ըստ բառի անուանն: Եւ դարձեալ սահմանին հաղորդին և տարբերին, զի «ֆերականութիւնն» գիտէ, և «ֆերականն»՝ էութիւն, յորս գիտութիւն:

Եւ պարտ է գիտել, թէ «ֆերականութիւն» և «երաժշտականութիւն» ոչ է գերադրական, բայց<sup>1</sup> «երաժիշտն» և «ֆերականն», որք գերադրին յարուեստէն և լինի, որ ունի երկու գերադրութիւնս՝ «արդարութիւն» և «ֆերականութիւն»:

**[Ի.] Յաղագս տասն սեռականից սեռականութեան:**

Պարզ ասացեալն առանց շարամանութեան

[ա.] էութիւն է, որպէս մարդ, ձի,

[բ.] ֆանակն՝ երկկանգուն,

[գ.] առինչն՝ որպէս հայր, որդի,

[դ.] որակն՝ սպիտակ, սեան,

[ե.] ուրն՝ իբր «ի տան», «յագարակի»,

[զ.] երբն՝ «այսաւ»,

[է.] տառն՝ որպէս «կանգնել», «նստել»,

[ը.] ունելն՝ «ագանել»,

[թ.] առնելն՝ «այրել», «հատանել»,

[ժ.] կրիլ՝ «հատանիլ»:

Այսք ժ. ստորոգութիւնմ ասին, որպէս ի ասելն վասն ումեք, զի ստորոգելն ասել է:

Եւ պարտ է գիտել, թէ այս տասանց իւրաքանչիւր սեռականի սեռ է:

**[ԻԱ.] Յաղագս համասեռից և այլասեռից, համատեսակաց և այլատեսակաց և թուոց<sup>2</sup> և տարբերութեանց:**

Համասեռոք են, որք ըստ միոյ ստորոգութեանց հնազանդին, իսկ այլասեռոք, որ ընդ այլ և այլ ստորոգութեամբ են: Համատեսակք են, որ հաղորդին<sup>3</sup>:

<sup>1</sup> Լ բաց

<sup>2</sup> Լ թուոյ

<sup>3</sup> Նախնական բնագրում հատվածների տեղափոխության հետևանքով այստեղին հետևում է [ԻԶ.] գլխի «անձնատրութեամբք, զի անձնատրութիւն իսկութիւն է» խոսքերով սկսվող հատվածը:

**[ԻԲ.] Յաղագս որ առինչ:**

Որ առինչ տասն է, [ա.] որպէս սեռ ի տեսակ, [բ.] որպէս տեսակ ի սեռ, [գ.] որպէս ի տեղի՝ որպէս «Ֆանանայ ի տանարի», [դ.] և որ ի ժամանակի՝ իբրև «ի ժամ շրհեղեղին», [ե.] որ յաման՝ որպէս «գինի ի սկիհ», [զ.] որպէս բոլորն ի մասունս՝ Սոկրատէս իւրում յանդամսն՝ ի գրուխ և ոտս (իսկ այս ոչ է «առինչ», այլ «յումեմ»), [է.] որպէս մասն ի բոլորն, [ը.] որպէս տեսակ ի նիւթ, [թ.] որպէս յորակութեան պատճառ, [ժ.] որպէս յենթակայէ յիրն:

**[ԻԳ.] Յաղագս բնութեան:**

Բնութիւն է սկիզբն իւրաքանչիւր գոյից շարժման և կայանի, որզան՝ երկիր շարժի առ ի բողբոջել, իսկ կայ, եթէ չփոխի: Որ է սկիզբն և պատճառ շարժման և կայանի, որպէս գոյանայ, այնպէս է շարժիլն և կայն, և ոչ ըստ պատահման. և բնութիւն ասի յումեմնէ գոյացեալ, յամենայնէ յէէ:

Այլ ասի բնութիւն առ ի գոյացողէն:

**[ԻԴ.] Յաղագս անձնատրութեան:**

Անձնատրութեան անուն երկուս նշանակէ՝ երբեմն զպարզ իսկութիւն, այս է զէութիւն, երբեմն՝ զանհատն՝ զՊետրոս:

**[ԻԵ.] Յաղագս դիմի:**

Դէմ է, որ վասն յատկութեան ներգործութեանն և տեսակացն յայտնի, որպէս Գաբրիէլ ասէր առ կոյսն զդէմս իւր, և Պաղոս ի վերայ աստիճանին նարտասանէր: Եւ սուրբ հարբն դէմ և անձնատրութիւն զնոյն կոչեցին:

**[ԻԶ. Յաղագս որ յանձնատրութեան:]**

...անձնատրութեամբք, զի անձնատրութիւն իսկութիւն է ըստ ինքեան, յատուկ: Ասի դարձեալ անձնատրութեամբք, որ յայլմէ անձնատրութենէ առ ի պակասել բնութեան<sup>1</sup> և ի նմա ունել զիւրական իսկութիւն: Ուստի և մարմինն Տեառն ոչ գոյացեալ ըստ ինքեան, և ոչ յառժամեայ ներկայիս յոչ յանձնատրութենէ<sup>2</sup>, այլ մանաւանդ յանձնատրութենէ: Զի ի գոյանալ Աստուծոյ Բանին գոյացաւ, առ ի պակասել ի նմանէ և ցնա ունէր անձնատրութիւն և ունի:

<sup>1</sup> Լ բնութենէ

<sup>2</sup> Լ անձնատրութենէ



**[ԻԹ.] Անանձն:**

Անանձնատրութիւն երկակի ասի. երբեմն ոչ բնաւ և երբէք էր նշանակէ՝ զանգոյականն, իսկ երբեմն՝ ոչ յինքեան ունել գոյն, այլ յայլմէ ունել զիսկութիւնն, այսինքն՝ զպատահումն:

**[Լ.] Գոյ:**

Գոյն բաժանի յէութիւն և ի պատահումն, որպէս ի միոջէ և առ մի:

**[ԼԱ.] Քանակ:**

Քանակն ժողով ասի, զի մինն ոչ ասի քանակութիւն, այլ սկիզբն քանակութեան: Արդ միոցն և միացելոցն գալ ի միասին, լինին բ.: Զերկուսն, յորժամ բաժանեն մի և մի, առանց մասին, այս բաժանումն է, իսկ մին և մին երկու են. այս հաւաքումն է յետին:

Քանակն համարոց և չափոց ենթակայ է, այսինքն՝ զչափելն և զքուելն: Քանակացն կէտ<sup>1</sup> իցեն սահմանեալք, և այլք խառնեալք: Եւ խառնակ<sup>2</sup> են յորժամ մի է համարն, իսկ յորժամ փայտ գտանի երկականգնեան, եռականգնեան, կամ քար, այսպիսիք, և գոլով են չափովք, և վասն այսորիկ ասի խառնակ: Սահմանեալք են, որ ի միմեանց որոշեալք են, որպէս ի վերայ ժ. քարանց և ժ. արմաւենեաց: Այսոքիկ շարաթիւք ասին, բաց ի սակասոց և ի բազմաց չափին գրուաւ և այսպիսեաւ, իբր ցորեան ցորենոյ:

Այսպէս սահմանին որպէս զհատուածս անդամոց առ միմեանս ժողովեալ հասարակաց<sup>3</sup> սահման է: Իսկ մի գոլ փայտին, յորժամ երկականգնեան ասեն, կատարն առաջնոյն<sup>4</sup> և սկիզբն երկրորդին մի ասին, զի կացեալք են և ժողովեալք ի մի, և ոչ ունին հատուածս: Իսկ բաժանականքն ի վերայ ժ. քարանց: Եթէ համարես հինկ և հինկ, ոչ ունին հաղորդս սահմանի, զի թէ տաս ի միոջոյ տասանց սահման, լինի մետասան, այս ինքն զանունն ցուցանէ զխառնելոցն և զբաժանելոցն: Ի բաժանելոցն իսկ քանակ ասի թիւն և բանն: Համարով ասի, զի բանիւ ծանուցանի: Զի թէ ասեն բանի տասն, մի ոչ ունելով ի միջի, ոչ կարես բաժանել զհինկն ի հնկէ, եթէ սահմանես ի մէջ զբաժանականն, լինի մետասան: Սոյնպէս բառ, եթէ ոչ ունիցի կէտ ի

<sup>1</sup> N կէտք

<sup>2</sup> N խառնակք

<sup>3</sup> N հասարակ

<sup>4</sup> L յառաջնոյն

մէջ, ոչ կարէ սահմանել, իբր «Սոկրատէս», ոչ ունելով «սո» և «կրատ»՝ կէտ, ոչ է հասարակ սահման շարայարելոցն:

Զի խառնակ է գփանակութիւնն և ֆանակ է ի մարմին, ի յերևումն, ի գոյն, ի տեղի, և<sup>1</sup> ի ժամանակ:

Հարկ է գիտել, զի գիծն առանց ֆանակի է. ոչ շափի և ոչ թուի, իսկ ֆանակութիւն ի միոյ և ի միոջէ ճանաչի ի մարմին: Իսկ մարմին ֆանակութիւն ունի, զի ամենայն մարմին եռակի է՝ ունել երկայնութիւն և լայնութիւն և խորութիւն: Այլ և ի շնչական մարմին թուին և անդամֆ հատուածովֆ: Այլ և տեղի միջոցաւ բաժանի: Այլ և ժամանակ գ. թուեալ ճանաչի ֆանակութեամբ՝ ներկայս, անցեալն, ապառնին. և երեքն մի են, զի ներկայս կատարումն է անցելումն և սկիզբն ապառնոյն: Իսկ առանց թուոյ և ֆանակութեան այս են՝ գիծ, կէտ, մի: Եւ իսկական իմն այսոքիկ եւթն ասին՝ տրամադրութիւն, ժամանակ, տեղի, սահման, երևումն, բան:

Եւ պատահումն ասեմֆ ֆանակութիւն և զթիւ ինչ ի գունոց կամ ի նշանաց. գոյն՝ ի բազում գոյն, և նշանաց՝ իբր նշանատր տեղի, և այլ նշանս:

Այլ և ֆանակին է որ սահմանական, և է որ անսահման սահման: Սահման՝ որ կարող եմֆ շափել և կամ թուել, անսահման՝ որ ի թիւս երկինն, բայց ոչ թուին, որպէս բազմութիւն աստեղաց:

Եւ յատկութիւնֆ են համարին երեք՝ համար, շափ<sup>2</sup> և բաժանումն, զի բաժանումն ցուցանէ զսահմանն և ի սահմանին լինին, թէ բազումֆ են համար, և թէ մեծ է շափ: Եւ այս ոչ ունի հակառակութիւն: Իսկ որ հակառակ ունի, որակութիւնֆ են և պատահումն. որակութիւն՝ իբր դառն և ֆաղցր, կամ խոշոր և ողորկ, պատահմամբ՝ իբր սեաւ և սպիտակ:

### [ԼԲ.] Յաղագս առնչի:

Առինչ է իբր թէ առ ինքն կամ յինքենէ առ այլ ոք: Առ ինքն՝ իբր հայր յորդոյ, զի ոչ է ամենեցուն հայր, այլ որդոյն: Իսկ առ այլ ոք՝ իբր մեծ առ փոքր և բազում առ սակաւ:

Զի յորժամ ըստ ինքեան տեսակատր ոչ է առինչ, այլ յորժամ անկութիւն ունի առ այլ, որպէս սիրելի սիրելոյ և թշնամի թշնամոյ, աշակերտի առ վարդապետն:

Դարձեալ որ դատէ և դատի, որպէս արհեստատրի արհեստ, զի արհեստն դատէ զարհեստատրն, այսինքն՝ բանի էութիւն Պետրոս և Պաւլոս:

<sup>1</sup> N չիք

<sup>2</sup> L համարաշափ

**[14.] Յաղագս որակի և որակութան:**

Որակութիւն՝ է որ առանձին, և է որ առ այլս անուանին: Դարձեալ որակութիւն է առ անձին գերադրական, որպէս ի հանճարոյն հանճարեղ ասի, և ջերմ ասի, որ հաղորդի<sup>1</sup> ջերմութեան:

Եւ պարտ է գիտել, թէ որակն բոլորագոյն է քան գորակութիւնն, զի նշանակէ զինն և զմերձակայն՝ զջերմն և զջերմութիւնն: Ջերմայինն որակն էն, և ջերմութիւնն՝ որակութիւն:

Եւ ասի կերպարան և ձև և զարութիւն, ներգործութիւն, և գոյն՝ սպիտակ և սեւ:

Որակութեան տեսակն էն չորս՝ յորմէ տրամադրին զարութիւն և տկարութիւն, կիրք և կրական որակութիւնն, իբր ցամ և առողջութիւնն, և կիրք, իբր ջերմութիւնն և ցրտութիւնն:

Է կիրք, որ դիւրաթողի է, իբր տրամադրութիւն, որպէս ոք վասն ամառոյ կարմրի կամ վասն անի դեղնի, իսկ կրական որակութիւն դժուարափոխելի է: Եւ կէտք ոչ ուստէ էն, այլ ըստ էութեանն, որպէս հրոյ ջերմութիւն, մեղեր քաղցրութիւն, և զնոյն կիրքն և ի մեզ կան ի հպիլն: Իսկ ոմանք յոմեքէ կրից խառնին՝ սեւ և սպիտակ, և ի մեզ ոչ կրին ի հպիլն: Իսկ եթովպացոյն ոչ ամենայն տեսակ է:

Եւ ոչ միայն մարմնոց է որակութիւն, այլ և ոգոց՝ ձևն և կերպ. ձևն ի շնչաւոր և յանշունչս արտաբերի, իսկ կերպն՝ ի շնչաւորս միայն: Իսկ թէ ասի յանշունչ կերպ և կերպարան, ոչ իսկապէս, այլ ըստ շնորհի: Բոլորագոյն իցէ<sup>2</sup> ձևն, զի և կերպարանն ձև կոչի՝ ուղղորդ<sup>3</sup> և թիւ:

**[15.] Յաղագս առնելոյ և կրելոյ:**

Առնելն և կրելն՝ որակական զարութիւն եւ կրական, ընդ որակութեամբ էն:

Առնելն է, որ յինքեան ունի զպատեառն ներգործութեանն, և կրել՝ որ<sup>4</sup> յինքեան և յայլմէ ունի զպատեառ կրիցն, որպէս հրաշագործողն եւ հրաշագործեալն: Չի հրաշագործեալն զսկիզբն ի հրաշագործողէն ունի և յինքեան զյատկութիւն կրիցն, որպէս Հիւսն և նաեւ:

<sup>1</sup> M N + ի

<sup>2</sup> L բոլորագունիցն է

<sup>3</sup> N ուղղորդ

<sup>4</sup> L կրելո

Զի յետ առնելոյն մնան կիրքն, իսկ է որ ոչ մնայ, որպէս փողահարութիւն, իսկ տեսանել միայն՝ որպէս աստեղագիտել, երկրաչափել:

**[ԼԵ.] Յաղագս կայոյ:**

Կալն զհարդն է առ այլոյ, իբր մարմին, որ կայ մերձ առ այսպիսի դրութիւն: Տեսակօ կայոյն երեք են՝ կանգնել, նստել, բազմել: Ուղղորդ տառն առնէ զկանգնելն, իսկ ըստ մասին տառն առնէ զնստելն, իսկ ամբողջ տառն առնէ զբազմելն: Բայց ոչ յայտնէ զկալն և ոչ զկանգնելն, այլ զնոյնութիւնն կանգնելոյն ի տեղին:

Որ ըստ բնութեանն կան, այլ են, որպէս տարերք, իսկ դրութիւն և արհեստ՝ անդրիանդաց, սին, եւ այսպիսիք: Եւ բաժանին իսկ ոմանց կայուն, որպէս երկիր, իսկ շարժեցելոցն՝ որպէս երկին<sup>1</sup>:

**[ԼԶ.] Յաղագս որ առ ուր:**

Ուրն տեղի նշանակէ. հարցումն՝ թէ «ո՞ւր է», պատասխանի՝ «ի տան, ի ֆաղափ», իսկ տեսականն ով, ուր ըստ ստորոգութեան՝ ըստ տարբերութեան տեղեաց՝ վեր, ի վայր, յաջ, յահեակ, յետ և յառաջ:

**[ԼԷ.] Երբ:**

Երբն ժամանակ է՝ «հերու, հերովիմամ»: Եւ տարբերութիւն<sup>2</sup> երեք՝ ներկայ, ապառնի, անցեալ:

**[ԼԸ.] Ունել:**

Ի վերայ գոյականին. և յայնքանէ զունելն և զունելին: Ի վերայ՝ պատմունան եւ զէն:

Ունողին<sup>3</sup> էութիւն նշանակէ, զի է ինչ որ էութիւն է, և է որ պատահումն, իբր արհեստից, և արհեստ ոչ ևս ընդ ունելեան վերածի: Զի ունելն բազումք լինին ըստ տարբերութեան գոյից, ֆանզի շնչաւոր է կամ անշունչ. շնչաւոր է, որպէս մանուկ, ձի ունել:

**[ԼԹ.] Յաղագս ներհակի:**

Ներհակ՝ որպէս իր հակառակ, իբր բան: Եւ որպէս բանի բան, որ առնէ ստորասութիւն եւ բացասութիւն: Ստորասութիւն է իր իրի գոլ, և բացասութիւն՝ որպէս իրն: Ստորասութիւն՝ դրութիւն, և բացասութիւն՝ բարձումն:

<sup>1</sup> L M երկնային

<sup>2</sup> L տարբերութիւն

<sup>3</sup> M N ունողն

### «ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՅԵՐԵՆԻՑ

Այս բնագիրը ձեռագրերում սովորաբար նախորդում է Հովհան Դամասկացու մեծ աստվածաբանական աշխատությանը՝ «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ», երկուսին էլ նախորդում է «Դիալեկտիկայի» գլուխների ցանկը՝ Ա.-ԾԱ., և «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ»-ի գլուխների ցանկը՝ Ա.-Ճ.<sup>1</sup> (ՄՄ 63, ՄՄ 3156 ու ՄՄ 5859-ում), մինչ ՄՄ 116 ձեռագրում վերջին ցանկը գետեղված է անմիջապէս «Աւանդութիւն»-ից առաջ:

«Դիալեկտիկայի» գլուխների ցանկում վերջին երկուսը՝ Ծ. («Մահմանն իմաստասիրութեան») և ԾԱ. («Բանն վասն անձին մարդկայնոյ»), սուկ վերնագրեր են, դրանց համապատասխանող գլուխներ չկան:

«Դիալեկտիկային» նախորդում է Հովհանի նամակն իր որդեգրյալ եղբայր՝ Մայումայի Կոսմաս եպիսկոպոսին, որը հունարեն համառոտ իմբարություն նախաբանն է: Բագարատ Մամիկոնյանի թարգմանության մեջ այդ նամակը չկա:

Երրորդ գլուխը տեղափոխված է և դարձել է ԻԸ. «Վասն անհատիցն»: Հունարեն 31՝ Περι τοῦ τί ὑπάρχει ἴδιον τῆς οὐσίας (այսինքն՝ \*«Յաղագս թէ զինչ է յատուկն էութեանն») գլուխը թարգմանված և գետեղված է *հուն.* 23-րդ (= ԻԲ. «Վասն գոյացութեան») գլխից հետո՝ որպէս «ԻԳ. Դարձեալ վասն գոյացութեան»: ԼԱ. գլխում (այն համապատասխանում է հունարենի գլուխ 30-ին) ներմուծված է մի հատված, որ համապատասխանում է հունարեն 47 գլխի 6-21 հատվածին, իսկ Բագարատի թարգմանության մեջ համարյա նույն հատվածը (47.4-21) ներմուծված է Գ. «Յաղագս անհատի» գլխում:

Հունարեն 49-րդ գլուխը թարգմանված չէ (ինչպէս նաև կրկին 49 համարը կրող Ἐτερον κεφάλαιον՝ «Մյուս գլուխը»): Նրա վերնագիրը՝ «Փիլիսոփայության սահմանումները վեցն են» (Օρισμοὶ τῆς φιλοσοφίας εἰσὶν ἔξι), արցագանձ է գտնում հայերեն ցանկի նախավերջին՝ Ծ. գլխի «Մահ-

<sup>1</sup> Ու ևս յոթ վերնագիր՝ «Այս ի գրոց աստուածայնոց յաւանդ եկեղեցոյ՝ համառօտեալ բանն: Եւ աստի յապստամբութիւն հերձուածողացն: ա. Վասն հաւատոյ բան խոսովանութեան և ընդդիմաբանութիւն Նեստորի: բ. Բանս յերկարագեալս առ ի քակտումն շար հերձուածոյն Նեստորի: գ. Բանս արուեստականս առ յակրթիկ ասորիքն և առ նոցայն հերձուած: դ. Առ նոսին դարձեալ և առ ամենայն միաբնակս բանն: ե. Վասն ֆրանկաց բանն ինչ: զ. Առ հրեայն պատասխանիք և դիմադրականք բանն յերկար: է. Վկայութիւնք յամենայն հարց բանից»:

մանք իմաստասիրութեան» վերնագրում, որին, սակայն, ինչպես վերն ասվեց, որևէ գլուխ չի համապատասխանում:

Այս թարգմանությունը մի խմբագիր վերանայել է՝ համեմատելով հունարեն սկզբնագրի հետ և ներմուծելով տրամաբանական կարևորագույն եզրերի՝ հունարեն, հատկապես՝ Գավիթ Անհաղթի երկերի, թարգմանություններից հայտնի համարժեքներով: Այդ աշխատանքի հետևերը, որ տարբեր ձևով են արտահայտված ձեռագրերում, լուսաբանել ենք ստորև՝ թարգմանության լեզվին նվիրված ակնարկում:

### Միմեոն Պղնձահանեցու թարգմանության լեզվական բնութագիրը

Ա. Թարգմանությունը ուղիղ հունարենից չէ, այլ վրացերենի միջնորդությամբ, ուստի տրամաբանական և աստվածաբանական եզրերի համարժեքներն էլ ավելի հեռու են վաղ շրջանի, հատկապես՝ հունարեն թարգմանություններում, նաև Բագարատի թարգմանության մեջ կիրառված եզրերից: Օրինակ՝

άντιστρέφων – «յետս դարձող» (վր. ԼԳ.), «զյետս դարձեալ» (վր. ԽԱ.), հմմտ. «անդրադարձ» (հուն.<sup>1</sup> ԼԲ.), «անդրադարձեալ» (հուն. ԼԹ.),

άντιστρέφει – «շրջադարձի» (վր. Զ.), «կարէ յետս դառնալ» (վր. Զ., ԺԳ.), «դառնայ անդրէն» (վր. ԺԳ.), «յետս դառնայ անդրէն» (վր. ԺԳ.), «անդրադառնի» (վր. ԺԳ.), «դառնայ յետս» (վր. ԺԳ.), «յետսընդդէմ է» (վր. ԽԶ.),

άοριστον – «որ ոչ է սահմանեալ», «առանց սահմանի» (վր. ԼԳ.), հմմտ. «անսահման» (հուն. ԼԱ.),

αύθυπαρκτος – «ինքն ինքեամբ էացեալ» (վր. Ա.), «ինքեամբ էացեալ» (վր. ԻԲ.), «ինքն ինքեամբ գոյ» (վր. Բ.), հմմտ. «ինքնագոյ» (հուն. Ա., Բ., ԻԳ.),

αύλητης... αὐλησις – «երգիչ... երգ, ձայն և երգ» (վր. ԼԶ.), հմմտ. «փողահար... փողահարութիւն» (հուն. ԼԴ.),

άχώριστον συμβεβηκός – «անմեկնելի պատահումն» (վր. Գ.), հմմտ. «անանջատական պատահումն» (հուն. Ե.),

γελαστικός – «ծիծաղող», «ծաղրող» (վր. Զ.), հմմտ. «ծիծաղական» (հուն. Է.),

<sup>1</sup> Համեմատությունները Բագարատ Մամիկոնյանի հունարենից արված թարգմանության նույն հատվածների հետ են (որի գլուխների համարների անհամապատասխանությունը պայմանավորված է տեղափոխություններով ու բացթողումներով):

γελαστικόν, ὀρθοπεριπατητικόν, πλατωνώνυχον – «ծաղրածու, յոսնագնաց, ոտնլայն» (վր. ԺԳ.), «ի վեր կոյս յոսու կեալ գնալով լայնաթաթ» (վր. ԺԳ.), հմմտ. «ծիծաղական ուղղագնացիկ, լայնեղունկն» (հուն. ԺԳ.),

τὸ πλατωνώνυχον – «լայնոտնութիւն» (վր. Ե.), հմմտ. լայնեղունգութիւն» (հուն. Զ.),

γραμματικὴ – «դպրութիւն» (վր. ԺԸ., Ի), հմմտ. «ճերականութիւն» (հուն. ԺԹ.), «ճերական» (հուն. ԻԱ.),

γραμματικός – «հոեւոր» (վր. ԺԳ.), «դպիր» (վր. ԺԸ.), հմմտ. «ճերական» (հուն. ԺԳ., ԺԹ.),

διάκειται – «ազգանայ» (վր. ԼԵ.), հմմտ. յարակայի (հուն. ԼԳ.),

διάκρισις – «ընտրողութիւն» (վր. ԼԵ.), հմմտ. «բաղդաստութիւն» (հուն. ԼԳ.),

διάθεσις – «ազգ» (վր. ԼԵ.), հմմտ. «ստամաղրութիւն» (հուն. ԼԳ.),

δισσῶς – «երկու ազգ» (վր. Լ.), հմմտ. «երկակի» (հուն. ԻԹ.),

ἔμπυχος – «անձնական» (վր. Բ.), «անձնատու» (վր. Բ., Է., ԺԳ., Ի., ԻԵ., ԻԶ., ԼԱ.), «անձնատու և շնչատու» (վր. ԻԶ.), «անձնատրութիւն» (վր. ԼԱ., ԼԵ., ԽԶ.), «հոգևոր» (վր. ԽԹ.), հմմտ. «շնչատու» (հուն. Գ., ԺԳ., ԻԱ., ԻԵ., ԻԶ., ԼԳ.),

ἐπιστήμη – «վարժմունք արհեստից» (վր. ԺԳ.), «արուեստ» (վր. Է., Ի.), «արուեստական» (վր. Ի.), հմմտ. «մակագրութիւն» (հուն. Ը., ԺԳ., ԻԱ.),

ἕτερογενής – «այլազգի» (վր. Ի.), հմմտ. «այլաստ» (հուն. ԻԱ.),

ἕτεροειδής – «այլակերպ» (վր. Ի.), հմմտ. «այլատեսակ» (հուն. ԻԱ.),

εὐαπόβλητος – «ի բաց ձգելի» (վր. ԼԵ.), հմմտ. «դիտարողի» (հուն. ԼԳ.),

θέσις – «դիր, տեղի» (վր. ԼԷ.), հմմտ. «դրութիւն» (հուն. ԼԵ.),

κατάθεσις – «հանութիւն» (վր. ԼԵ.), հմմտ. «ստորադրութիւն» (հուն. ԼԳ.),

μεταβάλλει – «ազգանայ», «փոփոխիւն», «փոփոխի» (վր. ԼԵ.), հմմտ. «փոխարկի» (հուն. ԼԹ.),

μεταδίδωσι – «կարէ տալ» (վր. Բ.), հմմտ. «փոխատուէ» (հուն. Բ.),

ὁμογενής – «համազգի» (վր. Ի., ԻԵ.), հմմտ. «համաստ» (հուն. ԻԱ., ԻԵ.),

ὁμοειδής – «միատեսակ» (վր. Գ.), «համատիպ» (վր. Ի.), հմմտ. «համատեսակ» (հուն. Գ., ԻԱ.),

ὁμοειδής – «պատկերակից և համատեսակ իւրն» (վր. ԻԶ.), հմմտ. «համատեսական» (հուն. ԻԶ.),

ὀρισμός – «սահմանադրութիւն» (վր. ԺԳ., ԻԳ., ԼԵ.), հմմտ. «սահման» (հուն. ԺԲ, ԺԳ., ԼԳ.), հմմտ. ὀροθέσιον – «սահմանադիր» (հուն. ԺԳ.),

πάθος – «հանդիպումն» (վր. ԼԵ.), հմմտ. «կիրք» (հուն. ԼԳ.),

- πάθησις – «հանդիպելուփին» (զր. ԼԶ.), հմմտ. «կիրֆ» (հուն. ԼԴ.),  
 πάσχειν – «հանդիպել» (զր. ԼԶ.) հմմտ. «կրել» (հուն. ԼԴ.),  
 πάθος και παθητική ποιότης – «զպատումսս և զպատումսսական  
 որպիսութիւնս» (զր. ԼԵ.), հմմտ. «կիրֆ եւ կրական որակութիւնֆ» (հուն. ԼԳ.),  
 τὸ ποίον – «գորպէսն, որ է որակութեան» (զր. ԺԹ.), «որակութիւն»  
 (զր. Ի.), «որ» (սեռական՝ «ոյր», «ոյրոյ» [զր. ԼԵ.]), «որպէսութիւն» (զր.  
 ԽԵ.), հմմտ. «որակ» (հուն. ԼԳ., Ի.), «որակութիւն» (հուն. ԻԱ.),  
 ποιότης – «որպիսութիւն», «որպէս», «որպիսի» (զր. ԼԵ.), հմմտ. «որա-  
 կութիւն» (հուն. ԼԳ.),  
 ποσόν – «քանիւնութիւն» (զր. ԺԹ., ԼԵ., ԼԶ., ԽԶ.), «քանի» (զր. ԼԵ.),  
 «քանիւն և քանակ» (զր. ԼԳ.), «քանիւն քանակ» (զր. ԼԳ.), հմմտ. «քա-  
 նակ» (հուն. Ի., ԼԱ., ԼԳ.),  
 ποσότης – «քանիւնութիւն» (զր. ԼԳ., ԼԵ.), «քանի» (սեռ. «քանոն») (զր.  
 ԼԳ.), «քանակ» (զր. ԼԳ.), «քանիւնութիւն, այսինքն՝ քանակ» (զր. ԼԳ.),  
 հմմտ. «քանակութիւն» (հուն. ԼԱ.), «քանակ» (հուն. ԼԱ., ԼԳ.),  
 προσλαβοῦσα – «առնելով յինքն» (զր. ԻԶ.), հմմտ. «առընդունի»  
 (հուն. ԻԶ.),  
 στοιχείον – «նիւթ/նիւթ» (զր. ԼԵ., ԽԹ.), «անդամ» (զր. ԼԵ., ԼԵ.), հմմտ.  
 «աար» (հուն. ԼԳ., ԼԵ.),  
 συλλαβή – «մասն», «ի միմեանս» (զր. ԼԳ.), հմմտ. «փաղանունու-  
 րիւն» (հուն. ԺԹ.),  
 συναναιρεῖν – «ի միասին փոյթ սպանանել» (զր. ԼԳ.), «ընդ միմեանս  
 բարձրին լուծեալֆ» (զր. ԽԱ.), հմմտ. «շարաբառնի» (հուն. ԼԲ., ԼԹ.),  
 συνεισφέρει – «ընդ նմա աներկարայ մտանէ» (զր. ԺԲ.), «ընդ ինքն ի  
 ներքս բերէ» (զր. ԽԲ.), հմմտ. «շարաբերէ» (հուն. ԺԳ.),  
 συνεισφέρειν και συνεισφέρεισθαι – «շարինեքսբերումն<sup>1</sup> և ընդինքն-  
 բերումն» (զր. ԼԳ.), հմմտ. «որ շարաբերի և շարաբերէ» (հուն. ԼԲ.)  
 σύνθετος – «խառնուած» (զր. ԻԹ.), հմմտ. «շարադրական» (հուն. ԻԸ.),  
 συντιθέμενος – «խառնեալ» (զր. ԻԹ.), հմմտ. «շարադրեալ» (հուն. ԻԸ.),  
 σῶμα – «սեռ» (զր. ԻԵ., ԼԳ., ԼԶ.), հմմտ. «մարմին» (հուն. ԻԵ.),  
 «գոյացութիւն» (զր. ԼԱ.), հմմտ. «մարմին» (հուն. Գ.),

<sup>1</sup> ՍՄՆ- նախաձանցին համապատասխանեցված է կանոնավոր «շար»-ը, իսկ երկրորդ՝ շար-  
 նախաձանցին՝ «իներքս» մակբայը, ինչն իմաստային առումով ճիշտ է, իսկ բառա-  
 կազմական առումով՝ արտառոց:



<sup>l</sup> Dial. 37.14 չիք Եւս առկայումն կայ ոմն զաւրութիւն, որ զաւրէ գալ, իսկ ի միսն ներգործութիւն, որպէս ուր կայր (սա հին Թարգմանութիւնն է, իսկ նախորդ նախադասութիւնը՝ խմբագրված տարբերակը)

**ԼԸ. Վասն ուրին<sup>a</sup> 40:**

Ուր գտեղի յայտ առնէ, վասն զի հարցեալ, թէ «ո՞ւր է այս ոմն», ասեմք, եթէ «ի կան է», կամ «ի ֆաղաֆի է»: Իսկ սոքա գտեղիս նշանակեն, և այլք այսպիսիք ուրին ստորոգութիւնք են ըստ տարբերութեան<sup>b</sup> տեղեացն՝ վերոյ, ներքոյ, յաջ, յահեակ, յետ և յառաջ:

**ԼԹ. Վասն երբի<sup>41</sup>:**

Երբն զժամն ցուցանէ, վասն զի հարցանել, թէ «ե՞րբ եղև այս ինչ», ասեմք. «երէկ կամ հերո՞ւ», որք զժամն<sup>d</sup> նշանակեն: Իսկ տեսակք իսկ երբի<sup>e</sup> ստորոգութիւնք են այնչափ, որչափ են բաժանմունք ժամուց: Եւ երեք են՝ ներկայն<sup>f</sup>, որ է յորժամ է<sup>g</sup>, և անցեալն և ապառնին:

**Խ. Վասն ունելոյ<sup>42</sup>:**

Ունել է գոյացութիւն ի գոյութենէ և յաղագս դրուածոյ<sup>h</sup>: Այլ յայտնէ զպարագրեալն<sup>i</sup> կամ զպարագրողն, և եթէ ոչ է ինչ մասն իրի: Եւ պարագրէ հանդերձ և սպառազէն և այլ այդպիսիք: Իսկ պարագրի մատանի, կնիք և այլ ինչ որ այդպիսիք են փոքունք:

Եւ պարտ է, որպէս զի պարագրող և պարագրեալն ազգ գոյութիւն եղիցին<sup>j</sup>, զի եթէ մին գոյութիւն եղիցին, և միան պատահումն, իբրև զհանդիպեալ և զհանդիպումն<sup>k</sup>, ոչ այնուհետև առ ունել<sup>l</sup> վերաբերին:

Իսկ տարբերութիւնք<sup>m</sup> ունելոյ լինին ըստ նմանութեան բաժանման էիցն, զի կամ շնչատու է կամ անշունչ: Եւ շնչատու զհետևեալսն ասեմք, իբրև զճառայի, զձիոյ և զայլոցն բազմաց<sup>n</sup>: Այս<sup>o</sup> իսկ զունելն և ըստ բազմաց այլոց նշանակելով հոմանունս, յաղագս որոյ յետոյ ասեմք:

<sup>a</sup> F ուր ուր

<sup>b</sup> F բաժանման ուղղված տարբերութեան

<sup>c</sup> երէկ կամ հերու // Dial. 39.3 πέρυσσι, προπέρυσσι, ἴδιον. Բազ. Թարգմ. հերու, հերվինամ

<sup>d</sup> F զժամս

<sup>e</sup> F երբէ

<sup>f</sup> F ներկայք

<sup>g</sup> E է, յորժամ որ է

<sup>h</sup> Dial. 40.2 չիք և յաղագս դրուածոյ

<sup>i</sup> F զպարագրելն

<sup>j</sup> F գոյութիւն եղիցին ազգք, մակացութիւնք և մակացութիւնք

<sup>k</sup> E սողից վեր մակացութիւն... որպէս և մակացութիւն | Dial. 40.6 ἐπιστήμων καὶ ἐπιστήμη

<sup>l</sup> F ունեալ

<sup>m</sup> F + բաժանմունք

<sup>n</sup> Dial. 40.9-10 + ἄψυχον δὲ ὡς δακτύλιον, ὑπόδημα καὶ τὰ τοιαῦτα, Բազ. նույնպէս չունի

<sup>o</sup> Dial. 40.10 Λέγεται

**ԽԱ. Վասն ներհակացն<sup>a</sup> հակառակ<sup>43</sup>:**

Ամենայն ներհակի ընդդիմակաց կամ իբրև զգործ ընդդիմադարձի, կամ իբրև զբան: Եւ եթէ իբրև զբան ընդ բան, առնէ զառաջասացութիւն<sup>b</sup> և զյետասացութիւն<sup>c</sup>, որ են այո և ոչ, ասելի և ոչ ասելի<sup>d</sup>: Եւ այս է յառաջասացութիւն<sup>e</sup> և այո<sup>e</sup> ասել, եթէ է ինչ ումեմ և<sup>f</sup> բարի է: Իսկ յետասացութիւն է ասել, թէ ոչ գոյ ինչ ումեմ և ոչ բարի է: Եւ կոչին այսոքիկ հակառակախաւսութիւն: Իսկ եթէ իբրև զբան ընդդիմանայ կամ իբրև զյետս դարձելոյ ինչ ասին և առնէ զառինչն, որ ի ներքս ածեն զմիմեանս<sup>g</sup> և ընդ միմեանս բարձցին լուծեալ, կամ<sup>h</sup> ոչ իբր յետս դարձելովս և ոչ ունին անխզելի ընտանութիւն: Եւ սոքա կամ ոչ փոփոխին ի միմեանս, այլ բնութեամբ երկուք են և առնեն զհակառակութիւն, իբրև զշերմութիւն և զցրտութիւն, կամ ոմն փոփոխի յայլ, իսկ ոմն ոչ փոփոխի: Եւ ոմն ի նոցանէ բնութեամբ է, և ոմն արտաբոյ բնութեան, և առնէ ըստ պակասութեան և ունակութեան զհակառակութիւն, որպէս զտեսանողութիւն և զկուրութիւն: Զի ունակութիւն է տեսութիւն, իբրև յունելոյ էութեանն, իսկ պակասութիւն ունակութեանն, այսինքն է տեսութեանն, կուրութիւն:

Իսկ ի հակառակացն են ոմանք որ անընդմիջաբար է, և ոմանք միջնորդով են: Եւ առանց միջնորդի են այնոքիկ, որոց հարկ է, զի ոմն եղիցի ստորեղեալ յենթակայոյ իւր և կամ ի նոսա, որոց լսին լինել նոքա, իբրև են հիւանդութիւն և առողջութիւն ի յանձն կենդանոյն և ենթակայ, նոցա է մարմին կենդանոյն<sup>i</sup>: Եւ հարկ է ստուգի յանձին կամ ցաւոց լինել, կամ առողջութեան: Եւ ցամ կոչեմք զամենայն հակադարձմունսն բնութեան: Իսկ միջնորդով նոքա են, որոց ոչ հարկ գոյ միոյն լինել ենթակայ կամ ի նոսա յորոց լինել լսին, որպէս սպիտակն և սեաւ: Զի հակառակ էն, և ոչ ստուգի հարկ է միում ի նոցանէ յենթակայել անձին: Զի ոչ կարևոր է անձին ստուգի<sup>j</sup> կամ սպիտակ լինել կամ սեաւ, վասն զի<sup>k</sup> են անձինք գոչք, կարմիրք,

<sup>a</sup> F հակառակացն ուղղված ներհակաց

<sup>b</sup> E ուղղված զստորասութիւն F ուղղված ազգ ստորասացութիւն

<sup>c</sup> E ուղղված բացասութիւն F ուղղված ազգ և բացասացութիւն

<sup>d</sup> Dial. 41.3 չիք որ են այո և ոչ, ասելի և ոչ ասելի

<sup>e</sup> Dial. 41.4 չիք և այո

<sup>f</sup> Dial. 41.5 + οἷον

<sup>g</sup> F միմեանց

<sup>h</sup> EF կան

<sup>i</sup> ի յանձն կենդանոյն և ենթակայ, նոցա է մարմին կենդանոյն // Dial. 41.17 ἐν σώματι ζώου ὑποκειμένω

<sup>j</sup> Dial. 41.21 πᾶν

<sup>k</sup> F + ոչ



շէկ<sup>a</sup>: Ոչ եթէ ոչ զմի ի հակառակաց ընտանաբար ուրոյն ունէր բնութիւն ինչ, որպէս զջերմութիւն հուր և զցրտութիւն ձիւն: Իսկ որ ի միջի սոցա են, ոմանք ունին անուանս, իբրև թէ միջոց սպիտակին և սևինն կոչեսցի գոշ, իսկ ոմանք ոչ ունին զանուն, վասն զի միջին արդարութեան և անարդարութեան ոչ ունի անուն, այլ յերկոցունց կողմանց բաժանեալն միջոց ճանաչի լինել, իբրև այն թէ ոչ արդար է և ոչ սուտ:

Այլ ունին<sup>b</sup> հակառակքն յատկութիւնք չորք: Նախ այն, զի բարոյն ստուգապէս հակառակ է չար, իսկ չարին՝ երբեմն բարին ընդդէմ և երբեմն այլ չար. և ողջախոհութեանն հակառակ է բոլջախոհութիւնն, իսկ անառակութեանն՝ երբեմն ողջախոհութիւն և երբեմն ֆարանալն գոլ: Եւ ֆարանալն կոչի անախտաշարժ լինել<sup>c</sup>: Եւ արդ ֆարանալն պակասութիւն է սրբութեան, իսկ անառակութիւն՝ անելագանցութիւնն պակասութեանն<sup>d</sup>: Երբորդ, վասն զի ոչ է կարողութիւն, զի ի մի և նոյն ժամն միանգամայն լինիցին հակառակքն յանհատսն<sup>e</sup>, զի ոչ է հնար, որպէս թէ Սոկրատ յանկարծակի միանգամ առողջ և հիւանդ լինիցի, կամ մի և նոյն յանդամի<sup>f</sup> յանկարծակի միում ժամու շերմ գոլ և ցուրտ: Երբորդ, վասն զի հակառակքն ի մի և նոյն ենթակայումն ստորեաւ կամ ազգք<sup>g</sup> են, կամ տեսակք, կամ թիւք: Եւ ազգ՝ իբրև ի մի պարզ անձն՝ սպիտակն և սեւ, և տեսակ՝ իբրև ի յանձին կենդանոյն առողջութիւն և հիւանդութիւն, իսկ թիւք յայտ է, զի մի և նոյն անձին կարողութիւն է ընդունել զընդդիմադարձս միմեանց ըստ իւրում փոփոխութեանն: Չորբորդ՝ վասն զի հակառակքն կամ նոյն ազգի հետևողք են, որպէս սպիտակ և սև գոյնոյն հետևողք, կամ հակառակ ազգացն են հետևողք, որպէս արդարութիւն և ստութիւն բարոյ և չարի հետևողք են<sup>h</sup>, և կամ նոքա իսկ հակառակ ազգ են, որպէս բարի և չար ընդդիմադիր ազգ են:

<sup>a</sup> F շէկք, կարմիրք // Dial. 41.23 πύρρα

<sup>b</sup> Dial. 41.30 Ἀκολουθοῦσι

<sup>c</sup> Dial. 41.34 τὸ μὴ κινεῖσθαι μηδὲ ἐγείρεσθαι τὰ πάθη, *հմմտ. Բագ. Թարգմ.* որ ոչ շարժելի է ոչ յաննելի կիրքն

<sup>d</sup> Եւ արդ ֆարանալն պակասութիւն է սրբութեան, իսկ անառակութիւն՝ անելագանցութիւնն պակասութեանն // Dial. 41.34-36 Ἡ μὲν οὖν ἀκολασία ἔλλειψις ἐστὶ τῆς σωφοσύνης, ἢ δὲ ἡλιθιότης ὑπερβολή, ἐναντία δὲ ἢ ὑπερβολή τῆ ἐλλείψει, *հմմտ. Բագ. Թարգմ.* Արդ առանց պատահարի պակասումն է ողջախոհութեան, իսկ ֆարացեալն՝ վերարկու: Եւ ներհակն վերարկու է պակասման

<sup>e</sup> E անհատսն

<sup>f</sup> F անդամն

<sup>g</sup> E ազգ

<sup>h</sup> Dial. 41.45 + ἄτινα ἐναντία εἰσίν

**ԽԲ. Վասն ունելոյ եւ պակասութեան<sup>44</sup>:**

Ունել ասի ներգործութիւն ինչ ունելոյ և ունողի, որպէս զսպառազէն և զսպառազիւնեալ, այսինքն՝ զգէնոյ և զգեցողի<sup>a</sup>: Երկրորդ, յարակայ<sup>b</sup> ներգործութիւն կայուն և անշարժելի, բնական և անձնական. բնականքն՝ իբրև զշեմութիւն ի ջերմականքն, իսկ հոգեկանք՝ որպէս զմակացութիւն: Երրորդ, որ ոչ ունի ինչ, այլ ունի յաջողութիւն ընդունել զնա, որ է նախանշանակեալ զարութիւն. զօրութիւն իցէ և երրորդին, զոր վասն խառնուածոյ Գալիանոս ասաց<sup>c</sup>, որ ոչ դեռ իցէ աշողակ լինել, որպէս ստնդիայ ունի զօրութիւն ֆերականութեան արդի ծնեալ, և կորին շան՝ զօրութիւն որսոյ<sup>d</sup>: Չորրորդ, բնական որակութիւն, որ է բնական ունակութիւն<sup>e</sup>, իբրև է<sup>f</sup> ջերմութիւն հոյ և տեսութիւն երազոյ ննջողին, որ է երկրորդ նշանակեալ<sup>g</sup> զզարութիւն գոյոյն, զի հուր<sup>h</sup> կարող է կիզելոյ, այլ ոչ ներգործէ զայրելն, այսինքն<sup>i</sup> ըստ առաջին նշանի ներգործութեանն: Հինգերորդ<sup>j</sup>, կատարեալ ներգործութիւն, իբրև տեսանողն<sup>k</sup> զտեսութիւն և ջերմութիւն<sup>l</sup> ջերմացեալն լեալ:

<sup>m</sup>Իսկ հակադարձի պակասութիւն<sup>n</sup> առաջնոյ<sup>o</sup> ունակութեան պակասութիւն սպառազիւնին, այսինքն՝ զգեստին, իսկ<sup>p</sup> երկրորդին՝ զրկումն եկամտին հաւասարութիւն ունակութեան, իբրև զայն զի ջեռեալն ցրտասցի: Եւ ըստ երրորդին<sup>q</sup>, զոր ամենինն ոչ ստացեալ էր ունել զազգն, որպէս ասէ եթէ աշողէ սնտինդայ ունել զարութիւն առ ի լինել երաժիշտ, այսինքն՝ մուսի-

<sup>a</sup> F զգէնողի

<sup>b</sup> F եկամտաւ տողից վեր ազգ ի լուս. ազգ զարութիւն իցէ և յերրորդին զոր վասն խառնվածո գաղիանոսաց որ ոչ դեռ իցէ աշողակ լինելոյ, որպէս ստնդիայ ունի զարութիւն ֆերականութեան արդի ծնեալ և կորին շան զարութիւն որսո

<sup>c</sup> EFHI գալիանոսաց | Գալիանոս ասաց *ընթերցումը առկա է միայն E-ի կրկնված հատվածում*

<sup>d</sup> Dial. 42.7 չիք զօրութիւն իցէ և երրորդին, զոր վասն խառնուածոյ Գալիանոս ասաց, որ ոչ դեռ իցէ աշողակ լինել, որպէս ստնդիայ ունի զօրութիւն ֆերականութեան արդի ծնեալ, և կորին շան՝ զօրութիւն որսոյ

<sup>e</sup> E որակութիւն

<sup>f</sup> F ի

<sup>g</sup> F նշանակ

<sup>h</sup> Dial. 42.10 չիք

<sup>i</sup> F այս է | Dial. 42.10 չիք

<sup>j</sup> Dial. 42.11 + ὠς

<sup>k</sup> Dial. 42.11 + ἥδη

<sup>l</sup> Dial. 42.12 + ἥδη

<sup>m</sup> Dial. 42.13 + στέρησις δὲ τῆς ἕξεως ἀποβολή

<sup>n</sup> Dial. 42.13 չիք

<sup>o</sup> Dial. 42.13-14 + σημαυνομένω

<sup>p</sup> E այսինքն

<sup>q</sup> E երկրորդին

կան, իսկ թզենին նշ բնաւ կարէ լինել երաժիշտ<sup>a</sup>: Զի բնաւ պակասի գոլ թզենի նշ գոլ թզենի ի ձեռն այսորիկ<sup>b</sup>, վասն զի ազգ տնգոց նշ ունի յաշողակութիւն ընդունել<sup>c</sup> զերաժշտականութիւն: Եւ ոմանք<sup>d</sup> յազգս ունի գաշողն գոլ, իսկ ոմանք ի տեսակէ նշ ունին, զի կենդանին գաւրութիւն ունի տեսանելոյ, իսկ իւրորդն, որ է աշացու մուկն<sup>e</sup>, զի տեսակ է կենդանոյ, և նշ ունի գաւրութիւն տեսութեան: Իսկ չորրորդն, ի բաց ձգելով, գոր ունէրն գաւրութիւն ըստ իրին կարգի, իսկ հինգերորդ, ի բաց ընգենով զկատարեալն զիւր ներգործութիւն, գոր վերագոյն յիշեցաք ըստ պակասութեանն և յաւելման ունակութեան<sup>f</sup> շինուածոյն ընդդէմ հակառակացն դնելով, այսինքն է՝ գաւրութեան և որակութեան և հանդիպողականութեան:

Այլ կերպարանի ինքն ի ձեռն երիցս այսոցիկ, որ գոր ստացեալ է ունել և ուր ստացեալ է ունել<sup>g</sup>, իսկ որ ամենևինմբ ոչ<sup>h</sup> ոչ ունի, այլ կատարելապէս պակասեալ է<sup>i</sup> և երբեմն ստացեալ է ունել: Որպէս քարի ոչ ասեմք կոյր գոլով, զի ոչ ստացեալ է յունակութիւն տեսանելոյն: Եւ ոչ գարդի ծնեալն<sup>j</sup> շուն ասեմք կոյր, և ոչ կենդանոյն ասելի է, եթէ ոչ տեսանել կարէ ոտիւք, վասն զի ոչ ստացաւ կենդանին յոտսն ունել զանապ տեսութեան<sup>k</sup>: Եւ ոչ նորածին տղայոյ ասելի է անատամն գոլ<sup>l</sup>: Եւ արդ<sup>m</sup> յորժամ ըստ երրորդ այս տեսակի ստացի զունել և զոչ ունել, յայնժամ ասեն<sup>n</sup> պակասեալ:

#### ԽԳ. Վասն առաջնոյ և վերջնոյ<sup>45</sup>:

Առաջինն բաժանի ի չորս նշանադրութիւնս, և տիրապէս<sup>o</sup> է ստուգաբանեալ, որ ժամաւ առաջին լինի: Այլ և ասի տիրապէս՝ բնաբար ընդանի

<sup>a</sup> Dial. 42.17 չիք կարէ լինել երաժիշտ

<sup>b</sup> Dial. 42.18 չիք ոչ գոլ թզենի ի ձեռն այսորիկ

<sup>c</sup> E + լինել

<sup>d</sup> F ոմանք

<sup>e</sup> Dial. 42.21 չիք որ է աշացու մուկն

<sup>f</sup> F չիք և ի լուս. ազգ ունակութեան

<sup>g</sup> Dial. 42.26 չիք և ուր ստացեալ է ունել

<sup>h</sup> Dial. 42.26 չիք

<sup>i</sup> Dial. 42.27 + και ὅτε πέφουκεν ἔχειν

<sup>j</sup> E ծնեալ

<sup>k</sup> Dial. 42.29 չիք ոչ կենդանոյն ասելի է, եթէ ոչ տեսանել կարէ ոտիւք, վասն զի ոչ ստացաւ կենդանին յոտսն ունել զանապ տեսութեան, բայց տեղափոխված է՝ Dial. 42.30-32 οὐδὲ τὸν πόδα λέγομεν τυφλόν, οὐ γὰρ πέφουκε τὸ ζῶον ἐν τῷ ποδὶ ἔχειν τὴν ἕξιν τῆς ὀράσεως

<sup>l</sup> Dial. 42.30 + ἐπειδὴ οὐ πεφύκασι κατ' ἐκεῖνον τὸν καιρὸν ἔχειν

<sup>m</sup> E չիք

<sup>n</sup> E չիք

<sup>o</sup> E չիք

ընչաւորացն լինել ասագոյրին և անշնչիցն՝ հնութին: Իսկ ըստ պիտատելոյ յարանունաբար<sup>a</sup> ի միմեանս փոփոխին: Երկրորդ, բնութեամբ առաջին է, որ ընդ ինքն ի ներքս բերէ և ոչ ինքն ընդ այլում<sup>b</sup> բերեալ լինի<sup>c</sup>, և ընդ նմին ջնջեալ և բարձեալ, այլ ընդ ինքն բառնալ կարող է<sup>d</sup>, որպէս կենդանին առաջին քան զմարդ է: Վասն զի յորժամ ոչ եղիցի կենդանին, և ոչ մարդ լինի, վասն զի կենդանի է մարդ: Իսկ եթէ մարդ ոչ է, եղիցի կենդանին, զի ձի, եզն և շուն կենդանիք են: Եւ մարդ մինչ է, ստոյգ է և կենդանին, զի կենդանի է մարդ, իսկ կենդանին մինչ է, ոչ ստոյգ է մարդ, այլ մի թէ ձի և շուն և այլ այնպիսիք<sup>e</sup>, զի և սոքա կենդանիք են: Երրորդ, ըստ կարգի, որպէս և ասեմք, եթէ<sup>f</sup> այբ<sup>g</sup>, բեն և ապա շաղկապիլ<sup>h</sup>: Չորրորդ, ըստ պատույ, որպէս ասի՝ առաջին զեպիսկոպոս, և ապա քանոնայ: Այլ յանդիմանեն ոմանք զայս տեսակ, զի լինի և այս, զի առաջինն կարգաւ յետին եղիցի պատուով: Հինգերորդն, որպէս ասացաք, զպատճառն և զորս ի պատճառէն, իբրև զայն, թէ Սոկրատ առաջին է քան զԻսկրն պատկեր<sup>i</sup>, և հայր առաջին և մեծ քան զորդի, զի ի հարէ է պատճառ որդոյ<sup>j</sup>, զի ի հարէ որդի ծնանի: Եւ վասն այսորիկ երանելին Գրիգոր ըստ այսմ նշանադրութեան էառ, զոր վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի<sup>k</sup> ասացեալ էր յԱւետարանին, եթէ «հայր իմ մեծ է քան զիս»<sup>46</sup>:

Իսկ այլք յաւելուն զմանրամնինն խնդիրս, որպէս զի առաջին է հիմն, քան զպարիսպ, և այս վերաբերի առ չորրորդ տեսակին պատուով գոյով<sup>l</sup>, զի որ մանրամասն գիտութեամբ առաջին է, նա գործովք յետին է<sup>m</sup>: Այլ առաջին և յետին ոչ են ի հոմանունաց, իսկ առաջինն և վերջինն՝ մանաւանդ և նուագն ոչ<sup>n</sup>, այլ ի միոջէ առ մի:

<sup>a</sup> Dial. 43.4 չիք

<sup>b</sup> ընդ ինքն ի ներքս բերէ և ոչ ինքն ընդ այլում // F շարաբերէ շարաբերի ըն

<sup>c</sup> ... ի ներքս բերէ և ոչ... բերեալ լինի // Dial. 43.7 συνεισφέρεται μέν, οὐ συνεισφέρει δέ

<sup>d</sup> ընդ ինքն բառնալ կարող է // Dial. 43.7 οὐ συναναιρεῖται

<sup>e</sup> Dial. 43.9 չիք և այլ այնպիսիք

<sup>f</sup> Dial. 43.12 + πρῶτον

<sup>g</sup> Dial. 43.12 + δεύτερον

<sup>h</sup> Dial. 43.12-13 συλλάβια, εἶτα αἱ ψῆφοι

<sup>i</sup> Dial. 43.17 + αὐτὸς γάρ ἐστιν αἷτιος τῆς ἰδίας εἰκόνοσ

<sup>j</sup> F որդոս պատճառ | զի ի հարէ է պատճառ որդոյ // Dial. 43.18 չիք

<sup>k</sup> Dial. 43.20 չիք Յիսուսի Քրիստոսի

<sup>l</sup> F չիք

<sup>m</sup> Dial. 43.25 + Ὅσαχῶς δὲ τὸ πρότερον, τοσαυταχῶς καὶ τὸ ὕστερον

<sup>n</sup> E չիք իսկ առաջինն և վերջինն մանաւանդ և նուագն ոչ

**ԽԴ. Յաղագս ի միասին համանգամայն<sup>47</sup>:**

<sup>a</sup> Համանգամայն<sup>a</sup> ասին, որոց<sup>b</sup> լինելն ի մի եւ ի նոյն ժամ լինիցի, որպէս երկու, որ ծնանին ի մի և նոյն ակնարկել: Այս տեսակ ընդդիմադարձ գոյով առաջին նշանագրութեանն, որ վասն առաջնոյն էր: Իսկ երկրորդ նշանակումն ի միասին լինելոյ յանկարծակի մի ի միում միաբան գոյով և ոչ որոց ի նոցանէ էութիւն պատճառ և ի պատճառէն ելով, որպէս և երկու մասն և կէսն, զի փութապէս են ի միմեանս զոյգ գոյով, և բառնան եղծելով զմիմեանս և ընդ միմեանս<sup>c</sup> բերեն զիրեարս: Իսկ այս յեղանակ տեսակ հակառակ է երկրորդ և հինգերորդ յեղանակին երկրորդի<sup>d</sup>, վասն զի յերկրորդին ոչ ընդ ինմեանս ի ներք բերեն և ոչ բառնան ի միջոյ զմիմեանս, իսկ ի հինգերորդումն ոմն եղիցի պատճառ, և ոմն ի պատճառէն գոլ<sup>e</sup>: Որով և հակառակ բաժանմունք կոչին ի նորին բաժանմանէ ի վայր իջանելով, որպէս են բանական և անբան՝ ի կենդանոյն: Այլ այս յեղանակ ընդդիմադարձի առաջնոյն և երկրորդին, աղօտ<sup>f</sup> մի ևս և այլոց երիցն:

**ԽԵ. Վասն շարժողն գոյոյ եւ շարժողութեան<sup>48</sup>:**

Շարժումն<sup>g</sup> է կատարելութիւն<sup>h</sup> գոյով<sup>i</sup> ներգործութեան<sup>j</sup> զօրութեան, որ և այսպիսի ինչ է, որպէս պղինձ զօրութեամբ է լինել պատկեր: Վասն զի զարութիւն ունի պղինձ առնուլ զարինակ անդրիանդի: Եւ անփոփոխ կայ ի պղինձ զարութիւն է պատկեր մարդոյ լինել հալմամբ, կռելով, փերելով, որ<sup>k</sup> այս շարժութիւնն են: Յորում ստորոգութիւն<sup>l</sup> տեսանին զարութիւն<sup>m</sup>, յիրաւի է տեսանել ի նոսա և շարժութիւն: Իսկ յորքանս ոչ տեսանին զարութիւն, անդ և ոչ շարժութիւն է: Եւ տեսանի ի գոյացութիւն, ի ֆանակ, ի յորակ, ի ստորոգութիւն<sup>n</sup>: Զգոյութիւն՝ ծնունդն<sup>o</sup> բերման<sup>p</sup>, և է ի գոյացու-

<sup>a</sup> F + Յանկարծակի և ընդ

<sup>b</sup> F *տողից վեր* ազգ *և ի լուս.* ազգ է, որոց ծնունդն ասի տիրապէս, որ երկու ի մի և նոյն ժամ ծնանին, և նոյն ժամանակի, որպէս երկու ծնեալ ի միում բոպկի

<sup>c</sup> F *չիք* և ընդ միմեանս

<sup>d</sup> Dial. 44.8 τοῦ προτέρου

<sup>e</sup> Dial. 44.10-11 + Τρίτον σημαίνόμενον τῶν ἅμα τὰ ἀντιδιηρημένα εἶδη

<sup>f</sup> F *փոքր ուղղված* աղօտ

<sup>g</sup> F շարժութիւն

<sup>h</sup> F *միշտ ուղղված* ազգ կատարելութիւն

<sup>i</sup> F գոլ

<sup>j</sup> Dial. 45.3 *չիք*

<sup>k</sup> E + և

<sup>l</sup> F արդ յորքան յասեալն *ուղղված* ազգ յորում ստորոգութիւնն

<sup>m</sup> E + արդ որքան յասացեալն տեսանին զօրութիւն

<sup>n</sup> E *տողից վեր* ի յորն յոր

<sup>o</sup> F զգոյութեանն ծննդեան

<sup>p</sup> F + յորն յոր և է | Dial. 45.9 *չիք* Զգոյութիւն՝ ծնունդն բերման

թինն լինելություն և ապականություն<sup>a</sup>, ի ֆանակի՝ անողին և պակասություն, յորակություն՝ տարբերություն, փոփոխություն, իսկ<sup>b</sup> յուրն՝ շրջագայություն, որ կոչի շրջաբերություն, և ուղղաշարժ, որ կոչի ուղիղ գնացություն: Վասն այսորիկ ուղիղ շարժմանն տարբերութան եղիցին<sup>c</sup> վեց՝ վեր, վար, յետ, յառաջ<sup>d</sup>, ներս, դուրս, յաջ, յահեակ: Վասն որոյ զկնի պարառութեանն է. տեղական շարժումն իցեն, զի ամենայն փոփոխական բերմունք կամ ինքն ինքեամբ փոփոխի, կամ յորոց ի նմա են ինչ, կամ յայնց<sup>e</sup>, որ արտաբոյ իւր են: Եւ որ ըստ ինքեան<sup>f</sup>, առնէ ծնունդ<sup>g</sup> և զապականություն<sup>h</sup>, իսկ ի ձեռն այնոցիկ, որ յինքն են, կամ ֆանիստութեամբ, առնէ զանողին և զնուագութիւն<sup>i</sup>, իսկ<sup>j</sup> որպէսութեամբ առնէ<sup>k</sup> զտարբերություն<sup>l</sup>, իսկ եթէ<sup>m</sup> այնոքիւմ, որ արտաբոյ նորա են, առնէ զտեղական փոփոխումն: Վասն զի տեղիք ոչ այն է, որ շարժին, և ոչ այլ, յորոց ի նմա են, այլ յարտաբոյնոցն ունի զշարժություն և ինքն արտաբոյ է շարժելոյն և առաւել շարժելովն իցէ<sup>n</sup>:

Տարբերություն իսկ ծննդեան և ապականութեան. այլ բաժանին լինելություն և ապականություն<sup>o</sup>, զի լինելություն յոչէիցն լինի և գա ի լինելություն. ֆանգի որ<sup>p</sup> ոչ էր նախ, եղև յետոյ: Իսկ ապականություն սորին ընդդէմ շրջափակի՝ յետքենէ յանէություն փոփոխելով: Իսկ անողին<sup>q</sup> և նուագություն. վասն զի անողին՝ ի մեծագոյն կոյս շարժություն, իսկ<sup>r</sup> նուագություն<sup>s</sup> առ սակաւն վայրագայիլ<sup>t</sup>: Իսկ դարձեալ տարբերութիւնն զներհակն ախտաբ,

<sup>a</sup> E չիք և ապականություն

<sup>b</sup> F + առ

<sup>c</sup> F իցեն

<sup>d</sup> Dial. 45.13 չիք յետ, յառաջ

<sup>e</sup> Dial. 45.15-16 + έν αὐτῶ ἢ κατὰ τι τῶν

<sup>f</sup> որ ըստ ինքեան // F ըստ ինքեան ով

<sup>g</sup> F + լինել

<sup>h</sup> F + ելն

<sup>i</sup> F նուագություն

<sup>j</sup> EFHI + ի ձեռն այնոցիկ որ յինքն են կամ ֆանիստութեամբ կամ

<sup>k</sup> F + իցէ

<sup>l</sup> F + փոփոխություն

<sup>m</sup> EF (լուս.) HI + յաղագս ինքեան առնէ՝ ըստ տեղեացն փոփոխումն

<sup>n</sup> յարտաբոյնոցն ունի զշարժություն և ինքն արտաբոյ է շարժելոյն և առաւել շարժելովն իցէ // Dial. 45.20-21 ἀλλὰ τοῖς κινουμένοις παρέπεται καὶ περὶ τὰ κινούμενά ἐστι

<sup>o</sup> F ուղղված ազգ. առաւել շարժ լինելովն իցէ տարբերություն իսկ ծննդեան և ապականութեան

<sup>p</sup> F չիք

<sup>q</sup> F անություն

<sup>r</sup> E + և

<sup>s</sup> F + է

<sup>t</sup> Dial. 45.26 չիք

դարձեալ հակառակ պատահմունք տեսանին<sup>a</sup> ջերմութիւն, ցրտութիւն, սպիտակութիւն, սևութիւն: Այսուհետև հակառակ կայ լինելութեան ապականութիւն և անման նուագութիւն, իսկ տարբերութեան հակառակքն՝ և հանդարտութիւն: Հակառակ է իբրև ջերմացուցանել և ցրտացուցանել<sup>b</sup>, զի յորժամ սահման առնու ջեռուցեալն և հասանէ ի վայրս կատարեալ ջերմութեանն, հանդարտի և դադարէ ի ջերմանալոյն: Սապէս և ընդ տեղեալ փոփոխմանն<sup>c</sup> ընդդիմանայ<sup>d</sup> հակադարձ ելով շարժութիւն և հանդարտութիւն. հակառակ ելով<sup>e</sup> իբրև այն ինչ վերինն շարժութիւն՝ ներքնոցս իսկ հանդարտութիւն. զի եթէ ձգեսցէ ոք<sup>f</sup> քար ի վերինս կոյս, ոչ վաղվաղակի սկսանի շարժել ի վերուստ<sup>g</sup> ի վայր կոյս, մինչև ոչ հանդարտէ ի վեր կոյսն<sup>h</sup>: Իսկ երկնային շարժութիւն ոչ է հակառակ շարժութիւն, վասն զի այլոց շարժութեանց փոփոխմանց կարծելի է հետևող լինել այլոց շարժմանց: Եւ զի լինելոյ և ապականելոյ և անել և նուագելն և պակասել և տեղուջէ ի տեղի շարժել<sup>i</sup> ամենայնիւ այլայլեսցէ, ստուգապէս հետևեսցի փոփոխումն: Իսկ<sup>k</sup> բնական շարժութիւն ի վերայ ծննդեան և ապականութեան, անման և նուագութեան: Ի վերայ բնական շարժութեանց թէպէտ և հետևեալ տեսանի այլոց շարժութեանց, այլ այնպէս կարողութիւն է փոփոխել, այլ ոչ շարժել այլոց այլում<sup>m</sup> շարժութեամբ, որպէս և տեսեալ եղև<sup>n</sup> ի վերայ քարի: Վասն զի այս ջեռնու և ցրտանայ և ոչ անէ և ոչ պակասի<sup>o</sup>. և ի վերայ այլոց նոյնպէս: Զի թէպէտ և ունին զփոփոխելին գոլ այլոց շարժութեամբն, այլ այնպէս

<sup>a</sup> Dial. 45.27 չիք դարձեալ հակառակ պատահմունք տեսանին (*հին թարգմանութան բեկոր է, որ հետևում է խմբագրված տարբերակին*)

<sup>b</sup> Dial. 45.29 + ἡρεμία τε

<sup>c</sup> F փոփոխմանէն

<sup>d</sup> F + իսկ ներհակ շարժութիւն, որպէս ի վեր շարժի և ի վայր

<sup>e</sup> F հակառակութիւն

<sup>f</sup> E ոք ձգեսցէ

<sup>g</sup> Dial. 45.34 չիք ի վերուստ

<sup>h</sup> Dial. 45.34 չիք ի վեր կոյսն

<sup>i</sup> E անելո և նուագելո և տեղուջէ ի տեղի շարժելոյ

<sup>j</sup> Dial. 45.37-38 չիք ստուգապէս հետևեսցի փոփոխումն (*խմբագրված տարբերակն է, իսկ նախնականն է ամենայնիւ այլայլեսցէ*)

<sup>k</sup> F չիք

<sup>l</sup> Dial. 45.38 չիք Իսկ բնական շարժութիւն ի վերայ ծննդեան և ապականութեան, անման և նուագութեան

<sup>m</sup> F այլոց

<sup>n</sup> Dial. 45.40 չիք տեսեալ եղև

<sup>o</sup> Dial. 45.41 γίνετα

կարողութիւն է, զի ինքն ինքեամբ ուրոյն տեսանելի լինիցի. որով և<sup>a</sup> խոստովանեսցի նմա տարբերութիւն և բաժանումն նոցա:

Իսկ շարժումն ասէ Արիստոտելէս զփոփոխմունս, զի ի հինկերորդ բանս իւր, որ վասն բնական խողութեանց արար, ցուցեալ է, եթէ ծնունդ և ապականութիւն փոփոխմունք են, այլ շարժութիւն ոչ են: Վասն զի շարժումն կացելոց իրաց լինի: Իսկ<sup>b</sup> թէպէտ<sup>c</sup> գտարբերութիւնն և գտեղոջէ ի տեղի զշրջելն ասեմք երկուս հակառակս լինել և յետսընդդէմ<sup>d</sup> զշարժութիւն և զհանդարտութիւն, գիտասցես, եթէ ոչ անկար է այլ և այլ գոլ ի միասին լինել երկուս հակառակացն: Վասն զի հանդարտութիւն որպէս ունակութիւն<sup>e</sup> և պակասութիւն է, իսկ հակառակք են ստուգիւ՝ որպէս զջերմութեանն ցրտութիւն<sup>f</sup>:

### ԽԶ. Վասն ունելոյ<sup>49</sup>:

Ունել ըստ ութ յեղանակաց<sup>g</sup> ասի՝ զի [ա.] կամ իբրև զշինուած և զազգ, այլ որակութիւն, քանզի ասեմք ունել զմակացութիւն<sup>h</sup> և զառաքինութիւն, [բ.] կամ իբրև զքանիականութիւն, վասն զի ասէր երիս կանգունսն<sup>i</sup> մեծութիւն ունել<sup>j</sup>, [գ.] կամ իբրև վասն գոյացութեանն զգոյութիւն, որ է ազգային ազգ. իսկ այս՝ [դ.] կամ ամենայն մարմնոյն իբրև զհանդերձ, [ե.] կամ մասին ինչ անձին, իբր զմատանի ի մատին գոլ, [զ.] կամ իբրև զմասն ինչ<sup>k</sup> (վասն զի ասեմք ունել ձեռին), [է.] կամ իբրև յանաւթ ինչ, իբրև ասեմք զգինի ունի ի կարաս, [ը.] կամ իբրև զստացուած<sup>l</sup>, զի ասեմք, եթէ ունի ոմն տուն կամ ագարակ, այլ ասեմք և կին ունել և կնոջ այր ունել: Այլ աստար թոյի յունելոյ այլ տեսակ, զի յետսընդդէմ է, զի ոչ ինչ նշանագրեաց զմեծութիւն ունելոյն զառն կնոջ և զկնոջ առն, զի ոչ ումեք տիրէ միոյն ունելն ի վերայ միւսոյն ունելոյ<sup>m</sup>, այլ հաւասարապէս<sup>n</sup> ունել ասի: Զի եթէ ստացողն ունի զստա-

<sup>a</sup> F չիք

<sup>b</sup> F չիք

<sup>c</sup> F + և

<sup>d</sup> Dial. 45.49 չիք

<sup>e</sup> Dial. 45.51 λήξις

<sup>f</sup> EHI զջերմութիւն ցրտութեան

<sup>g</sup> F ութ ազգ ուղղված ըստ յեղանակաց

<sup>h</sup> F զհամակացութիւն

<sup>i</sup> F ասէ և էր իսկ անգունսն

<sup>j</sup> Dial. 46.4 + τὸ ξύλον

<sup>k</sup> Dial. 46.7 ἐν ὄλω

<sup>l</sup> F ստացուած

<sup>m</sup> Dial. 46.12 չիք ունելն ի վերայ միւսոյն ունելոյ

<sup>n</sup> Dial. 46.12 + καὶ ἀδιαφόρως



ցուածն և ստացուածն՝ զստացողն, և այս յետսընդդէմ, այլ ոչ որպէս այր զկին տիրաբար ունի, նոյնպէս<sup>a</sup> և կին զայր. զի ստացողն տէր և ինքնիշխան<sup>b</sup> է ստացելոյն, և վասն այսորիկ<sup>c</sup> ստացողին ունել ասի զստացուածն, իսկ ստացուածն ոչ ունողն, այլ<sup>d</sup> ունելի: Այլ այս յայտ է, զի ունելի յարանունութեանց է:

Իսկ ունանք զայն տարբերիլ<sup>e</sup> ասեն զունելն, որքան և<sup>f</sup> զառնելն և զկրելն, որքան<sup>g</sup> ունի պատահումն և լինելութիւն<sup>h</sup>: Զի որպէս անդ գործողին և հասու եղեալն կամ շնչատուր են կամ անշունչ, նոյնպէս և աստ կամ շնչատուր գոյ ունող և<sup>i</sup> ունելի, կամ անշունչ: Ո՞րպէս և յո՞րպիսեաց<sup>j</sup> բաժանեալ ազգաց լինիցին սոցա բաժանմունք: Արդ զիա՞րդ տարբերական ազգք ի յինքեանս տարբերական եղիցին<sup>k</sup>: Այլ ասելի է, եթէ ունող լինել կամ կատարեալ անձին է կամ կողման միոյ, որպէս և դիպի, զի<sup>l</sup> զունելն կամ յաղագս բոլորի մարմնոյն է կամ յաղագս մասանց, և դարձեալ այս կամ մասն, կամ բոլորն<sup>m</sup>:

**Խէ. Վասն ճառելոյ եւ անճառելոյ, որ է այո եւ ոչ<sup>50</sup>:**

Պարտ է գիտել, զի յառաջասացութիւն եւ յետասացութիւն յետասացութիւն<sup>n</sup> կոչի: Եւ առաջասացութիւն՝ որ է ճառելի և այոյ<sup>o</sup>, այսպէս նշանակէ, թէ զինչ է ունեմ, այսինքն՝ թէ զինչ ոք է, իբրև «Սոկրատ իմաստուն է», «Սոկրատ շրջի»: Իսկ յետասացութիւն<sup>p</sup> անճառի և ոչ<sup>q</sup>, զայս նշանակէ, թէ

<sup>a</sup> Dial. 46.14 չիք տիրաբար ունի, նոյնպէս

<sup>b</sup> Dial. 46.15 + και κυριώτατον

<sup>c</sup> Dial. 46.15 + μάλλον

<sup>d</sup> Dial. 46.16 չիք ոչ ունողն, այլ

<sup>e</sup> F բաժանմունս ուղղված տարբերութիւն

<sup>f</sup> F չիք

<sup>g</sup> F չիք

<sup>h</sup> Dial. 46.19 չիք որքան ունի պատահումն և լինելութիւն

<sup>i</sup> F կամ

<sup>j</sup> Dial. 46.21 չիք յո՞րպիսեաց

<sup>k</sup> Dial. 46.21 չիք F ի լուս. Արդ զիա՞րդ տարբերական ազգք (F ազգ) ի յինքեանս տարբերական (F տարբերականք) եղիցին (խմբագրված տարբերակն է, որ հաջորդում է բուն թարգմանութեանը)

<sup>l</sup> Հուն. չիք կամ կատարեալ անձին է կամ կողման միոյ, որպէս և դիպի, զի (նախնական տարբերակն է, որ նախորդում է խմբագրվածին)

<sup>m</sup> F ի լուս. Զի զունելն կամ յաղագս բոլոր մարմնոյն է կամ յաղագս մասանց, և դարձեալ այս կամ մասն կամ բոլորն | մասն կամ բոլորն // Dial. 46.23 άμυντήριον έστιν ή κόσμος

<sup>n</sup> F յետասացութիւն

<sup>o</sup> Dial. 47.3 չիք որ է ճառելի և այոյ

<sup>p</sup> F յետասացութիւն

<sup>q</sup> Dial. 47.5 չիք անճառի և ոչ

զինչ թէ ոմն, այսպէս թէ՛ ոչ է և ոչ<sup>a</sup> ոք, իբրև թէ «այս ոմն ոչ իմաստուն է» և «ոչ շրջի»: Այլ զի ամենայն ճանաչեաց հակառակ է ոչ ճանաչիմ, և ամենայն ոչ ճանաչոյն ճանաչիմ դիմահարի, վասն այսորիկ յառաջախաւսութիւն<sup>b</sup> կոչեսցի: Այլ զայս գիտել պարտ է, եթէ<sup>c</sup> հարկ է, զի մինն ստեսցէ և միսն ճշմարտաբանեսցէ յաղագս բացայայտութեանց<sup>d</sup>:

**ԽԸ. Վասն սահմանի եւ յառաջադիմութեան եւ ներհարեալ խորհրդոց<sup>e</sup>:**

Գիտել պարտ է, եթէ առաջի եղեալ կայ կարծիս ինչ բանատրին զներգործութիւն ուղղանել և յարգել զլինելութիւն<sup>e</sup>: Իսկ յայտնութիւն նորա ներհարեալ խորհուրդ է: Իսկ ներհարեալ խորհուրդ ժողովեալ է յերկուց ճշմարիտ յառաջադրութեանց և կատարմանց, իբրև զայն զի կամիմ յայտնել, եթէ «անձն անմահ է», և ասեմ՝ «ամենայն մշտաշարժ անմահ է»: Այս յառաջադրութիւն է: Եւ ասպա ասեմ զերկուրդ յառաջադրութիւն՝ «անձն մշտաշարժ է», և զկնի այսորիկ զկատարումն, եթէ «անձն ուրեմն անմահ է»: Իսկ իւրաքանչիւր յառաջադրութիւն ի սահմանաց ժողովեալ է, զի իւրաքանչիւր բառ յառաջադրութեան սահման կոչի: Վասն զի սահման է, առ որս լուծանի յառաջադրութիւն: Որպէս և այն յառաջադրութիւն է, եթէ «ամենայն մշտաշարժ անմահ է». և արդ «ամենայն» սահման կոչի, որպէս զմասն ինչ յառաջադրութեան, և «մշտաշարժ» նոյնպէս<sup>f</sup> սահման ասի, և «անմահ գոլ» սահման կոչեսցի<sup>g</sup>:

Եւ զայս գիտել պարտ է, եթէ սահման զսահմանադրեալն նշանակէ և զսահմանումն և զկատարումն իրին, իբրև այն, զի սահման կան կոչի կատարումն իւր և թիւ, որ սահման է ումեքն, անուանի սահման և առ որ լուծանի յառաջադրելին, այսինքն՝ մի կողմ յառաջադրելոյն, որպէս ասացաւ<sup>h</sup>:

<sup>a</sup> Dial. 47.5 չիք

<sup>b</sup> վասն այսորիկ յառաջախաւսութիւն // Dial. 47.8-9 απόφασις ή αντίκειμένη τή καταφάσει και ή κατάφασις ή αντίκειμένη τή άποφάσει αντίφασις

<sup>c</sup> Dial. 47.9 չիք այլ զայս գիտել պարտ է, եթէ

<sup>d</sup> Dial. 47.10 չիք F ի լուս. յաղագս բացայայտութեանց

<sup>e</sup> առաջի եղեալ կայ կարծիս ինչ բանատրին զներգործութիւն ուղղանել և յարգել զլինելութիւն // Dial. 48.2-3 σκοπόν έχει ή λογική πραγματεία περι τής άποδείξεως

<sup>f</sup> F այսպէս

<sup>g</sup> Dial. 48.12 και τὸ ‘έστιν’ ὄρος λέγεται

<sup>h</sup> սահման զսահմանադրեալն նշանակէ և զսահմանումն և զկատարումն իրին... մի կողմ յառաջադրելոյն, որպէս ասացաւ // Dial. 48.13-14 δεί τās προτάσεις άληθείς είναι και τὸ συμπέρασμα άκολουθείν ταίς προτάσεσιν

Պարտ է գիտել, եթե<sup>a</sup> յորժամ գտանիցի մի ի յառաջադրելոցն սուտ գոլ, որ է կատարելութիւն արտադրեալ, թիւ խորհուրդ է այն և ոչ նեխադրեալ խորհուրդ:

Աստուած է մշտնջենատր գոյութիւն և անփոփոխելի և արարիչ ամենայն էիցս՝ բարեպաշտ մտամ երկրպագեալ: Աստուած է հայր, որ և անծին է, որպէս ոչ յումեմէ ծնեալ, իսկ ծնող որդոյ մշտնջենատրի: Աստուած է Որդի, որ էր միշտ ընդ հար և առ հայր, անժամանակ և մշտնջենատր, անխզելի և անախտ, անտանելի և անմեկնելի ի նմանէ ծնեալ: Աստուած է Հոգին Սուրբ, սրբողական զօրութիւն, ինքնանձնատր, անմեկնելի, համագոյ Հար և Որդոյ: Բան է էական միշտ և գոյով ընդ Հար: Բան է ներփառեալ ի սրտի խորհել: Եւ դարձեալ բան է քարոզ մտածութեան: Եւ առաջնոյն ասեն գոյական և անձնատր, իսկ երկրորդին՝ ներփառեալ, իսկ երրորդին՝ ձայնատր բան լեալ: Հոգի չորս ազգ իմանալի է՝ հոգի է Հոգին սուրբ Աստուած, հոգի է և հրեշտակ բարեբար, հոգի է և դև՝ չար հոգի, հոգի է և անձն մարդոյ. է երբեմն, զի և միտք հոգի կոչի, և հոգի շնչատր օդ<sup>52</sup>:

**ԽԹ. Վասն անձնական միատրութեան հոգոց<sup>53</sup>:**

Պարտ է գիտել, եթէ առանձնատրութեամբ միատրութիւն զմի անձն խառնեալ կատարէ զմիատրելոցն կենդանի պահողն գոլ նոցա ի միասին և ի միութիւն<sup>b</sup> ժողովելոցն<sup>c</sup> և բաժանելութեան<sup>d</sup> նոցա և բնական ինքնութեան<sup>e</sup> նոցա<sup>f</sup> անխառնակելեաց և անբաժանելեաց յանձն իւր լինել: Իսկ նա ինքն և ոչ մի ինչ ունի սեռական, այս ինքն անձնական բաժանմունս: ՅՎասն իւր լինիցին իւրաքանչիւրոցն ի մի ժողովելոցն տպատրական բաժանմունքն<sup>h</sup>, որով բաժանի իւրաքանչիւրն յիւրումն համատեսակէն, և որպէս ի վերայ հոգոյ և մարմնոյ տեսանի: Վասն զի մի ի յերկուցն կատարեցի<sup>i</sup> Պետրոսի կամ<sup>j</sup> Պաղոսի խառնեալ անձն, այլ պահէ յինքն երկուս կատարեալ բնութիւնս՝ զհոգոյ և զմարմնոյ, և զբաժանմունս նոցա անխառնակաբար և<sup>k</sup>

<sup>a</sup> Dial. 48.14 չիք Պարտ է գիտել, եթէ  
<sup>b</sup> J միասին  
<sup>c</sup> Dial. 50.4 φύσεις  
<sup>d</sup> F բաժանել EH բաժանման  
<sup>e</sup> FH յատկութեան  
<sup>f</sup> E չիք և բնական ինքնութեան նոցա  
<sup>g</sup> J + որ  
<sup>h</sup> F բաժանմունսն J բաժանմունք  
<sup>i</sup> F կատարեցի  
<sup>j</sup> Պետրոսի կամ // J որպէս ի Հոռոմ  
<sup>k</sup> Dial. 50.12 + φυσικὰ

զյատկութիւնս նոցա անշփոթաբար<sup>a</sup>: Եւ ունի յինքն զերկուցն տպատրական յատկութիւնսն՝ զհոգոյ և զբաժանողս նորին յայլ<sup>b</sup> հոգոց, և<sup>c</sup> զմարմնոյ և զբաժանողս նորա յայլոց<sup>d</sup> մարմնոց, ոչ ուրեք հեռացուցանելով զհոգին ի մարմնոյն, այլ միատրութեամբ և առադրութեամբ<sup>e</sup> ի նմա, վասն զի յանկարծակի ընդ խառնելն նոցա մի<sup>f</sup> ի նոցանէ խառնեալ անձն ժողովեալ բաժանեալ գոյով յայլոց ամենայն հոմաստեոից<sup>g</sup> և տեսակցաց իւրոց<sup>h</sup> անձանց: Այլ որովհետև միանգամայն ընդունին բնութիւնքն զառանձնութեամբ առ միմեանս<sup>i</sup> և ընդ միմեանս զմիատրութիւնն, անբաժանելի կան մշտնջենատր: Զի թէպէտ և բաժանի հոգին ի մարմնոյն ի մահու անդր, այլ մի և նոյն է անձն երկոցունցն, վասն զի անձն է սկիզբն իւրաքանչիւրոցն<sup>j</sup> էութեան՝ առ նա խառնեալ գոյով: Եւ կան հոգին ևս և մարմին՝ մշտնջենատրապէս ունելով զմի և զնոյն սկիզբն էութեան իւրում<sup>k</sup> զանձնատրութիւն սեռի, թէպէտ և բաժանին ի միմեանց:

Եւ զայս ի միտ առնուլ պարտ է, թէ բնութեանցն առ միմեանս անձնատրութեամբ միատրութիւն կարողութիւն է<sup>k</sup>, որպէս և ի մարդն տեսանի<sup>l</sup>, զի զբնութիւն առնուլ ի մարմնոյն<sup>m</sup> և ի նմա անձնատր լինել կարելի է, որք և ի Քրիստոս Տէրն<sup>n</sup> տեսանին երկոքինն (զի ի նմա բնութիւնքն՝ աստուածային և մարդկային, միատրեցան, և ի նախագոյ անձն Բանին Աստուծոյ անձնատր եղեն հոգևոր իւր<sup>o</sup> մարմին, և զնա ունէր անձն), իսկ յերկուց բնութեանց մի բնութիւն խառնեցեալ կատարեալ լինել կամ յերկու անձնէ մի անձնատրութիւն ամենևինն անհնար է: Յաղագս այսորիկ զի ոչ գոյ հնար հակառակացն գոյութեամբ<sup>p</sup> բաժանմանցն ի մի բնութիւն ի միմեանս բնակել, զի այս գործ հեռացուցանէ ի միմեանց զբնութիւնսն, յորում և տե-

<sup>a</sup> F անշփոթաբար

<sup>b</sup> EFHI չիք

<sup>c</sup> IJ չիք

<sup>d</sup> J յայլ

<sup>e</sup> EFH առդրութեամբ

<sup>f</sup> I չիք

<sup>g</sup> EFI համաստեոից

<sup>h</sup> EHI տեսակակցաց F տեսակակց ուղղված տեսակաց | հոմաստեոից և տեսակցաց իւրոց  
// Dial. 50.17 ὁμοειδῶν

<sup>i</sup> Dial. 50.18 չիք առ միմեանս

<sup>j</sup> J իւրոց

<sup>k</sup> J չիք

<sup>l</sup> Dial. 50.26 չիք

<sup>m</sup> Dial. 50.26-27 ὑπὸ ὑποστάσεως

<sup>n</sup> Dial. 50.27 չիք

<sup>o</sup> H հոգևորն իւրն

<sup>p</sup> I բնութեամբ

սանի<sup>a</sup>: Եւ դարձեալ անկարելի է միանգամ ուրոյն առանձնացելոց զայլ սկիզբն առանձնատրութեան<sup>b</sup> ունել: Վասն զի անձն ինքն ինքեամբ էութիւն է ուրոյն: Այլ զայս գիտեա, եթէ ի վերայ սուրբ երրորդութեանն անձն է անսկիզբն ազգ իւրաբանչիւր<sup>c</sup> նոցա մշտնջենատր էութեանն<sup>d</sup>:

Այլ զայս պարտ է գիտել, զի յորժամ խառնեալ բնութիւն լինիցի, ժամանակակից պարտ է լինել իւրաբանչիւր<sup>e</sup> կողմանց<sup>f</sup> և յայլոյ այլ ինչ կատարել՝ ոչ պահելով զիւրն է<sup>g</sup>, այլ փոփոխելով<sup>h</sup> և այլայլելով նոցա, յորոց ժողովեցան, որպէս ի շորից նիւթից<sup>i</sup> ժողովեալ մարմին այլ իմն եղև յայլոց, և ոչ հուր կատարեալ, և ոչ յայլոցն ի նոցանէ ոմն է կամ կոչի, և որպէս ի ձիոց և յիշուց կողմնաէշ<sup>j</sup> լեալ, և ոչ ձի և ոչ էշ է կամ կոչի, այլ յայլոց այլ, ոչ որոց<sup>k</sup> ի նոցանէ, յորոց է և խառնեցաւ, զմիոյ պահելով անխառն եւ անշփոթ գորակութիւնն<sup>l</sup> 54:

<sup>a</sup> Dial. 50.34 ὑπάρξουσι

<sup>b</sup> I չիբ

<sup>c</sup> ազգ իւրաբանչիւր // J ազգատր

<sup>d</sup> մշտնջենատր էութեանն // EH մշտնջենատրութեանն

<sup>e</sup> FHI իւրաբանչիւրոց Dial. 50.40 չիբ

<sup>f</sup> HI կողմանցն

<sup>g</sup> Dial. 50.40 չիբ զիւրն է

<sup>h</sup> FHI փոփոխելի ելով

<sup>i</sup> EFHI նիւթոց

<sup>j</sup> J կողմնաէշս

<sup>k</sup> J որոյ

<sup>l</sup> Dial. 50.45 չիբ

**ՀԱՎԵԼՎԱԾ**

**ԳՐԻԳՈՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑՈՒ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ**

## Առաջաբան

*Բանբեր Մատենադարանի*-ի 2-րդ համարում հրատարակած «Զենոնի Յաղագս բնութեան երկի հայերեն թարգմանությունը» բնագրի առաջաբանում Լ. Խաչիկյանը հիշատակում է մեր ձեռագրերում առկա մեկ այլ փիլիսոփայական բնագիր՝ «Սահմանֆ փիլիսոփայականֆ», որում, Պլատոնի և Արիստոտելի հետ մեկտեղ, մեջբերվում է ստոիկյան փիլիսոփա Զենոնի մի կարծիք<sup>1</sup>:

Հետագայում Ս. Արևշատյանը հրատարակեց այդ փոփոխված անունն փիլիսոփայական բնագիրը՝ ռուսերեն թարգմանությամբ, իսկ նրանից առաջ՝ էլ ավելի փոփոխված մի բնագիր «Ճարտասան» վերնագրով<sup>2</sup>: Արևշատյանը ենթադրել է, որ դրանք թարգմանություն են հունարենից. ինչպես կոեսնենֆ ստորև, միանգամայն ճիշտ է որակել այդ բնագրերը: Նա նաև դրանք բնորոշել է որպես ուսուցողական գրականության հազվագյուտ նմուշներ, քանի որ համառոտ են և բաղկացած են առանձին, միմյանց հետ չկապակցված հասկացությունների սահմանումներից, շունեն ներածություն, անհրաժեշտ եզրակացություններ, բացատրություններ, գուրկ են մանրամասնումներից:

Արևշատյանը փաստում է, որ երկու բնագրերը մաս են կազմում «Գրիգորի Երուսաղեմացոյ Սահմանֆ զանազանֆ արտորոշեալֆ ըստ սրբոց ի ծայրագոյն վարդապետաց յաղագս տարբերական և այլ և այլ անուանց» բանաբաղ աշխատության<sup>3</sup>, որը համարում է ժԲ. դարի գործ, և թվարկում է այն պարունակող հետևյալ ձեռագրերը՝ ՄՄ 3082 (1267 թ.), 431ա-451բ, ՄՄ 4166 (ժԳ-ժԴ դդ.), 242բ-244բ, ՄՄ 5254 (1280 թ.), 210բ-228բ, ՄՄ 1980 (1391 թ.), 269ա-286ա, ՄՄ 464 (ժԷ դ.), 189ա-224ա, ՄՄ 2269 (ժԸ դ.), 10ա-34բ, ՄՄ 7151 (ժԿ դ.), 45բ-55բ, ՄՄ 8132 (ժԿ. դ.), 177բ-180բ:

«Սահմանֆ փիլիսոփայականֆ»-ի մի համառոտ տարբերակ հրատարակել ենք նաև մենք՝ ՄՀ-ի Ի հատորում Պավլիայի համալսարանի գրադարանի (Pavia, Bibliotheca Universitaria)՝ ժԲ-ժԴ դդ. Ms. Aldini 178 ձեռագրի

<sup>1</sup> Լ. Խաչիկյան, «Զենոնի «Յաղագս բնութեան» երկի հայկական թարգմանությունը», *Բանբեր Մատենադարանի* 2, 1949 (էջ 65-80), էջ 70:

<sup>2</sup> С.С. Аревшатын, «Два древних философских фрагмента – ‘Ритор, о природе’ и ‘Философские определения’,» *Բանբեր Մատենադարանի* 5, 1960, էջ 371-391:

<sup>3</sup> Անդ. էջ 373:

գրից (թթ. 114բ-116բ)<sup>1</sup>, որտեղ այն թերի է պարունակում է բնագրի մոտ կեսը (ընդհատվում է 58-րդ սահմանման մեջտեղում) և անմիջապես հետևում է Հովհան Դամասկացու «Դիալեկտիկայի»՝ հունարենից Բագարաս Մամիկոնյանի թարգմանած սկզբից թերի բնագրին (թթ. 110ա-114ա): Որպես Արիստոտելի «Կատեգորիաների» անանուն և թերի մեկնություն մենք հրատարակեցինք այն ՄՀ-ի նույն հատորում<sup>2</sup>: Բացի այդ ՄՀ-ի նույն հատորում մենք հրատարակեցինք ևս մի անանուն գրված՝ «Սահման իմաստասիրական իբր հարցմամբ»<sup>3</sup>, որը նույնպես փիլիսոփայական սահմանումների մի շարք է, սակայն երեք անգամ ավելի ընդարձակ (ՄՀ-ի 19 էջ՝ «Սահման փիլիսոփայական»-ի թերի բնագրի 3 էջի դիմաց, այսինքն՝ ամբողջական բնագիրը կկազմեր մոտ 6 էջ), և սահմանումները դասավորված են այբբենական կարգով: «Սահման իմաստասիրական իբր հարցմամբ» վերնագիրը հեշտ չէ բացատրելը, քանի որ երկը բաղկացած է սահմանումներից, այլ ոչ հարց ու պատասխաններից: Այն կազմվել է հավանաբար ԺԳ. դարում, քանի որ այն պարունակող ամենավաղ ձեռագիրը՝ ՄՄ 6897, ընդօրինակված է 1330 թ.:

Մենք ուսումնասիրեցինք «Գրիգորի Երուսաղեմացոյ Սահման գանազան արտորոշեալ ըստ սրբոց ի ծայրագոյն վարդապետաց յաղագս տարբերական և այլ և այլ անուանց» ժողովածուի ձեռագրերը: Երեք ձեռագիր՝ ՄՄ 464 (ԺԷ դ.), ՄՄ 2269 (ԺԸ դ.) և ՄՄ 3082 (1267 թ.), այդ վերնագրի տակ պարունակում են հետևյալ միավորները՝

«Յաղագս տարբերական և այլ և այլ անուանց» – ՄՄ 464, թ. 189ա, ՄՄ 2269, թթ. 10ա-բ, և ՄՄ 3082, թ. 431ա՝ «Աստուած» հասկացության երեք սահմանում է (սույն հավելվածի բնագիր Ա.1):

«Հարցմունք կարճառատաբար» – ՄՄ 464, թթ. 189ա-194բ, ՄՄ 2269, թթ. 10բ-13բ, և ՄՄ 3082, թթ. 431ա-434ա: Այս բնագրի մեծ մասը բաղկացած է Դավիթ Անհաղթի «Սահման իմաստասիրութեան»-ից առանձին ֆաղվածքներից, համարյա միշտ՝ բառացի, իսկ վերջին՝ մոտ մեկ ֆառորդը կազմող հատվածը աստվածաբանություն է՝ աստծո հատկանիշների բացահայտում

<sup>1</sup> Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԳ դար, «Յաւելուած՝ Դավիթ Անյաղթին վերագրուող և նրա անուանն առնչուող գրուածքներ», Երևան, 2014, էջ 745-747:

<sup>2</sup> Այդ մեկնությունն ամբողջապես սույն գրքում գետեղված առաջին բնագիրն է:

<sup>3</sup> Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԳ դար, «Յաւելուած՝ Դավիթ Անյաղթին վերագրուող և նրա անուանն առնչուող գրուածքներ», էջ 763-782:



փիլիսոփայական եզրերի առատ կիրառությամբ, որի ծագումը սակայն դեռևս պետք է պարզել (*սույն հավելվածի բնագիր Ա.2*):

«Արիստոտելի Արդ գոլ գլխակն» – ՄՄ 464, թթ. 194բ-198ա, ՄՄ 2269, թթ. 13բ-16ա, և ՄՄ 3082, թթ. 434ա-436ա, որ առանձին կրճատումներով այլ ձեռագրերում Դավիթ Անհաղթին վերագրված բնագիրն է, որն իրականում այդ խոսքերով սկսվող հատված է Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» երկի թարգմանությունից և անանուն մեկնությունից՝ այսպես կոչված «Պերիարմենիաս»-ից<sup>1</sup> (սույն գրքում այս բնագիրը չենք ներկայացնում):

Մի բնագիր, որ առանց վերնագրի և ընդհատման շարունակում է «Արիստոտելի Արդ գոլ գլխակն»-ը՝ դա մի հատված է Դավիթ Անհաղթին վերագրված մեկ այլ՝ փիլիսոփայական բնագրից<sup>2</sup> – ՄՄ 464, թ. 198ա-բ, ՄՄ 2269, թ. 16ա, և ՄՄ 3082, թ. 436ա (սույն գրքում այս բնագիրը չենք ներկայացնում):

Մի անվերնագիր փիլիսոփայական հատված, որ սկսվում է այսպես՝ «Անձնատրոսին և առանձնատրոսին և դէմ և ենթակացութին մի են, և մի վասն այնորիկ են» – ՄՄ 464, թ. 198բ-199ա, ՄՄ 2269, թ. 16ա-բ, և ՄՄ 3082, թ. 436ա-բ (սույն գրքում այս բնագիրը չենք ներկայացնում):

Մի անվերնագիր փիլիսոփայական հատված, որ սկսվում է այսպես՝ «ԲՆՈՒԹԻՒՆ է, որ ի գոյացողականաց ոմանց բաղկանայ» – ՄՄ 464, թ. 199ա-201բ, ՄՄ 2269, թթ. 16բ-18ա, և ՄՄ 3082, թթ. 436բ-437բ (*սույն հավելվածի բնագիր Ա.3*):

Ս. Արեշատյանի հրատարակած «Ճարտասան» բնագիրը – ՄՄ 464, թթ. 201բ-202ա, ՄՄ 2269, թ. 18ա-բ, և ՄՄ 3082, թթ. 437բ-438ա (սույն գրքում այս բնագիրը չենք ներկայացնում<sup>3</sup>):

«Սահմանն փիլիսոփայականն» (այսուհետ՝ ՍՓ) – ՄՄ 464, թթ. 202ա-208բ, ՄՄ 2269, թ. 18բ-23բ, և ՄՄ 3082, թթ. 438ա-442բ (*սույն հավելվածի բնագիր Բ*):

<sup>1</sup> Տես Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԲ դար, «Յաւելուած՝ Դավիթ Անյաղթին վերագրող և նրա անունն առնչող գրութեան», էջ 655-659 [Մեկնութիւն Արդ գոլ գլխակն-ի]:

<sup>2</sup> Անդ, էջ 652-654 [Յաղագս հարկատրին և կարելոյն]:

<sup>3</sup> Ի տարբերություն հաջորդ բնագրերի, որոնք թարգմանություն են հունարենից, այս մեկնանոց բնագիրը հավանաբար գրվել է հայերեն, ինչի վկայություն է նրա առաջին նախադասությունը. «Ստուգարանի բնութիւն բանութիւն»:

«Բարոյականի յեղանակի սահման» (այսուհետ՝ *Բարոյական Ա.*) – ՄՄ 464, թթ. 208բ-210ա, ՄՄ 2269, թ. 23բ-24բ, և ՄՄ 3082, թթ. 442բ-443բ (*սույն հավելվածի բնագիր Գ*):

«Սահմանի իմաստասիրական միջակ» (այսուհետ՝ *ՍՄ*) – ՄՄ 464, թթ. 210ա-211բ, ՄՄ 2269, թ. 25ա-բ, և ՄՄ 3082, թթ. 443բ-444ա (*սույն հավելվածի բնագիր Գ*):

«Բանականի մասին սահման» (այսուհետ՝ *Բանական Ա.*) – ՄՄ 464, թթ. 211բ-213բ, ՄՄ 2269, թթ. 25բ-27ա, և ՄՄ 3082, թթ. 444ա-445բ (*սույն հավելվածի բնագիր Ե*):

«Մատուց մարմն» (այսուհետ՝ *Մարմն*) – ՄՄ 464, թթ. 213բ-214ա, ՄՄ 2269, թ. 27ա-բ, և ՄՄ 3082, թթ. 445բ (*սույն հավելվածի բնագիր Զ*):

«Յաղագս ամկոց վերջին գլուխ» (այսուհետ՝ *Տունկը*) – ՄՄ 464, թթ. 214ա-բ, ՄՄ 2269, թ. 27բ, և ՄՄ 3082, թթ. 445բ-446ա (*սույն հավելվածի բնագիր Ե*):

«Նիսացոյ» – ՄՄ 464, թթ. 214բ-215ա, ՄՄ 2269, թ. 28ա, և ՄՄ 3082, թթ. 446ա (*սույն հավելվածի բնագիր Ը*):

Երեւմեան ձեռագրում էլ նշվածներին հետևում է «Ի բժշկարանէն, յաղագս բնութեան մարդոյ» բնագիրը:

ՄՄ4166 (ԺԳ-ԺԴ դդ.) ձեռագրի թթ. 242բ-244բ-ում կարդում ենք «Սահմանի իմաստասիրաց Արիստոտելի», որ *ՍՓ* բնագրի մի սեղմած տարբերակ է:

Մեկ այլ ձեռագիր՝ ՄՄ 1980 (1391 թ.), պարունակում է «Սահմանի իմաստասիրական իբր հարցմամբ» (այսուհետ՝ *ՍԻԻԶ*) (թթ. 245ա-265ա), դատարկ էջեր (թթ. 265բ-268բ)<sup>1</sup> և վերը թվարկված բնագրերի մի մասը՝ «Ճարտասան» (թթ. 269ա-բ), *ՍՓ* (թթ. 270ա-278ա), *Բարոյական Ա.* (թթ. 278ա-280ա), *ՍՄ* (թթ. 280ա-281բ), *Բանական Ա.* (թթ. 282ա-284բ), *Մարմն* (թթ. 284բ-285ա), *Տունկը* (թթ. 285ա-բ), «Նիսացոյ» (թթ. 285բ-286ա):

*ՍԻԻԶ*-ի (*սույն հավելվածի բնագիր Ժ*) որոշ սահմանումներ բառացի համընկնում են «Յաղագս տարբերական և այլ և այլ անուանց» բնագրի բոլոր 3, *ՍՓ* բնագրի 159-ից 137 (5-ը՝ որոշ տարբերություններով), *Բարոյական Ա.*-ի 47-ից՝ 46 (1-ը՝ որոշ տարբերություններով), *ՍՄ*-ի 46-ից՝ 43 (2-ը՝

<sup>1</sup> Հավանաբար նախատեսված ժողովածուի հետևյալ բնագրերի համար՝ «Յաղագս տարբերական և այլ և այլ անուանց», «Ճարցմունք կարնատատարար», «Արիստոտելի Արդ գոլ գէական»-ից և «Յաղագս հարկատրին և կարելոյն»-ից հատվածների, «Անձնատրոսին և առանձնատրոսին և դէմ...» և «Բնութիւն է, որ ի գոյացողականաց ոմանց բաղկանայ» բնագրերի:

որոշ տարբերություններով), *Բանական Ա.*-ի 58-ից՝ 54 (2-ը՝ որոշ տարբերություններով), *Մարմին* բնագրի բոլոր 22 (2-ը՝ որոշ տարբերություններով), *Տունկք* բնագրի 13-ից՝ 12, և «Նխասացոյ» բնագրի բոլոր 9 ձևակերպումների (1-ը՝ որոշ տարբերություններով) հետ: Եվս 6 սահմանում զուգահեռ ունեն «Հարցմունք կարճառատաբար» բնագրի, այսինքն՝ նրա փոքր մասի հետ (2-ը՝ որոշ տարբերություններով), իսկ 3 սահմանում՝ «Յաղագս տարբերական և այլ և այլ անուանց»-ի հետ: «Գրիգորի Երուսաղեմացոյ Սահմանք զանազանք...» ժողովածուի մյուս բնագրերի հետ *ՄԻԻՀ*-ը ոչ մի առնչություն չունի: Այսպիսով զուգահեռների ընդհանուր թիվը 335 է:

Իսկ 419 սահմանում պարունակող *ՄԻԻՀ*-ի մնացած 84 սահմանումները որևէ զուգահեռ չունեն նշված բնագրերում: Մյուս բնագրերն էլ («Հարցմունք կարճառատաբար»-ը չհաշված) *ՄԻԻՀ*-ի հետ ընդհանուր 335 սահմանման դիմաց ունեն 30՝ զուգահեռ չունեցող սահմանում:

Եթե *ՄԻԻՀ*-ի սահմանումները դասավորված են այբբենական կարգով, ապա *ՄՓ*-ի 1-14 սահմանումները տրամաբանական հասկացություններ են (*սահման, ենթագրություն, անուն, բայ, ստորոգումն* և այլն), 15-22-ը նվիրված են Արիստոտելի կատեգորիաները մեկնաբանող Պորփյուրիոսի առաջարկած 5 հասկացություններին (*սեռ, տեսակ, տարբերություն, յատուկ, պատահումն*), 23-27-ը՝ հարակից հասկացությունների (*սեռականագոյն, տեսակագոյն*) 28-53՝ իմացաբանական եզրեր են (*զգայություն, թուեցումն, լսելիք, միտք*), 54-104-ը՝ տրամաբանական և իմացաբանական եզրերի շարքեր են, 105-110՝ թվային հասկացություններ (*թիւ, գիծ, մակերևոյթ*), 111-123՝ զանազան փիլիսոփայական, թերևս գոյաբանական հասկացություններ (*ապականություն, աստուած, լինելություն*), 124-151՝ բարոյագիտական եզրեր (*առաքինություն, արդարություն, արություն*):

*Բարոյական Ա.* բնագրում հիմնականում արծարծվում են բարոյագիտական հարցեր (ոչ միայն *լաւ, վատթար, առաքինություն, շարություն, այլև վախումն, իմաստություն, ձայնակցություն, երազամտություն, մեծանձնություն, գծծություն*), *ՄՄ*-ում՝ ֆաղափական (*ՄՄ 21* և *ՄԻԻՀ* Թ.7՝ *թագաւորություն, ՄՄ 22* և *ՄԻԻՀ* Ռ.1՝ *ուսմկություն*) և մարդու մարմնական ու հոգեկան զանազան առանձնահատկություններին վերաբերող, թերևս՝ դարձյալ բարոյագիտական (*ողջություն, հիւանդություն, մահ, գեղեցկություն, ծերություն, ամուսնություն, ցանկություն, նախանձ, տագնապ, ջանասիրություն*), *Բանական Ա.*-ում՝ բնագիտական (*էություն, տարր, հուր, երկիր, ջուր, արեւ, շարժություն, լինելու-*

թիւն, ապականութիւն, ժամանակ, տիւ, տարի, արու, էգ): Մարմին վերնագրի ներքո մարմնի մասերի և այլ մարդաբանական սահմանումներ են (*արիւն, լեարդ, լեզու, մաղձ, կաթ*), *Տունկք*-ը հիմնականում նվիրված է բույսերին (*ծառ, պտուղ, գինի, մեղր, ձէթ*): «Նիւսացոյ» բնագիրը բաղկացած է Գրիգոր Նյուսացու երկերից ֆաղված բարոյական հասկացությունների սահմանումներից (*երանութիւն, սուգ, ամաւթ, ողջախոհութիւն*):

Հայերեն բոլոր սահմանումները վերացարկված են տեղից, ժամանակից և մշակութային կամ կրոնական առնչություններից: Միայն *Միշ*-ում «սկիզբն» եզրի (Ս.13) սահմանմանը, որ ֆաղված է *Բանական Ս.*-ից (5), ավելացված է մի ֆանի մեկնաբանություն, որոնցից մեկն ընդգծված ֆրիստոնեական է. «պատնառական, որպէս Աստուած Հայր՝ Որդոյ և Հոգոյ»:

*Միշ*-ի սահմանումների և մյուս բնագրերում դրանց աղբյուրների միջև մեկ էական տարբերություն կա. վերջիններում որոշ սահմանումներ վերագրված են Արիստոտելին, Պլատոնին և ստոիկյաններին՝ հաճախ նույն եզրի տարբեր մեկնաբանությունների դեպքում<sup>1</sup>, իսկ *Միշ*-ից այդ անունները հեռացված են, և տարբեր մեկնաբանություններն իրար հետևում են *կամ* շաղկապով: Մեկ բացառություն կա, որ պատահական է թվում՝ «Խոհականութիւն է բարեխորհութիւն մարդկայնոց իրաց, որպէս Պղատոն, իսկ ըստ Արիստոտելի՝ ունակութիւն հանդերձ բանի գործական» (*Միշ* Խ.7, որ ֆաղված է *Բարոյական Ս.5*-ից):

Հիշատակված են նաև այլ փիլիսոփաների անուններ՝ «Հերակլիտէս» (*ՄՓ 94*, սակայն անունը կա արդեն այս սահմանման աղբյուր Արիստոտելի մոտ), «Թէոփրատէս» (*Բարոյական Ս. 12*), որ Արիստոտելի հետևորդ պերիպատետիկյան Թեոփրաստոսի (մ.թ.ա. 4-3-րդ դդ.) անվան մի փոքր աղավաղված տարբերակն է, և «Եմպեդոկլէս» (*Տունկք 9*, հիշատակված է այս սահմանման աղբյուր Արիստոտելի մոտ):

\*\*\*

Մեր ուսումնասիրությունը թույլ տվեց համոզվել, որ հայերեն սահմանումները թարգմանված են հունարենից, և որ «Գրիգորի Երուսաղեմացոյ Սահմանք զանագանք...» ժողովածուի մաս կազմող բնագրերը առաջնային

<sup>1</sup> «Սահմանք փիլիսոփայական» 1 (մասնավորեցված է՝ *ըստ Ձենոնի*), 5, 7, 8, 13, 15, 17, 20, 28, 29, 31, 43, 48, 58, 64, 85, 99, «Բարոյականի յեղանակի սահման» 15, 18, 20, 22, «Սահմանք իմաստասիրականք միջակք» 10, 35 (մասնավորեցված է՝ *որպէս Ձենոն*), 36, «Բանականի մասին սահման» 16, 41, 47:

են, իսկ ՄԻԻՀ-ը՝ դրանց այբբենական կարգով վերադասավորված տարբերակը: Վերջին ենթադրության օգտին է խոսում Պլատոնի, Արիստոտելի և մյուս հեղինակների անունների հետացումը ՄԻԻՀ-ից, ինչպես նաև այն, որ մյուս բնագրերի որոշ միավորներ նրանում ձուլվել դարձել են մեկ: Օրինակ՝ ՄՓ-ի երեք սահմանում՝ «Մշտնջենական է, որ յամենայն ժամանակի է և յառաջագոյն էր և այժմ ոչ ապականի» (115), «Աստուած կենդանի անմահ, ինքնաբաւ առ ի ներփառութիւն, էութիւն մշտնջենատր և բարոյ բնութեան պատճառ» (116) և «Կինելութիւն իաղացումն էութեանց, փոփոխումն առ էութիւն փայլելով եղանակացս» (117), որոնցից յուրաքանչյուրն առանձին հունարեն զուգահեռ ունի, ՄԻԻՀ-ում մեկ միավոր են՝ Մ տառի տակ, ֆանի որ առաջին բառը «մշտնջենական»-ն է (Մ.6):

Իսկ մեկ այլ դեպքում նույն ՄՓ բնագրի երեք հաջորդական սահմանում, որոնք նաև առանձին միավորներ են ՄԻԻՀ-ում (Խ.2, Բ.11, Բ.12) և որոնցում բացատրվում է «խոհեմութիւն»-ը (126), «բարեփառութիւն»-ը (127) ու «բարեբաստութիւն»-ը (128), հիմնական գծերով համապատասխանում են հունարեն մեկ սահմանման՝ որոշ բառերի ներմուծմամբ:

Մեկ այլ դեպքում էլ հունարեն մեկ և ՄՓ-ում մեկ՝ մի փոքր երկար սահմանման (129) դիմաց, որ «արդարութիւն» եզրի բացատրությունն է, ՄԻԻՀ-ն ունի չորս սահմանում, երկուսը «արդարութիւն» (Ա.16, Ա.29), մեկը՝ «բնութիւն» (Բ.13), մեկն էլ՝ «լաժարական» (Յ.9): Փաստորեն «բնութիւն»-ը, որով սկսվում էր բացատրության մասերից մեկը, դարձել է գլխաբառ՝ իբր բացատրության առարկա. «Բնութիւն է բաշխողական որ ըստ չափոց», իրականում՝ մի անիմաստ նախադասություն: Նույնը տեղի է ունեցել «լաժարական»-ի հետ:

*Բարոյական Մ. 48՝* «Անմոլար գունդ է, որ յարևելից յարևմուտս միշտ նմանապէս տարեալ լինի: Մոլար գունդ է, որ ընդդէմ աննմանապէս շրջին» սահմանումը, որ սերում է Արիստոտելի մեկնիչ Ալեքսանդր Ափրոդիսիացուց, ՄԻԻՀ-ում տրոհվել է երկու մասի և հանդես է գալիս որպես Ա.43 և Մ.27:

Սահմանումներից բաղկացած հայերեն բնագրերին ճիշտ համապատասխանող հունարեն բնագիր չի պահպանվել, կամ գոնե մեզ հայտնի չէ: Սակայն բազմաթիվ սահմանումների համար զուգահեռներ ենք գտել հին հունարեն տարբեր փիլիսոփայական և բառարանագրական բնույթի գրվածքներում, և շատ հաճախ հայերեն սահմանումները դրանց ճշգրիտ թարգմանությունն են կամ գոնե բավական մոտ են դրանց:

Ամենից շատ են՝ թվով 43, գուգահեռները Հովհան Դամասկացու (8-րդ դդ.) տարբեր գրվածքների հետ (*ՄՓ* 26, 27, 28, 43, 55, 56, *Քարոյական Ս.* 21, *Քանական Ս.* 17, 19, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, *Տունկ* 1, *ՍԻԻՆ* Ա.51, Ա.59, Ա.60, Ա.61, 63, Բ.37, Գ.1, Է.1, Կ.10, Մ.26, Ո.2, Վ.3, Տ.1):

Շատ են (30) գուգահեռները նաև Պլատոնին վերագրված *Սահմանումների* հետ (հունարեն՝ Ὅροι, լատիներեն՝ *Definitiones*): Դա 184 փիլիսոփայական եզրերի բառարան է, որ երբեմն մաս է կազմում Պլատոնի գրվածքների ժողովածուների և մինչև ուշ անտիկ ժամանակները վերագրվել է Պլատոնին կամ նրա բեռորդի և Ակադեմիայի երկրորդ ղեկավար Սպևսիպոսին<sup>1</sup>, սակայն ըստ մեծությամբ բանասիրության՝ երկրորդ ձեռքի փիլիսոփայության մի տարրական դասագիրք է, ենթադրաբար կազմված Պլատոնի Ակադեմիայի շրջանակներում, մ.թ.ա. 4-3-րդ դդ.: Այդ երկում 184 փիլիսոփայական եզրեր են իրենց հակիրճ սահմանումներով այբբենական կամ որևէ այլ կարգով չեն դասավորված: Սակայն նշմարվում են որոշ բովանդակային խմբեր: 1–20 սահմանումները հիմնականում բնափիլիսոփայության եզրեր են՝ «մշտնջենավոր», «աստված», «գինեություն», «արեգակ», «ժամանակ», «ցերեկ», «արշալույս», «կեսօր», «կեսօրից հետո», «գիշեր», «գիպված», «ծերություն», «շունչ», «օդ», «երկինք», «հող», «ուժ», «տեսողություն», «ոսկոր», «տարր», 21–107 միավորները մի քանի ոլորտի հասկացություններ են պարունակում՝ բարոյագիտություն (օրինակ՝ «առաքինություն», «արդարություն», «ողջախոհություն», «աշխատասիրություն» և այլն), քաղաքականություն (օրինակ՝ «թագավոր», «իշխանություն», «օրենք», բռնակալ), տրամաբանություն (օրինակ՝ «ձայն», «բան», «անուն», «սահմանում», «ապացույց»), ֆերականություն (օրինակ՝ «վանկ»), և իմացաբանական (օրինակ՝ «գիտելիք»): Վերջին խումբը՝ 108–184 համարները, հասկացությունների խառնուրդ է, որտեղ երբեմն կրկնվում են արդեն մեկ անգամ մեկնաբանված եզրերը: Հավանաբար հավաքածուն փոփոխության է ենթարկվել դարերի ընթացքում, քանի որ սահմանումների թիվը տարբեր ձեռագրերում տարբեր է:

Այս երկի մասին մանրամասն խոսեցինք, քանի որ նրա հետ առնչությունը տեսնում ենք արդեն հայերեն *ՄՓ*-ի փոփոխ նախաբանում (որը թերևս կարելի է ընկալել որպես ընդհանուր նախաբան՝ սահմանումներ

<sup>1</sup> L.G. Westerink, *Anonymous Prolegomena to Platonic Philosophy*, Amsterdam, 1962.

պարունակող բնագրերի ամբողջ շարքի համար). «Սահմանս դնելով իմաստասիրականի բանի, այսինքն՝ բնականի բանի, բարոյականի, և զամենայն գործ տրամաբանականի»: Նաև ֆննվող հարցերի շրջանակը մոտավորապես նույնն է, ինչ և հայերեն սահմանումներում, իսկ *ՄՓ* -ի 25 (1, 13, 29, 33, 42, 43, 50, 51, 80, 115, 116, 117, 118, 121, 122, 123, 125, 126, 128, 129, 130, 131, 133, 136, 143), *Բարոյական Ա.*-ի 3 (18, 20, 45) և *ՄՄ*-ի 2 (23, 38) սահմանում կամ բառացիորեն նույնանում են՝ թարգմանված են կամ էլ մոտ են Պլատոնին վերագրված սահմանումներին:

Եթե կեղծ-պլատոնական սահմանումների թիվը 184 է, ապա հայերեն բնագրերի միավորները երբեմն դժվար է նշգրիտ հաշվել: Օրինակ՝ նշել ենք *ՄՓ*-ի 159 թիվը, սակայն այն պայմանական է: Որոշ սահմանումներ մեկ նախադասությունից չեն բաղկացած, այլ երկու, երեք կամ ավելին, ուստի երբեմն հստակ չէ, թե որտեղ է ավարտվում մի սահմանումը և սկսվում հաջորդը: Երբեմն սահմանումները միմյանցից բաժանելուն օգնում է այն, որ դրանք զուգահեռներ ունեն *ՄԻԻԶ*-ի տարբեր հատվածներում (սակայն, ինչպես վերը տեսանք, այստեղ էլ շփոթություններ կան):

Պլատոնին վերագրված հունարեն *Սահմանումներից* ֆաղած 30 միավորից վեցում (*ՄՓ* 1, 5, 29, 43, *Բարոյական Ա.* 18, 20) նշում կա՝ «ըստ Պլատոնի»: Մնացած 24-ի համար որևէ անուն հիշատակված չէ: Նման երկու նշում էլ գտնում ենք այնպիսի սահմանումների մեջ (*ՄՓ* 7, 99, *Բարոյական Ա.* 22), որոնք զուգահեռներ ունեն Պլատոնի *Գորգիաս*, *Սոփեստես* և այլ տրամախոսությունների հետ: Եվս հինգ անգամ «ըստ Պլատոնի» նշում կա (*ՄՓ* 13, 48, 64, *Բարոյական Ա.* 15, *ՄՄ* 35, *Բանական Ա.* 41), սակայն որևէ զուգահեռ պլատոնական նախադասություն մեզ չի հաջողվել գտնել:

*ՄՓ* 13-ի և 19-ի համար զուգահեռ կա նորպլատոնական փիլիսոփա Պորփյուրիոսի մոտ. 13-ում նա մեջբերում է Պլատոնի համապատասխան կարծիքը՝ «Ձայն է ըստ Պլատոնի վիրատրումն աղոյ»: Իսկ երեք անգամ (*ՄՓ* 15, 28, 58) այդպիսի նշումին համապատասխանում են զուգահեռներ Արիստոտելի երկերից: Կան նաև դեպքեր, երբ Պլատոնի հետ զուգահեռները չեն ուղեկցվում նրա անվան հիշատակմամբ (*ՄՄ* 9, 22, 39, *ՄԻԻԶ* Հ.5, Մ.26):

15 անգամ որպես սահմանումների հեղինակ նշվում է Արիստոտելը (*ՄՓ* 1, 5, 13, 17, 29, 43, 58, 64, 85, *Բարոյական Ա.* 15, 18, 22, *ՄՄ* 10, 36, *Բանական Ա.* 41): 11-ի համար (*ՄՓ* 1, 5, 13, 17, 29, 43, 85, *Բարոյական Ա.* 15, 18, 22, *Բանական Ա.* 41) իրոք Արիստոտելի տարբեր երկերում դրանց զուգահեռներն են գտել:

Եվս 21 սահմանումների համար զուգահեռ նկատել ենք նրա երկերի հետ, սակայն բնագրում անունը չի հիշատակվում (*ՄՓ* 4, 6, 10, 35, 42, 57, 58, 63, 65, 75, 78՝ 2 զուգահեռ, 91, 94, 101, 104, 105, 107, 108, 112, 133՝ այստեղ նաև Պլատոնի հետ զուգահեռ կա, 138, *Բարոյական Ս.* 5, 12, 32, 33, *ՄՄ* 3, 5, 6, 16, 22, 31, 44, *Բանական Ս.* 16, 18, 20, 22, 32, 46, 54, 57, *Մարմին* 9, 20, *Տունկը*, 7, 9, 11, նաև *ՄԻԻՀ Ա.67, Գ.2, Է.2, Մ.5, Շ.6, Ք.2*, երկուսը՝ *ՄՓ* 63 և *ՄԻԻՀ Շ.6*, «Կատեգորիաներից», սակայն հայերեն թարգմանությունից մի ֆիլ տարբեր)<sup>1</sup>:

Երրորդ հիշատակվող հեղինակությունը ստոիկյաններն են: Սակայն երբ կարդում ենք «ըստ ստոիկեանցն», զուգահեռներ փնտրելն ավելի դժվար է: Դրանք կարող են գտնվել տարբեր հեղինակների՝ լինեն դրանք ստոիկյան փիլիսոփաներ, թե նրանց մասին պատմողներ, բնագրերում: Առայժմ տասներկուսից վեցի (*ՄՓ* 8, 13, 21, 28, 44, *Բանական Ս.* 41) համար ենք կարողացել զուգահեռներ գտնել, վեցը (*ՄՓ* 29, 30, 43, 58, *Բանական Ս.* 16, 47), ինչպես նաև *ՄՓ* 8-ի երկու սահմանումներից մեկը, մնում են հարցական: Երեք անգամ էլ ստոիկյան Չենոնն է հիշատակված (*ՄՓ* 1, *ՄՄ* 35, 36), և առաջինի զուգահեռը գտել ենք փիլիսոփաների մասին պատմող Դիոգենես Լաերտիոսի (մ.թ.ա. 3-րդ դ.) «Փիլիսոփաների կյանքը» երկի՝ ստոիկյաններին նվիրված 7-րդ գլխում, որտեղ այն վերագրված է մեկ այլ ստոիկյանի՝ Անտիպատրոսին: Մյուս երկու դեպքում բավարար հունարեն զուգահեռ չկա: Նույն Դիոգենեսի հետ են *ՄՓ* 8, 13, 20 և 77-ի, *ՄՄ* 41-ի, *Բանական Ս.* 57-ի զուգահեռները, մեկը (*ՄՓ* 13) ունի ևս մեկ զուգահեռ՝ Հոմերոսի *Իլիական*-ի մի մեկնության մեջ: *ՄՓ* 44, 46 և 139, *Բարոյական Ս.* 8, 14, *Բանական Ս.* 41, 50 և *ՄԻԻՀ* Տ.1 սահմանումները զուգահեռ ունեն 2-րդ դարի երկրորդ կեսի փիլիսոփա Սեֆստոս Էմպիրիկոսի հետ:

Մնացած զուգահեռները գտել ենք զանազան փիլիսոփայական բնագրերում՝ ստոիկյան Անտիսթենեսի (*ՄՓ* 1), Արիստոտելի հետևորդ պերիպատետիկյաններ Թեոփրաստոսի (մ.թ.ա. 4-3-րդ դդ.՝ *Տունկը* 3) և Ալեքսանդր Ափրոդիսիացու (մ.թ. 2-3-րդ դդ., *ՄՓ* 53, 72, 109, *Բարոյական Ս.* 10,

<sup>1</sup> Օրինակ՝ «Շարժութեան տեսակք են Զ.՝ լինելութիւն, ապականութիւն, անումն, նուագութիւն, ի տեղոյէ ի տեղի փոփոխութիւն, այլայլութիւն» (*ՄԻԻՀ Շ.6*) – Κινήσεως δέ ἐστὶν εἶδη ἕξ· γένεσις, φθορά, αὐξήσις, μείωσις, ἀλλοίωσις, κατὰ τόπον μεταβολή (Arist. *Cat.* 15a.14): Արիստոտելի հին թարգմանության մեջ նույն հատվածը մի փոքր տարբերվում է. «Շարժութեան տեսակք են վեց՝ լինելութիւն, ապականութիւն, անելութիւն, նուագութիւն, այլայլութիւն, ըստ տեղոյ փոփոխութիւն», տե՛ս [Դաւիթ Անյաղթ], Յաղագս մեկնութեան՝ Պերիարմենիաս, Մեկնութիւն «Ստորագութեանցն» Արիստոտելի», *Մատենագիրք հայոց*, Ժէ հատոր, ԺԱ դար, Երևան, 2016, Յաւելուած, էջ 975:



Բանական Ս. 46, 48, 49, 50, Մարմին 14, Մեծ Բ.41, Ը.1, Հ.9), Արիստոտելի անանուն մեկնիչի (ՄՓ 134), մեկնիչ Թեմիստիոսի (4-րդ դ., ՄՓ 103, 141) և մեկնիչ ու աստվածաբան Հովհաննես Փիլոպոնոսի (5-6-րդ դդ., ՄՓ 55, 156, Տունկբ 12, 13 Մեծ Հ.6, Ս.17), նորպատոնական փիլիսոփաների մոտ՝ Ամմոնիոս Սակկասի (մ.թ. 3-րդ դ., ՄՓ 13, 38, 87, Մեծ Ե.18), Պորփյուրիոսի (մ.թ. 3-4-րդ դդ., ՄՓ 13, 19, 42, Մեծ Տ.7, Տ.8), Յամբլիֆոսի (մ.թ. 3-4-րդ դդ., Բարոյական Ս. 42), Սիմպլիկիոսի (6-րդ դ., ՄՓ 61, 62, 112, Բանական Ս. 5), Օլիմպիոդորոսի (6-րդ դ., ՄՓ 7, Բարոյական Ս. 15, Մեծ 37), Պրիսկիանոս Լիդացու (6-րդ դ.՝ ՄՓ 29), 4-րդ դարի ֆերական Դոսիթեոսի (ՄՓ 14) մոտ, ստոիկյան Քրիստոսից մեջբերումներում (մ.թ.ա. 3-րդ դ., ՄՓ 31, 97, Բարոյական Ս. 16, 22, 37, ՄՄ 2, 4, 38, 43, 46), Կղեմես Ալեքսանդրացու (2-3-րդ դդ.) «Ստրոմատա»-ում (ՄՓ 97), Պլուտարֆոսի (1-2-րդ դդ.) «Ստոիկյանների դեմ» և այլ գործերում (ՄՓ 45, ՄՄ 13, Տունկ 1), Հերմոգենեսի (2-րդ դ.) և Ափրոնիոսի (4-րդ դ.) «Նախակրթություններում» (ՄՓ 113, ՄՄ 5, Մեծ Գ.3), Փիրլոն Ալեքսանդրացու երկերում (1-ին դ., ՄՓ 23, 31), Սվիդասի բառարանում (10-րդ դ., ՄՓ 21, 54, ՄՄ 7, 10, 36), առաջին դարի ալեքսանդրացի երկրաչափ Հերոնի (ՄՓ 106, 108, 109, Մեծ Բ.41), մ.թ.ա. 1-ին դարի փիլիսոփա և Արիստոտելի երկերի հրատարակիչ Անդրոնիկոս Հոդոացու (ՄՓ 140), կեղծ-Ջոնարասի բառարանում (ՄՓ 3, 4, 5, ՄՄ 1, 7, 37, Բանական Ս. 52, Մարմին 8), Գալենոսի (2-րդ դ., ՄՓ 111, ՄՄ 5, 34, Բանական Ս. 42, Մարմին 3, 19, Մեծ Ն.9), կեղծ-Գալենոսի (ՄՓ 13, 29, Բանական Ս. 43), Նեմեսիոս Եմեսացու (Գ. դար) «Յադագս բնութեան մարդոյ» (Բանական Ս. 57, Մեծ Ա.48, Ա.49, Ա.50, Ա.60, Մ.26, Ն.9), բյուզանդական շրջանի բժշկական (ՄՓ 28, Մարմին 7, Մեծ Զ.5, Զ.6, Զ.7, Մ.26, 3.1, Վ.3), ֆերականության մի մեկնիչի (ՄՓ 58), Հովերոսի մեկնիչ Եվստաթիոսի (12-րդ դ., Մարմին 14) գրվածներում:

10 սահմանում (ՄՓ 60, 71, 138, ՄՄ 12, Բանական Ս. 49, «Նիսացոյ» 2, 4, Մեծ Ա.64, Խ.9, Ո.15,) զուգահեռ ունեն 7-րդ դարի մի ֆաղվածո գործում, որ կոչվում է *Doctrina patrum de incarnatione verbi* և պարունակում է 977 մեջբերում Աստվածաշնչից, եկեղեցու հայրերից, ժողովների որոշումներից, մասնավորապես նրա վերջին՝ 33-րդ գլխում, որ սահմանումների շարք է՝ դասավորված այբբենական կարգով<sup>1</sup>:

<sup>1</sup> *Doctrina Patrum de incarnatione verbi. Ein griechisches Florilegium aus der Wende des 7. und 8. Jahrhunderts*, Ed. B. Diekamp, Münster, 1907, pp. 249-266, Kap. 33: ὄροι καὶ ὑπογραφαὶ ἐκ διαφόρων λόγων ἐπανισθέντες, B.R. Adrados, *Greek Wisdom Literature and the Middle Ages: The Lost Greek Models and Their Arabic and Castilian Translations*, Bern – Berlin – Bruxelles – Frankfurt am Main – New York – Oxford – Wien, 2009.

Եվս 10 սահմանում (*ՍՓ* 144-153) թարգմանությունն են Փոստ պատ-  
րիարքի հանրագիտարանային «Գրադարան» աշխատության մեջ թվարկ-  
վող՝ Մարկոս Ասկետիկոսի (5-րդ դ.)՝ Մելիխադեկին նվիրված երկի գլուխնե-  
րի վերնագրերի:

Այսպիսով *ՍՓ*-ի 100 միավորի համար (որոնցից 72-ն ընդհանուր են  
*ՍԻԻՀ*-ի հետ, իսկ յոթը՝ միայն մասնակիորեն) գտել ենք հունարեն զուգա-  
հեռներ (որոշ դեպքերում՝ միայն սահմանման մի մասի համար), իսկ 60  
սահմանման համար (9, 11, 12, 16, 18, 24, 25, 30, 32, 34, 36, 37, 39-42,  
46-49, 52, 59, 64, 66-70, 73, 74, 76, 79, 81, 84, 86, 88-90, 92, 93, 95, 96,  
98, 100, 102, 110, 114, 119, 120, 127, 132, 135, 137, 141, 142, 154-157,  
159) դեռևս չի հաջողվել զուգահեռներ գտնել հունարեն փիլիսոփայական  
կամ բառարանագրային գրվածքներում: Այդ 60-ից 55-ն ընդհանուր են  
*ՍԻԻՀ*-ի հետ, իսկ վեցը՝ միայն մասնակիորեն:

*Բարոյական Ս.*-ի 20 (4, 5, 8, 10, 12-16, 19-22, 28, 30, 32, 33, 37, 41,  
45) միավորի համար գտել ենք հունարեն զուգահեռներ, իսկ 27 միավորի  
համար (1-3, 6-9, 11, 17, 19, 24-27, 29, 31, 34-36, 38-44, 46, 47)՝ ոչ:

*ՍՄ*-ի 29 (1-7, 9, 10, 12-14, 16, 20, 22, 23, 27, 31, 32, 35-39, 41-44, 46)  
միավորի համար գտել ենք հունարեն զուգահեռներ, իսկ 18 միավորի (7, 8,  
11, 15, 17-19, 21, 24-26, 28-30, 33, 34, 40, 45) համար՝ ոչ:

*Բանական Ս.* -ի 35 (5, 16, 18-23, 25-43, 46, 48-50, 52, 54, 56, 57) միա-  
վորի համար գտել ենք հունարեն զուգահեռներ, իսկ 22 միավորի (1-4, 6-  
15, 17, 24, 44, 45, 47, 51, 53, 55) համար՝ ոչ:

*Մարմին*-ի 7 (1, 2, 7, 8, 14, 19, 20) միավորի համար գտել ենք հունա-  
րեն զուգահեռներ, իսկ 15 միավորի (3-6, 9-13, 15-18, 21, 22) համար՝ ոչ:

*Տունկք*-ի 7 (1, 2, 7, 9, 11-13) միավորի համար գտել ենք հունարեն զու-  
գահեռներ, իսկ 6 միավորի (3-6, 8, 10) համար՝ ոչ:

*Նիւսացւոյ*-ի 6 (1-4, 7, 8) միավորի համար գտել ենք հունարեն զուգա-  
հեռներ, իսկ 3 միավորի (5, 6, 9) համար՝ ոչ:

*ՍԻԻՀ*-ի՝ մյուս բնագրերի հետ առնչություն չունեցող 84 սահմանումնե-  
րից 40-ի համար (Ա.48, Ա.49, Ա.50, Ա.51, Ա.59, Ա.60, Ա.61, Ա.63, Ա.64,  
Ա.67, Բ.37, Բ.41, Գ.1, Ե.4, Ե.18, Զ.5, Զ.6, Զ.7, Է.1, Ը.1, Ժ.3, Խ.3, Խ.9, Կ.10,  
Հ.5, Հ.6, Հ.9, Մ.5, Մ.26, Յ.1, Ն.9, Շ.6, Ո.2, Ո.15, Ս.9, Ս.17, Ս.18, Վ.3, Վ.4,  
Տ.1, Ք.2) հունարեն զուգահեռներ ենք գտել զանազան գրվածքներում: Իսկ  
44-ի համար (Ա.7, Ա.8, Ա.9, Ա.57, Ա.58, Ա.62, Ա.65, Ա.66, Ա.68, Ա.69, Բ.33,

Բ.42, Բ.43, Գ.13, Ե.5, Ե.6, Ե.15, Ե.16, Ե.17, Է.3, Խ.11, Ծ.1, Ծ.4, Կ.2, Կ.9, Կ.11, Հ.7, Հ.8, Հ.13, Հ.27, Զ.4, Մ.23, Մ.24, Մ.25, Յ.2, Ե.1, Ռ.6, Պ.3, Պ.4, Պ.6, Ս.13, Ս.19, Վ.2, Յ.1)՝ ոչ:

Զուգահեռներ չենք գտել նաև «Յաղագս տարբերական և այլ և այլ անուանց» 3 սահմանումների համար: Հետևաբար 210 սահմանման հունարեն զուգահեռ գտել ենք, իսկ 197-ի՝ ոչ: Թվերը բավական մոտ են:

Կան սահմանումներ, որոնք ունեն (կամ որոնց համար ենթադրվում է) 2, 3, անգամ ավելի զուգահեռ, հատկապես եթե մեկ հասկացության՝ տարբեր փիլիսոփաների վերագրված սահմանումների շարք է, օրինակ.

«Սահման է ըստ Պլատոնի՝ «բան ի սեռ է և ի տարբերություն» և կամ տարբերությանց մեկնողական էությունց բանից իրաց: Իսկ ըստ Արիստոտելի՝ «բան որ զինչերն գոյ յայտնելով» զինչ գոյոյն զինչն հասասար կարողութամբ: Իսկ ըստ Զենոնի՝ «բան ըստ վերլուծության կատարողին յառաջ բերեալ»» (ՄՓ 1):

«Ըստ Պլատոնի»-ն զուգահեռ ունի Պլատոնին վերագրված *Սահմանումներ*-ում, «ըստ Արիստոտելի»-ն՝ Արիստոտելի *Տոպիկա*-ում, դրանք կցված բացատրությունը ընդհանուր եզրեր ունի ստոիկյան փիլիսոփա Անտիսթենեսի մի պատասխիկի հետ, իսկ Զենոնին վերագրված հատվածի շատ նման մի սահմանում Դիոգենես Լաերտիոսը ստոիկյանների մասին պատմելիս վերագրում է մեկ այլ ստոիկյանի՝ նույն Անտիսթենեսին:

Մեկ այլ օրինակ՝

«Առաելություն է փրկություն փառաց արինատրաց, դժնդակից և ոչ, որպես Պլատոն, իսկ ըստ Արիստոտելի՝ միջակություն յանդգնության և զանգիտման կամ մակացություն դժնդակից և ոչ» (*Բարոյական Ս. 22*):

«Առաելություն» բառը սրբագրվում է «Արիություն», ինչպես որ ընթերցվում է սրանից հաղված *Միտ* Ա.25-ում: Պլատոնին վերագրված՝ արիությանը վերաբերող միտքը գտնում ենք նրա «Հանրապետություն» երկում, Արիստոտելին վերագրվածը՝ «Եվդեմոսյան էթիկայում», իսկ վերջին՝ անանուն հատվածի զուգահեռը՝ ստոիկյան Քրիսիպոսի մի պատասխիկում:

Քանի որ *Միտ*-ից, ինչպես ասացինք, հանվել են «Ըստ Պլատոնի», «ըստ Արիստոտելի» և նման նշումները, ապա մեկ հասկացության մի ֆանի սահմանումները զուգակցվում են *կամ* շաղկապով: Օրինակ՝ «Արիություն՝ փրկություն փառաց արինատրաց, դժնդակաց և ոչ, կամ միջակություն յանդգնության և զանգիտման կամ մակացություն դժնդակաց և ոչ» (*Միտ* Ա.25):

Հունարեն զուգահեռները երբեմն օգնում են շտկել թարգմանության մեջ սպրդած սխալը: Հետևյալ օրինակում՝ «Ուղեղ է ի ջերմութենէ կառուցեալ» (*ՄՓ* 122) կամ «Ուղիղ է ի ջերմութենէ կառուցեալ» (*ՄԻԻՀ* Ո.7), երկու բնագրում էլ սահմանումը թերի է և այդու՝ անիմաստ: Հունարեն զուգահեռը՝ Ὅστος μυελός ὑπὸ θερμοῦ παγείζ (*Plato Def.* 411.c.10) հուշում է, որ սկզբնապես եղել է «Ոսկր ուղեղ է ի ջերմութենէ կառուցեալ»:

Անշուշտ վերը թվարկված հեղինակների շարքը չի նշանակում, որ դրանք բոլորը խնդրո առարկա բնագրերի համար աղբյուր են ծառայել: Ավելին, միևնույն սահմանումները հանդիպում են տարբեր հեղինակների մոտ՝ երկից երկ մեջբերվելով: Սահմանումներից բաղկացած՝ մեր ֆենոթիպի առարկա բնագրերը թարգմանվել են հունարեն սահմանումների՝ հավանաբար ուսուցողական նպատակով կազմված մի հավաքածուից, որը պարունակել է մեր գտած և դեռևս չգտած սահմանումները: Դրանք հավանաբար դասավորված են եղել մեր բնագրերում եղածների հերթականությամբ: Իսկ այբբենական կարգով սահմանումները դասավորողը՝ *ՄԻԻՀ*-ի կազմողը, երևի ծանոթ է եղել հունական միջավայրում նման երևույթին, ինչի օրինակ է վերոհիշյալ *Doctrina patrum de incarnatione verbi* երկի 33-րդ գլուխը:

Երկու հանգամանք՝ այն, որ «Սահմանք փիլիսոփայական»-ը մի քանի ձեռագրում (նկատել ենք հինգը՝ ՄՄ 8132, ՄՄ 8444, Pavia, Aldini 178, Եղմ. 898, էջ 334ա-337ա, Վնակ. 1598, էջ 44-49) հետևում է Հովհան Դամասկացու «Դիալեկտիկայի»՝ հունարենից թարգմանությանը, և բոլոր բնագրերի 43 սահմանումների համար մեր գտած զուգահեռները այդ հեղինակի երկերի հետ են՝ 34-ը հենց «Դիալեկտիկայի», 5-ը՝ *Expositio fidei*-ի (հայերեն թարգմանությունն վերնագրված է «Ասանդութիւն ուղղափառ հաւատոյ»), 3-ը՝ փիլիսոփայական հատակոտորների, ստիպում է մտածել, որ գուցե ենթադրյալ հունարեն սահմանումների ժողովածուն ձեռագրերում ուղեկցել է Դամասկացու փիլիսոփայական երկերը: Գուցե և կա այդպիսին, բայց որպես երկրորդական բնագիր, զուտ դասագիրք, որ մինչ այժմ չի հրատարակվել: Մեկ լեզվական փաստ էլ հուշում է, որ գուցե հենց «Դիալեկտիկան» հունարենից թարգմանած Բագարատ Մամիկոնյանն է թարգմանել նաև սահմանումները: Այսպես՝ *μαλλον και ἥττον* (բառացի՝ «ավելի շատ և ավելի քիչ») արտաոտց կերպով թարգմանված է «ողորկ և խոշոր» «Դիալեկտիկայում» (գլուխ ԼԱ.) և *ՄԻԻՀ* 2.6-ում (հավանաբար նաև 2.7-ում, որի

հունարեն գուգահեռ, սակայն չենք գտել): Սակայն այս փաստն անշուշտ բավարար չէ նման վեոական կարծիք հայտնելու համար:

Այնուամենայնիվ նշված փաստերն են հիմք հանդիսացել մեկ գրքի մեջ միավորելու համար Հովհան Դամասկացու տրամաբանական երկի թարգմանություններն ու Գրիգոր Երուսաղեմացու կազմած փիլիսոփայական սահմանումների ժողովածուն:

Բնագրերը թարգմանված են հունարենից տառացիության սկզբունքով, սակայն որոշ եզրերի համար կերտված համարժեքները տարբերվում են հին՝ հունարեն շրջանի թարգմանություններում կիրառվածներից: Նշենք «յառաջածգութիւն»-ը՝ որ հունարեն *πρότασις*-ի դիմաց, որ տրամաբանական եզր է և նշանակում է «նախադրոյթ», իսկ Դավիթ Անհաղթի երկերում թարգմանվել է «նախադասութիւն» (Դաւ. Պորփ. 19.1)<sup>1</sup> և «առաջարկութիւն» (Դաւ. Պորփ. 6.2)<sup>2</sup>: «Յնորումն» համապատասխանում է *φαντασία*-ին, որն Անհաղթի բնագրերում թարգմանվել է «երևակայութիւն»<sup>3</sup>:

Մինչդեռ բազմաթիվ եզրեր թարգմանված են հունարեն թարգմանիչների կերտած համարժեքներով: Օրինակ՝ «սեռ», «տեսակ», «տարբերութիւն», «յատուկ», «պատահումն», «ենթակայ», «ստորոգեալ», «մակացութիւն», «ներհմտութիւն», «ներգործութիւն», «հումանում», «փաղանումնութիւն», «ունակութիւն», «տրամադրութիւն», «ենթագրութիւն» և շատ ուրիշ եզրեր կարելի է գտնել և Դավիթ Անհաղթի նշված, և այլ թարգմանություններում:

<sup>1</sup> Ավելի հաճախակի՝ Արիստոտելի Վերլուծականի մեկնության մեջ՝ 1.5, 2.1-2, 6.1-2, 7.2, 4, 9.1, 12.9, 13.1, 14.1, հետևյալ գրքում՝ David the Invincible, *Commentary on Aristotle's Prior Analytics*, Old Armenian Text with an English Translation, Introduction and Notes by Aram Topchyan, Leiden – Boston: Brill, 2010: Ի դեպ «յառաջածգութիւն»-ը նշգրիտ է արտացոլում հունարեն բառի կառուցվածքը, քանի որ նրա երկրորդ մասը՝ *τάσις*, ածանցյալ է *τείνω* («ձգել») բայից, մինչդեռ «նախադասութիւն» համարժեքի դեպքում այն շփոթմամբ բխեցված էր *τάσσω*-ից ածանցյալ *τάξις* («կարգ, դաս») բառից, իսկ «առաջարկութիւն» տարբերակն անգամ դժվար է մեկնաբանել: Երկուսն էլ վկայում են, որ Դավթի թարգմանիչը չի հասկացել *πρότασις*-ի ստուգաբանությունը:

<sup>2</sup> Անդ. 1.5, 2.5-6, 5.1, 3-7, 10, 6.1-3, 7.1, 5, 8.1-3, 9.1, 3, 9-10, 10.1, 5-6, 11.3, 12.1, 3, 5-7, 9-10, 13.1, 4, 14.5:

<sup>3</sup> Անդ. 1.4, 5, Դաւ. Սահմ. 179:

**ԲՆԱԳՐԵՐ**

Հապավումներ և պայմանական նշաններ

*Աստուած* – «Յաղագս տարբերական եւ այլ եւ այլ անուանց» (բնագիր Ա.1)

*Բանական Ս.* – «Բանականի մասին սահմանս» (բնագիր Ե)

*Բարոյական Ս.* – «Բարոյականի յեղանակի սահման» (բնագիր Գ)

*Բնութիւն* (բնագիր Ա.3)

*Հարց. կարճ.* – «Հարցմունք կարճատատարար» (բնագիր Ա.2)

*Մարմին* – «Մասունք մարմնոյ» (բնագիր Զ)

*Նիւսացւոյ* – «Նիւսացոյ» (բնագիր Ը)

*ՍՄ* – «Սահմանք իմաստասիրականք միջակք» (բնագիր Դ)

*ՍՓ* – «Սահմանք փիլիսոփայականք» (բնագիր Բ)

*Տունկք* – «Յաղագս տնկոց վերջին գլուխ» (բնագիր Է)

Համեմատվել են հետևյալ ձեռագրերն ու տպագիրը՝

K – ՄՄ 3082 (1267 թ.), 431ա-446ա՝ Գրիգոր Երուսաղեմացու ժողովածուն (այս ձեռագրին հատուկ է «այլ» գրությունը «այլ»-ի փոխարեն)

R – ՄՄ 464 (1731-1734), 189ա-215ա՝ Գրիգոր Երուսաղեմացու ժողովածուն

S – ՄՄ 2269 (ԺԸ դ.), 10ա-28ա՝ Գրիգոր Երուսաղեմացու ժողովածուն

A – ՄՄ 8132 (ԺԳ դ.), 177բ-182ա՝ ՍՓ

B – ՄՄ 8444 (ԺԷ դ.), 344ա-347բ՝ ՍՓ

G – ՄՄ 2041 (մինչև 1676), 344ա-347ա՝ ՍՓ

P – Pavia, Bibliotheca Universitaria, Ms. Aldini 178 (ԺԲ և ԺԳ դդ.)՝

*ՍՓ* թերի

Q – ՄՄ 2771 (1701 թ.), 498ա-503ա՝ ՍՓ

O – ՄՄ 6897 (1330 թ.), 397ա-410ա՝ ՍԻԻՀ

Ψ – ՄՄ 7151 (ԺԳ դ.), 46ա-55բ՝ ՍԻԻՀ

Ω – ՄՄ 1980 (1391), 245ա-265ա՝ ՍԻԻՀ, 269ա-286ա՝ Գրիգոր Երուսաղեմացու ժողովածուն թերի

Ar – ՍՓ ըստ Արևշատյանի հրատարակության՝ С.С. Аревшатын, «Два древних философских фрагмента – ‘Ритор, о природе’ и ‘Философские определения’», *Բանբեր Մատենադարանի* 5, 1960, էջ 376-391

**ԳՐԻԳՈՐԻ ԵՐՈՒՄԱՂԵՄԱՑԻՈՅ ՍԱՀՄԱՆՔ ԶԱՆԱԶԱՆՔ ԱՐՏՈՐՈՇԵԱԼՔ  
ԸՍՏ ՍՐԲՈՅ ԵՎ<sup>1</sup> ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ**

**Ա.1 ՅԱՂԱԿՍ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՆՈՒԱՆՅ**

[1] Զի՞նչ աստուած: Աստուած՝ վսեմական և ինքնաբուն գոյություն<sup>a</sup>:

[2] Աստուած՝ ծայրագոյն և երանեալ բարի<sup>b</sup>:

[3] Աստուած՝ բոլորակերտող և նախախնամիչ յոչէից էացելոցս. և նոյն ինքն եռականութիւն եզականութեամբ երկրպագեալ և միականութիւն երրորդութեամբ բարեպաշտեալ առ ի բոլոր եղականաց, իմանալեաց և ի զգալեաց գոյութիւն գոյածեան<sup>2</sup> և մշտնջենաւոր<sup>c</sup>:

---

a = ՍԻԻՀ Ա.1:

b = ՍԻԻՀ Ա.2:

c = ՍԻԻՀ Ա.3:

## Ա.2 ՀԱՐՑՄՈՒՆՔ ԿԱՐՃԱՌԱՒՏԱԲԱՐ

[1] Ձորիվ գլխով վարի ամենայն իրողություն՝ է, զինչէ, որպիսիինչէ<sup>3</sup>, վասն էր է: Եւ իրողութեանցն՝ ոմանք են և ասին, և ոմանք ոչ են և ոչ ասին, և ոմանք են և ոչ ասին, և ոմանք ասին և ոչ են<sup>a</sup>:

[2] Գոյն է արտադատաւ աչաց<sup>b</sup>:

[3] Մայր ապացուցից իմաստասիրություն է<sup>c</sup>:

[4] Նախ առաջին Պոեմիթևս եգիտ բաժանողական հնարս<sup>d</sup>:

[5] Պարտ է յառաջ սահմանել և ապա բաժանել<sup>e</sup>:

[6] Ինն են գրովի իմաստասիրութեան<sup>f</sup>:

ա. Առաջին գրովն՝ սահման<sup>4</sup> բան կարճատատ յայտնիչ բնութեան ենթակայ իրի<sup>g</sup>: Սակս որոյ և հակասահմանելով ասի անուն և սահման, զի անուն է սահման կարճատատ, իսկ սահման է անուն ծաւալել<sup>h</sup>:

բ. Երկրորդ գրովն՝ զանազանի սահման ի ստորագրութենէ, վասն զի սահման ի բաղկացականաց ձայնից գոյանայ, իսկ ստորագրութիւն<sup>i</sup> ի պատահմանց և պարագայից: Եւ բաղկացական<sup>5</sup> է որ առընթեր գոյացուցանէ և ոչ գորով ապականէ<sup>j</sup>:

<sup>a</sup> Հմմտ. Գաւ. Սահմ. 147. «պարտ է գրեթէ յամենայն իրողութիւնս զորսս զայստիկ խնդրել զգրովս. եթէ է՞, եւ զի՞նչ է, եւ որպիսի՞ ինչ է, եւ վասն է՞ր է: Եւ յիւրապի այստիկ խնդրին, քանզի յիրողութեանցն ոմանք անգոյք են, որպէս եղչերուաբաղն եւ արալէզն, եւ որչափ ինչ մերս վերաստեղծէ մտածութիւն. իսկ ոմանք գոյութիւն ունին»:

<sup>b</sup> = Գաւ. Պորփ. 21.9:

<sup>c</sup> Գաւ. Սահմ. 153, Բ.12, հմմտ. τὴν μητέρα τῶν ἀποδείξεων, φημί δὴ τὴν φιλοσοφίαν (Dav. Def. 8.26):

<sup>d</sup> = Գաւ. Սահմ. 153, Բ.23:

<sup>e</sup> = Գաւ. Սահմ. 154, Բ.32. «պարտ է նախ սահմանել՝ եւ ապա բաժանել»:

<sup>f</sup> Հմմտ. Գաւ. Սահմ. 154, Բ.38-40. «Արդ ... զիմաստասիրութիւն... գրովս ոմանս թուով ինն յարդարեցում»:

<sup>g</sup> = Գաւ. Սահմ. 154, Գ.2-3. «Եկեցում յառաջին գրովն եւ ասացումք, թէ զինչ է սահման: Սահման է բան կարճատատ, յայտնիչ բնութեան ենթակայ իրի», հմմտ. Ὅρος ἐστὶ λόγος σύντομος δηλωτικός τῆς φύσεως τοῦ ὑποκειμένου πράγματος (Dav. Def. 11.17-18 = Doctrina Patrum 264.4):

<sup>h</sup> Հմմտ. Գաւ. Սահմ. 155, Գ.12-13. «հակասահմանին: Քանզի ասեն, եթէ անուն է սահման կարճատատ, իսկ սահման է անուն ծաւալել»:

<sup>i</sup> Երկու անգամ «ստորագրութիւն»-ի փոխարեն, որ համապատասխանում է ὑπογραφή-ին («ուրվագծում, նկարագրություն»), կարդում ենք «ստորագրութիւն»:

<sup>j</sup> Հմմտ. Գաւ. Սահմ. 155, Գ.22-25. «զանազանի սահման ի ստորագրութենէ այսու. վասն զի սահման ի գոյացողականաց ձայնիցն առնու... իսկ ստորագրութիւն ի պատահմանցն առնու եւ զպարագայս ենթակայ իրին յայտնէ... գոյացողականն այն է, որ առընթեր գորով գոյացուցանէ, իսկ ոչ գորով ապականէ» - ծրարած ὑπογραφῆς διαφέρει, ὅτι ὁ μὲν ὀρισμὸς ἐξ οὐσιωδῶν φωνῶν λαμβάνεται... ἡ δὲ ὑπογραφή ἀπὸ συμβεβηκότων λαμβάνεται καὶ τὰ παρεπόμενα τῷ ὑποκειμένῳ πράγματι καὶ τὰ περὶ τὴν φύσιν αὐτοῦ δηλοῦ... οὐσιωδῆς ἐστὶν ὁ παρὸν μὲν σώζει τὸν ἄνθρωπον, ἀπὸν δὲ φθείρει (Dav. Def. 12.20-30):



[1] Զանազանի սահման ի սահմանադրությունէ, որպէս տեսակ ի սեռէ, այսինքն՝ մարդ ի կենդանոյ, զի որ մարդ է, նա և կենդանի է, այլ ոչ որ կենդանի և եթ, նա և մարդ<sup>a</sup>:

[2] Սահման առնու ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց<sup>b</sup>:

[3] Բարկութիւն է եռանդն զստիւն արեան առ ի տենչումն փոխարէն տրամեցուցանելոյ<sup>c</sup>:

[4] Բժշկութիւն է արհեստ առողջութեան արարիչ<sup>d</sup>:

գ. Երրորդ գլուխն՝ սահման սաի ի փոխաբերությունէ ազարակային սահմանաց, զի յիւրեանցն յատուկ վայելեսցեն և յայլոցն փախիցեն<sup>e</sup>: Զանազանին ի սահմանի իր և բառ, յորժամ առաւելու իրն, պակասէ բառն, և յորժամ առաւելու բառն, պակասէ իրն<sup>f</sup>:

դ. Չորրորդ գլուխն՝ անուն առնուն սահմանի կամ յենթակայէ<sup>6</sup> կամ ի կատարմանէ և կամ յերկոցունց<sup>7g</sup>: Յենթակայէ՝ յորժամ ասեմք. իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեան, և ի կատարմանէ՝ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, իսկ յերկոցունց՝ յորժամ շարադրեմք զերկուսեանն առ միմեանս.

<sup>a</sup> Հմմտ. Գալ. Սահմ. 155-156, Գ.28-29. «զանազանի սահման ի սահմանադրությունէ... որպէս մարդ և կենդանի... քանզի որ ինչ մարդ, նոյն և կենդանի, վասն զի ամենայն մարդ կենդանի, բայց ոչ որ ինչ կենդանի՝ նոյն և մարդ» (= Dav. Def. 3.28-29):

<sup>b</sup> Հմմտ. Գալ. Սահմ. 160, Գ.41. «սահման ի սեռէ առնու և ի բաղկացուցիչ զանազանութեանց» = Dav. Def. 4.41:

<sup>c</sup> = Գալ. Սահմ. 160, Գ.48. «բարկութիւն է եռանդն զստիւն արեանն առ ի տենչումն փոխարէն տրամեցուցանելոյ» = Dav. Def. 18.27-28, Միտ՝ Բ.31: Հմմտ. Միտ՝ Բ.44, Բարդաղիան Ս. 5| ὄργη τί ἐστίν· ὁ μὲν γὰρ ὄρεξιν ἀντιλυσήσεως ἢ τι τοιοῦτον, ὁ δὲ ζέσιν τοῦ περὶ καρδίαν αἵματος καὶ θερμοῦ (Arist. De an. 403.a.30), τί ἐστίν ὄργη; ζέσις τοῦ περὶ καρδίαν αἵματος δι' ὄρεξιν ἀντιλυσήσεως (Themist. In Phys. 2,2.66.16):

<sup>d</sup> Հմմտ. Միտ՝ Բ.10:

<sup>e</sup> Հմմտ. Գալ. Սահմ. 157, Գ.2-3. «Սկիզբն արացում և երրորդ գլխոյն... սահման սաի ի փոխաբերությունէ գեստից և ազարակային սահմանաց. քանզի... յիւրեանցն վայելեսցեն և յայլոցն փախիցեն», հմմտ. = Dav. Def. 15.11-15:

<sup>f</sup> Հմմտ. Գալ. Սահմ. 158, Գ.6. «ի սահմանս հակակիրք միմեանց լինին բառ և իրք. քանզի յորժամ սահմանն առաւելու բառիք, նուազեն իրք» = ἐν τοῖς ὅροις ἀντιπεπονθότως ἔχουσιν αἱ λέξεις πρὸς τὰ πράγματα· ἡνίκα μὲν γὰρ ὁ ὅρος πλεονάσῃ ταῖς λέξεσιν, ἐλλείπει τοῖς πράγμασιν (Dav. Def. 15.27-29):

<sup>g</sup> Գալ. Սահմ. 158, Գ.13-14. «Բայց եկեսցում և ի չորրորդ գլուխն և ասացումք, թէ ուստի՞ առնու սահման: Եւ պարտ է գիտել, եթէ սահմանի կամ յենթակայէ առնուն և կամ ի կատարմանէ, և կամ յերկոցունց» = "Ἐλθωμεν δὲ καὶ ἐπὶ τὸ τέταρτον καὶ εἴπωμεν πόθεν λαμβάνονται οἱ ὅρισμοί. ἰστέον ὅτι οἱ ὅρισμοί λαμβάνονται ἢ ἀπὸ τοῦ ὑποκειμένου ἢ ἀπὸ οὗ τέλους ἢ ἀπὸ τοῦ συναμφοτέρου, τοῦτ' ἔστιν ἀπὸ τοῦ ὑποκειμένου ἅμα καὶ τοῦ τέλους (Dav. Def. 16.13-15):

իմաստասիրություն է խոկումն մահու և նմանություն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան<sup>a</sup>:

ե. Հինգերորդ գլուխն՝ կատարելություն և առողջություն սահմանի է անդրադարձիլ առ սահմանելին<sup>b</sup>, և անկատարություն և յոռություն սահմանի է ոչնչ կարիլ անդրադարձիլ և ոչ կարիլ լինի յառաւելութենէ և ի նուագութենէ<sup>c</sup>:

զ. Վեցերորդ գլուխն՝ ցուցանէ, թե վեց են սահմանք իմաստասիրութեան, և են այսոքիլ՝ ա. իմաստասիրություն է գիտություն գոյիցն, ըստ որում գոյք են, բ. գիտություն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց, գ. իմաստասիրություն է խոկումն մահու, դ. նմանություն աստուծոյ ըստ կարողություն մարդկան, ե.<sup>8</sup> արհեստ արհեստից և մակացություն մակացութեանց, զ.<sup>9</sup> իմաստասիրություն է սիրելություն իմաստութեան<sup>d</sup>:

է. Երկուերորդ գլուխն՝ թէ ընդէ՞ր իմաստասիրություն քան զվեցոյ ոչ առաւելու և ոչ նուագէ, վասն զի դա է մայր և ապացուցություն արհեստից և ամենայն մակացութեանց և ի թիւ առաջին կատարեալ թիւ վեցն է, որ

<sup>a</sup> Գաւ. Սահմ. 159-160, Գ.38-39. «ի կատարմանէ, եւ ասեմք՝ յենթակայէ, եթէ իմաստասիրություն է գիտություն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց. իսկ ի կատարմանէ, եթէ իմաստասիրություն է նմանություն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: Իսկ յերկոցունցն, որպէս յորժամ ասեմք, եթէ իմաստասիրություն է գիտություն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց եւ նմանություն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան», հմմտ. οὕτως οὖν καὶ τὴν φιλοσοφίαν ὀριζόμεθα ἀπὸ μὲν τοῦ ὑποκειμένου, ὡς ὅταν εἴπωμεν ‘φιλοσοφία ἐστὶ γνῶσις θεῶν τε καὶ ἀνθρωπίνων πραγμάτων’, ἀπὸ δὲ τοῦ τέλους ‘φιλοσοφία ἐστὶν ὁμοίωσις θεῶ κατὰ τὸ δυνατόν ἀνθρώπων’ (Dav. Def. 18.6-9):

<sup>b</sup> Գաւ. Սահմ. 161, Գ.61. «Իսկ հինգերորդ գլուխն, յորում խնդրեմք, եթէ ո՞ր է կատարեալ սահման եւ ո՞ր անկատար: Եւ պարտ է գիտել, եթէ կատարեալ սահման այն է, որ անդրադարձի առ սահմանելին...» = Πέμπτον δὲ ὑπάρχει κεφάλαιον, ἐν ᾧ ζητοῦμεν ποῖος τέλειος ὀρισμός καὶ ποῖος ἀτελής. ἰστέον ὅτι τέλειος ὀρισμός ἐστὶν ὁ ἀντιστρέφων πρὸς τὸ ὀριστόν (Dav. Def. 19.9-11):

<sup>c</sup> Հմմտ. Գաւ. Սահմ. 161, Գ.65-66. «Իսկ անկատար սահման է, որ ոչ անդրադարձի, քանզի յոռություն սահմանի է ոչ անդրադարձիլ: Իսկ յոռություն սահմանի լինի յառաւելութենէ եւ ի նուագութենէ սահմանի» = ἀτελής δὲ ὀρισμός ἐστὶν ὁ μὴ ἀντιστρέφων: κακία γὰρ ὄρου ἐστὶ τὸ μὴ ἀντιστρέφειν. τοῦτο δὲ γίνεται ἐκ τοῦ πλεονάζειν τὸν ὄρον ἢ ἐλλείπειν (Dav. Def. 19.13-11):

<sup>d</sup> Գաւ. Սահմ. Ե.4-9. «Նախ եւ առաջին, որ ասեն՝ թէ իմաստասիրություն է գիտություն գոյիցն, ըստ որում գոյք են: Երկրորդ, իմաստասիրություն է գիտություն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: Երրորդ, որ ասէ՝ իմաստասիրություն է խոկումն մահու: Չորրորդ, առ այսոքիլ է սահման, որ ասէ, թէ իմաստասիրություն է նմանություն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: Հինգերորդ, որ ասեն՝ թէ իմաստասիրություն է արհեստ արհեստից եւ մակացություն մակացութեանց: Վեցերորդ ի վերայ այսոցիկ, որ ասեն՝ իմաստասիրություն է սիրելիություն իմաստութեան» = Dav. Def. 20.27-31:

ինձեան մասամբ գինձն բովանդակէ, պարտ էր կատարելագոյն իրողութեան իմաստասիրութեան<sup>10</sup> կատարելագոյն թոնց լինել հանգիտաթիւ<sup>a</sup>:

ը. Ուրբերոյ գլուխն ցուցանէ զկարգատրութիւն սահմանացն<sup>b</sup>: Առաջին է<sup>11</sup> դաս կարգատրութեան, որ ի հուպ ենթակայէ սահմանն է՝ գիտութիւն էակաց, ըստ որում էակն են: Երկրորդ դաս կարգատրութեան, որ ի հետի ենթակայէ սահմանն է՝ գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց: Երրորդ դաս կարգատրութեան<sup>12</sup>, որ ի հուպ կատարմանէ սահմանն է իմաստասիրութիւն է խոկումն մահու: Չորրորդ դաս կարգատրութեան<sup>13</sup>, որ ի հետի կատարմանէ սահմանն<sup>14</sup> է՝ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութիւն մարդկան: Հինգերորդ դաս կարգատրութեան<sup>15</sup> ունի, որ յարտունութենէ սահմանն է՝ արհեստ արհեստից և մակագրութիւն մակագրութեանց: Վեցերորդ կարգ սահմանին է՝ ստուգաբանութիւն, որ ասէ՝ սիրելութիւն իմաստութեան<sup>16c</sup>:

թ. Իններորդ գլուխն ցուցանէ, թէ ո՞չք են գտաւր<sup>17</sup> սահմանացս այսոցիկ: Երկրորդն սոքա, որ յենթակայէ սահմանն են, և մի որ ի ստուգաբանութենէ, ի Պիրթագորէ լեալ գտեաւր<sup>18</sup>, իսկ երկու սահմանն են, որ ի կատարմանէ, ի Պրատունէ գտան, իսկ որ յարտունութենէ սահմանն է, յԱրիստոտել վերաբերի<sup>d</sup>:

<sup>a</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. 164, Ե.41-42. «վասն զի առաջին կատարեալ թիւ վեցն է, զի ոչ ոք է այլ յառաջ քան զսա կատարեալ թիւ, վասն այսորիկ վեց են սահմանն իմաստասիրութեան: Քանզի պարտ է մարն եւ պատճառին ամենայն արհեստից որպէս կատարելագունի՝ կատարելագունի զարդարել թուով» = *ἐπειδὴ πρῶτος τέλειος ἀριθμὸς ὁ ἕξ ἐστὶν (πρὸ αὐτοῦ γὰρ ἄλλος τέλειος οὐκ ἔστιν), τούτου χάριν ἕξ εἰσὶν οἱ τῆς φιλοσοφίας ὀρισμοί: ἕδει γὰρ τὴν μητέρα τῶν τεχνῶν καὶ ἐπιστημῶν τῷ πρώτῳ καὶ τελείῳ ἀριθμῷ κεκοσμηθῆναι* (Dav. Def. 22.34-23.2):

<sup>b</sup> Դաւ. Սահմ. 164, Զ.2. «Եկեցում եւ յուրբերոյ գլուխն եւ ասացում զկարգատրութիւն սահմանաց իմաստասիրութեան» = *Ἐλθόμεν ἐπὶ τὸ ὄγδοον κεφάλαιον καὶ εἴπωμεν τὴν τάξιν τῶν ὀρισμῶν τῆς φιλοσοφίας* (Dav. Def. 23.3-4):

<sup>c</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. Զ.7-12. «Առաջին սահման իմաստասիրութեան է, որ ի հուպ ենթակայէն է, այն որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն, ըստ որում էակն են: Երկրորդ սահման, որ ի հետի ենթակայէն է, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: Երրորդ սահման իմաստասիրութեան է, որ ի հուպ կատարմանէն է, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու: Չորրորդ սահման ի հետի կատարմանէն, որ ասեն՝ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: Հինգերորդ սահման, որ յարտունութենէ, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակագրութիւն մակագրութեանց: Վեցերորդ սահմանին իմաստասիրութեան ի ստուգաբանութենէ է, որ ասեն՝ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան» = Dav. Def. 23.17-21:

<sup>d</sup> Հմմտ. Դաւ. Սահմ 165, Զ.33-34. «Եկեցում յիններորդ գլուխն եւ ասացում՝ ո՞րք են գտաւր սահմանացս այսոցիկ: Եւ պարտ է գիտել, թէ երկուց սահմանացդ, որ յենթակայէն են, եւ միոյ, որ ի ստուգաբանութենէ, զՊիրթագորասս ասեմք գտաւր» = Dav. Def. 25.25-27,

[7] Արդարություն է, որ զուգահեռասարություն հումատեսակացն պահել:

[8] Սուրբ է որ աստուածայնոցն ունի փոյթ յանձին<sup>a</sup>:

[9] Առաքինություն հոգոյ են չոր՝ արություն, արդարություն, ողջախոհություն, խոհեմություն<sup>b</sup>:

[10] Մասուն հոգոյն զարդարին յառաքինութեանց, բան զարդարի խոհականութեամբ, բարկություն զարդարի արութեամբ, ցանկություն զարդարի ողջախոհութեամբ, իսկ արդարություն ընդ ամենայն մասունս հոգոյն անցեալ երևի, սակս որոյ յարմարություն և բարեկարգություն պահեսցի ի մէջ<sup>19</sup> նոցա, յաղագս որոյ ոմն իշխէ, որպէս բան, և ոմանք իշխեն և իշխին, որպէս բարկություն, քանզի բարկություն իշխի ի բանէ, և իշխէ ցանկութեան, իսկ ցանկություն իշխի միայն<sup>c</sup>:

[11] Բնական<sup>20</sup> առաքինություն է, որք միանգամ ըստ խառնուածոյ գոն մարմնոյն<sup>d</sup>, որք ոչ հետևին միմեանց<sup>e</sup>, որք և ծառայականք և անբանք կոչին. ծառայականք վասն ի հարկէ հետևեալք խառնուածոյ մարմնոյն, և անբանք վասն զի ոչ գիտէ զպատճառն, վասն էր առաքինանայ: Եւ դարձեալ վասն<sup>21</sup> զի և<sup>22</sup> յանբանս գտանի բնաւորեալ առաքինություն<sup>f</sup>, որպէս տաս-

166, 2.40. «Իսկ երկու սահմանն վերաբերին ի Պղատոն, որք ի կատարմանն են», հմմտ. Dav. Def. 26.13-14, 2.45. «Իսկ որ յարտունութենէ սահմանն է՝ վերաբերի յԱրիստոտէլ» = Dav. Def. 26.26-27:

<sup>a</sup> = Գալ. Սահմ. 174, Ժ.49. «սուրբ է, որ յաստուածայնոցն ունի փոյթ յանձին», հմմտ. ὁστος δὲ ὁ περὶ τὰ θεῖα ἐσποῦδακῶς (Dav. Def. 37.31-32):

<sup>b</sup> Գալ. Սահմ. 174, Ժ.52. «չորք առաքինությունն են հոգոյ՝ արիություն, արդարություն, ողջախոհություն, խոհեմություն» = τέσσαρες εἰσιν αἱ ἀρεταὶ τῆς ψυχῆς, ἀνδρία δικαιοσύνη σωφροσύνη φρόνησις (Dav. Def. 38.1-2):

<sup>c</sup> Հմմտ. Գալ. Սահմ. 174-175, Ժ.56-58. «Եւ այսոքիկ յիրաւի, վասն զի պարտ է զիրաւանչիր մասն հոգոյ իրականաւ զարդարիլ առաքինութեամբ, ուստի բան խոհականութեամբ զարդարեալ գոյ, իսկ բարկություն՝ արիութեամբ, իսկ ցանկություն՝ ողջախոհութեամբ: Եւ վասն զի ոչ միայն պարտ է իւրաւանչիր մասին առանձնականաւ զարդարիլ առաքինութեամբ, այլ և յարմարումս առ միմեանս և բարեկարգություն պահել. վասն այսոքիկ և արդարություն ընդ ամենեսեան անցեալ երևի, զի մի միայն ի միում մասին, այլ և յամենեսեան ի մասունս տեսանեմք, զի յարմարություն և բարեկարգություն պահեսցի: Եւ որպէս յամենայնումս տեսանեմք գոմանս իշխան միայն գոյ, որպէս զաստուածայինն, և զոմանս իշխան և ընդ իշխանութեամբ, որպէս զմարդկայինս. քանզի մարդկայինս ընդ իշխանութեամբ են աստուածայնոցն, և իշխեն անասուն կենդանեաց. իսկ այլքն ընդ իշխանութեամբ միայն, որպէս նոքին իսկ անասուն կենդանիքն», հմմտ. Dav. Def. 38.8-17:

<sup>d</sup> Հմմտ. Սիժէ Բ. 45:

<sup>e</sup> Գալ. Սահմ. 175, Ժ.65. «մակտացական առաքինությունն ասացան վասն բնականացն. իսկ բնականք ասին, որք միանգամ ըստ խառնուածոյ մարմնոյ գոն», հմմտ. Dav. Def. 38.32-33:

<sup>f</sup> Հմմտ. Սիժէ Բ. 39:

րակ ողջախոհ, որպէս ուղտ՝ խոհեմ, <sup>23</sup>առիծ՝ արի, <sup>24</sup>արագիլ՝ արդար, զի զծերացեալ հայրն կերակրէ<sup>a</sup>:

[12] Իսկ մակստացական առաքինութիւն է, որ գիտէ, վասն էր առաքինանայ, և կամ յաւանդութենէ կատարէ զառաքինութիւն<sup>b</sup>:

[13] Կրկնապատկութեամբ սահմանեալն Արիստոտելի<sup>25</sup> զիմաստասիրութիւն՝ արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց, առաջնովն թագաւորի նմանեցոյց զիմաստասիրութիւն<sup>26</sup> և երկրորդումն՝ աստուծոյ<sup>c</sup>:

[14] Բանական արուեստ և անբան: Բանական է, որ բանի ուսուցանէ, իսկ անբան՝ ձեռագործ արհեստ<sup>d</sup>:

[15] Կատարեալ սահման է, որ զուգադարձի առ սահմանելին, և անկատար է, որ ոչ կարէ հակադարձել<sup>27e</sup>:

[16] Մակացութիւն երկակի<sup>28</sup> է՝ ներստորադրական և աններստորադրական: Եւ ներստորադրական է, որ ներգործէ, և զպատճառ ներգործութեան յայլմէ խնդրէ ուսանել, և աններստորադրական է, որ ի գործելն, ոչ ունի պէտս զպատճառն յայլմէ ուսանել<sup>f</sup>:

<sup>a</sup> Դաւ. Սահմ. Ժ.65-68. «որք եւ ծառայական կոչին եւ անբանք: Եւ ծառայական կոչին՝ որպէս ի հարկէ հետեւեալ խառնուածոյ մարմնոյն. քանզի որ ի ցուրտ խառնուածոյն է, նա ի հարկէ ողջախոհ գոյ: Իսկ անբան կոչին՝ վասն ոչ գիտելոյ զպատճառն, թէ վասն է՞ր պարտ է ողջախոհ լինել: Եւ դարձեալ, անբան կոչին, վասն զի եւ յանբան կենդանիսն բնաւորեցաւ այսպիսի առաքինութիւն տեսանիլ, որպէս յորժամ ասեմք զառարակ ի բնութենէ ողջախոհ, եւ զուղտ խոհեմ, եւ զառիծ արի, եւ զարագիլ արդար, վասն զի զծերացեալ հայրն կերակրէ», հմմտ. Dav. Def. 39.1-9:

<sup>b</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. 175, Ժ.69. «Եւ դարձեալ, մակստացական առաքինութիւն ասացան վասն բարոյականաց առաքինութեանց, որք յաւանդութենէ եւ ի պատուիրելոյ, որպէս յորժամ ոք ի պատուիրելոյ գոյ ողջախոհ» = ή και πάλιν ‘ἐπιστημονικαί’ πρόσκειται διὰ τὰς ἠθικὰς ἀρετάς· ἠθικαὶ δὲ εἰσὶν αἱ ἀπὸ παραδόσεως τινος καὶ παραγγελίας οὖσαι, οἷον ὡς ὅταν τις ἀπὸ παραδόσεως ἢ παραγγελίας τινός ἐστι σώφρων (Dav. Def. 39.9-11):

<sup>c</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. 175-176, ԺԱ. 4-6. «Այլ պարտ է խնդրել, թէ զի՞նչ կամիցի երկախանչիւրոցը վերակրկնակութիւն, այսինքն արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց. քանզի շատ է ասելն՝ իմաստասիրութիւն է արհեստ եւ մակացութիւն: Արդ խնդրելի է, թէ վասն է՞ր առարեաց արհեստից եւ մակացութեանց: Եւ պարտ է ասել, թէ ի ձեռն առաջին կրկնապատկութեանն, այսինքն արհեստ արհեստից, թագաւորի նմանեցոյց զիմաստասիրութիւն. իսկ ի ձեռն երկրորդ կրկնապատկութեանն, այսինքն մակացութիւն մակացութեանց, աստուծոյ նմանեցոյց զիմաստասիրութիւնն», հմմտ. Dav. Def. 39.21-26:

<sup>d</sup> Հմմտ. ՍԻԻՀ Բ.40:

<sup>e</sup> Դաւ. Սահմ. 177, ԺԱ.31. «Իսկ կատարեալ սահման արմոքիկ են, որ զուգադարձին առ սահմանելիսն»:

<sup>f</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. 178-179, ԺԲ.18-20. «Եւ ներստորադրական է, որ առնու սկզբունս, որք պէտս ունին ապացուցութեան եւ որոց զպատճառն անգիտանայ. որպէս յորժամ երկրաչափն առնու խոստովանաբար, եթէ նշան է անմասն ինչ, զորոյ զպատճառն: Ոչ գիտէ, այլ զայն բնական իմաստասիրին է: Իսկ աններստորադրական մակացութիւն է, որ առնու սկզբունս զհասարակաց մտածութիւնս, որք ոչ ունին պէտս ապացուցութեան. որպէս յորժամ ասեմք, թէ աստուած բարի է, որ է հասարակաց մտածութիւն. վասն զի ամենայն ոք

[17] Արհեստ է բաղկացություն ի հասողութենէ ներհմտութեամբ նախակրթեալ առ ի պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղումս<sup>a</sup>:

[18] Մակացություն է գիտութիւն անսխալ<sup>29</sup> իւրոց ենթակայից ունողութեանց, ըստ որում ունին զբնութիւն<sup>b</sup>:

[19] Զանազանին ի միմեանց արհեստ և մակացութիւն, զի թէպէտ ըստ գիտութեան երկոքին անսխալ են, այլ մակացութիւն և ինքն անսխալ է, և ենթակայն<sup>30</sup>, որպէս աստեղաբաշխութիւն և աստեղք, և կամ որպէս երկրաչափութիւն և երկիր: Իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է, իսկ ըստ ենթակային՝ սխալական, որպէս հիւանդութիւն և փայտ, բրտութիւն և կաւ, ի ձեռս<sup>31</sup> առանձին բոլորին է շարակցեալ գոլ սկսման և կատարման<sup>c</sup>:

[20] Աստիճանք են իմաստասիրութեան հինգ՝ զգայութիւն, երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, միտք: Եւ զգայութիւն է առաջիկայ իրի մասնական գիտութիւն: Իսկ կարծիք է երկակի՝ է որ պատճառաւ, և է որ առանց պատճառի: Առանց պատճառի է, որ զբանական<sup>32</sup> հոգի կարծիքէ անմահ գոլ, իսկ պատճառաւ է<sup>33</sup>, որ զբանականն հոգի գիտէ ինքնաշարժ, ինքնաշարժն՝ մշտաշարժ, մշտաշարժն՝ անմահ: Իսկ տրամախոհութիւն է ընդհանրականացն հանդերձ պատճառաւ գիտութիւն<sup>d</sup>:

խոստովանի, թէ աստուած բարի է, եւ ոչ ինչ ունի պէտս ապացուցութեան», հմմտ. Dav. Def. 43.12-16:

<sup>a</sup> = Դաւ. Սահմ. 179, ժԲ.31. «արուեստ է բաղկացություն ի հասողութենէ, ներհմտութեամբ նախակրթեալ առ պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղումս» = τέχνη ἐστὶ σύστημα ἐκ καταλήψεων ἐμπειρία συγγεγυμνασμένη πρὸς τι τέλος εὐχρηστον τῶν ἐν τῷ βίῳ (Dav. Def. 44.5-6):

<sup>b</sup> Դաւ. Սահմ. 179-180, ժԲ.38. «մակացություն է գիտութիւն անսխալ իւրոց ենթակայից իրողութեանց, ըստ որում ունին զբնութիւն», հմմտ. ἐπιστήμη δὲ ἐστὶν... γνῶσις ἀπταιστος τῶν ὑποκειμένων αὐτῇ πραγμάτων, καθὸ ἔχουσι φύσεως (Dav. Def. 44.17-20):

<sup>c</sup> Դաւ. Սահմ. 180, ժԲ.43-45. «Արդ զանազանին ի միմեանց արհեստ և մակացութիւն, վասն զի մակացութիւն և ենթակայն իւր անսխալք են, որպէս երկիր և երկրաչափութիւն, աստեղագիտութիւն և աստեղք. քանզի և աստեղագիտութիւն անսխալ է, և ենթակայն նորին, այսինքն աստեղք: Իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է. իսկ ըստ ենթակային վասն զի հոսանուտ է, թոյս սխալական գոլ. որպէս հիւանդութիւն և փայտ՝ նորին ենթակայ», հմմտ. Dav. Def. 44.25-28:

<sup>d</sup> Դաւ. Սահմ. 181, ժԳ.10-12. «բազում իսկ աստիճանք են իմաստասիրութեան: Քանզի պարտ է գիտել զհինգ գիտական զարութիւնս՝ զգայութիւն, զերևակայութիւն, զկարծիք, զտրամախոհութիւն, զմիտք: Եւ զգայութիւն է առաջիկայ իրի մասնական գիտութիւն», 16-18. «Իսկ կարծիք երկակի ասին, է որ պատճառաւ և է որ առանց պատճառի: Եւ առանց պատճառի՝ որպէս յորժամ ոք զբանական հոգի կարծիքէ անմահ, ոչ գիտելով զպատճառն, իսկ պատճառաւ՝ յորժամ և զպատճառն գիտէ զանմահութեանն: Եւ պարտ է գիտել, զի կարծիք հանդերձ պատճառաւ եզրակացութիւն է առաջարկութեանց. որզոն, հոգի ինքնաշարժ, ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ է», 20. «Իսկ տրամախոհութիւն է ընդհանրականացն հանդերձ պատճառաւ գիտութիւն», հմմտ. Dav. Def. 45.26-30, 47.1-6, 9:

[21] Տեսակք են թուականութեան<sup>34</sup> երկու՝ դար և կոնատ: Դար է, որ յերկուս զոյգս բաժանի, և կոնատ՝ որ ոչ կարէ յերկուս զոյգս բաժանիլ: Սկիզբն հանուր թուոց՝ մի, իսկ դարին՝ երկու<sup>a</sup>:

[22] Յատկութիւն է թուոց՝ բազմապատկելով մեծ թիւ բացակատարել քան թէ շարադրելով, և երկակն բազմապատկելով և շարադրելով, զնոյն թիւ կատարէ<sup>b</sup>: Բաժանումն և մակաբաժանումն և ստորաբաժանումն<sup>35</sup>, որպէս զկենդանին ի բանական և ի մահկանացուն և ի մարդն<sup>c</sup>:

[23] Իմաստասիրութիւն բաժանի ի տեսականն և ի գործականն: Տեսականին՝ ճանաչել զամենայն գոյսս, և գործականին՝ ուղղութիւն առնել բարուց<sup>d</sup>: Եւ սակս այսորիկ ի տեսականն և ի գործականն բաժանի իմաստասիրութիւն, զի էակացեալ է ի մեզ տեսականն և գործականն<sup>e</sup>: Զի որպէս միտք խնդրեն գտանել զիմաստ և զբան, և ձեռք խնդրեն շաշափել և ներգործել զնիւթական ինչ իրս, յաղթահարեն և յաղթահարին ի միմեանց տեսականն և գործականն: Տեսականն յաղթահարէ զգործականն, զի ամենայն գոյսս ենթակային նմա առ ի գիտել, իսկ գործականն յաղթահարէ զտեսականն ի ձեռն կատարման բարոյն: Զի տեսականին կատարումն է ճշմարիտն, և պատուականագոյն է բարին քան զճշմարիտն, քանզի որ<sup>36</sup> ճշմարիտ է, նա և բարի, այլ ոչ ամենայն բարի ճշմարիտ<sup>f</sup>:

<sup>a</sup> Դաւ. Սահմ. 182, ԺԴ.2-5. «Թուականութեան երկուս տեսակք են՝ դար և կոնատ: Եւ դար է, որ կարող գոյ յերկուս զոյգս բաժանիլ... Իսկ կոնատ, որ ոչ կարող գոյ յերկուս զոյգս բաժանիլ... ընդհանուր սկիզբն դարիցն և կոնատացն միակն է, իսկ դարին երկեակն», հմմտ. Dav. Def. 52.7-13, 20-21:

<sup>b</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. 182, ԺԴ.7. «Վասն զի ոչ ունի զյատկութիւն թուոյ յինքեան, վասն զի ամենայն թիւ բազմապատկելով մեծ թիւ բացակատարէ, քան շարադրելով», հմմտ. οἱ ἀριθμοὶ πολυπλασιαζόμενοι ἐφ' ἑαυτοῦς μείζονα ἀριθμὸν ἀποτελοῦσιν ἤπερ συντιθέμενοι ἑαυτοῖς (Dav. Def. 49.28-30):

<sup>c</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. ԺԵ.5. «զի՞նչ է բաժանումն և մակաբաժանումն և ստորաբաժանումն՝ ուսցումք» = τί ἐστι διαίρεσις καὶ τί ἐπιδιαίρεσις καὶ τί ὑποδιαίρεσις (Dav. Def. 55.7-8):

<sup>d</sup> Դաւ. Սահմ. ԺԵ. 9. «Իմաստասիրութիւն բաժանի ի տեսականն և ի գործականն, զի ի ձեռն տեսականին գիտացումք զամենայն գոյսս. իսկ ի ձեռն գործականին ուղղութիւն արացումք բարուց մեռոց» = ἡ φιλοσοφία διαιρεῖται εἰς θεωρητικὸν καὶ πρακτικόν. καὶ διὰ μὲν τοῦ θεωρητικοῦ γινώσκει πάντα τὰ ὄντα, διὰ δὲ τοῦ πρακτικοῦ κατόρθωσιν ποιεῖται τῶν ἠθῶν (Dav. Def. 55.17-19):

<sup>e</sup> Դաւ. Սահմ. ԺԵ. 13. «Վասն այնորիկ իմաստասիրութիւն ի տեսականն և ի գործականն բաժանեցաւ, վասն զի էակացեալ է ի մեզ տեսականն և գործականն» = διὰ τοῦτο ἡ φιλοσοφία εἰς θεωρητικὸν καὶ πρακτικὸν διηρέθη, ἐπειδὴ συνουσίωται ἡμῖν καὶ τὸ θεωρητικὸν καὶ τὸ πρακτικόν (Dav. Def. 55.25-27):

<sup>f</sup> Հմմտ. Դաւ. Սահմ. ԺԵ. 27-31. «Երկաբանչիւր ոք ի սոցանէ յաղթահարին ի միմեանց և յաղթահարեն զմիմեանս. քանզի տեսականն յաղթահարէ զգործականն ըստ ենթակային, քանզի տեսականին ամենայն գոյք ենթակային առ ի գիտել, իսկ գործականին՝ մարդկային միայն հոգիք, քանզի զմարդկային միայն զհոգիս զարդարէ, և ոչ զանբանիցն... Իսկ գոր-

[24] Ամենայն գոյքս եռակի են՝ է որ ենթակայութեամբ և մակամտածութեամբ նիւթաւորք գոն, և է որ ենթակայութեամբ և մակամտածութեամբ աննիւթք, և է որ ենթակայութեամբ նիւթաւորք և մակամտածութեամբ աննիւթք, որպէս ձեւ<sup>a</sup>, տեսակ, լոյս, կեանք, կենդանաստեղծ և որ ինչ սոցին նման է:

Որ ի պակասութենէ տեղի աստուածաբանութեան է, յորժամ ըստ իրացն մտածութիւն լինի ասել բեզ անեղ, անստացական, անեղծ, անմահ, անսպական, անսկիզբն, անժամանակ, աննիւթք, անմարմին, անձև, անորակ, անհանակ և որ ինչ այսոցիկ ազգակից է:

Իսկ որ<sup>37</sup> ի ստորասական տեղեացն սկիզբն առնելի է ի նախադասութեանց, ասելով, թէ ահաւոր է, յաւետախաղաց է, ի հարկէ է, մշտնջենաւոր է, լոյս է, կեանք է, կենդանաստեղծ է և որ ինչ միանգամ ըստ հակասութեան առաջնոյ մասինն ներառկայանայ:

Որպէս ըստ միւսոյ մասինն հակասութեան, որոյ բացասութիւն<sup>38</sup> անուն է, որ յայսմ տեղոյ դիմեալ, ասելի է այսպէս, թէ աստուած ոչ է նիւթք, ոչ է մարմին, ոչ է շարադրեալ բնութիւն, ոչ է հասանելի, ոչ է սահմանելի, և այսոքիկ յաղագս այսոցիկ:

Իսկ յորժամ զբնութեանն ճառս ի մէջ առնուա, այս տեղի է աստուածաբանութեան, յորում թողի է զխտրանս<sup>39</sup> ստորասութեան և բացասութեան, ունակութեան և պակասութեան:

Այլ ամենեւնորք զամենայն ասելի է, որք միանգամ ըստ իմացուածոյ իրացն իսկագոյն ճառիւք ի բնութիւն վերաբերին, ի ձեռն ասելոյ յաւետախաղաց ի հարկէ էակ, առաջին բնութիւն աստուած, հզաւ, սուրբ, ամենակալ, անմահ և անսպական, որ ոչ ունի սկիզբն շարժման և դադարման:

Այսոքիկ ամենեւեան զբնութեանն հասարակութիւն նշանակեն, իսկ եթէ

---

ձականն յաղբահարէ զտեսականն ըստ կատարմանն, վասն զի կատարումն տեսականին նշմարութիւն է... Իսկ բարին պատուականագոյն է քան զնշմարիտն... քանզի ամենայն որ նշմարիտ է, նա եւ բարի է, այլ ոչ ամենայն բարի նշմարիտ է» = ἐκάτερον τούτων νικᾷ τὸ ἕτερον καὶ νικᾶται ὑπὸ τοῦ ἑτέρου· καὶ γὰρ τὸ θεωρητικὸν νικᾷ τὸ πρακτικὸν κατὰ τὸ ὑποκείμενον, ὅτι τῷ μὲν θεωρητικῷ πάντα τὰ ὄντα ὑπόκεινται πρὸς γνῶσιν τῷ δὲ πρακτικῷ μόναι αἱ ἀνθρώπιναί ψυχαί· μόνος γὰρ τὰς ἀνθρωπίνας ψυχὰς κοσμεῖ τὸ πρακτικόν, οὐ μὴν καὶ τὰς τῶν ἀλόγων... τὸ δὲ πρακτικὸν νικᾷ τὸ θεωρητικὸν κατὰ τὸ τέλος· τέλος μὲν γὰρ τοῦ κοῦ ἡ ἀλήθεια... τὸ δὲ ἀγαθὸν τιμιώτερον ἐστὶ τοῦ ἀληθοῦς ὡς περιεκτικώτερον· καὶ γὰρ εἴ τι μὲν ἀληθές, τοῦτο καὶ ἀγαθόν, οὐκ εἴ τι δὲ ἀγαθόν, τοῦτο καὶ ἀληθές (Dav. Def. 56.18-29):

<sup>a</sup> Գաւ. Սահմ. ժՁ. 12-16. «ամենայն գոյք եռակի են՝ կամ ենթակայութեամբ եւ մակամտածութեամբ նիւթաւորք գոն... եւ կամ ենթակայութեամբ եւ մակամտածութեամբ իսկ աննիւթք... եւ կամ ենթակայութեամբ նիւթաւորք գոն, իսկ մակամտածութեամբ աննիւթք, որպէս ձեւ» = τὰ δὲ ὄντα τριττά ἐστίν· ἢ γὰρ καὶ τῆ ὑποστάσει καὶ τῆ ἐπινοίᾳ ἐνυλά εἰσίν.. ἢ καὶ τῆ ὑποστάσει καὶ τῆ ἐπινοίᾳ ἄνυλά εἰσίν... ἢ τῆ μὲν ὑποστάσει ἐνυλά εἰσι τῆ δὲ ἐπινοίᾳ ἄνυλα ὡσπερ τὰ σχήματα (Dav. Def. 58.1-9):



ի դէմն փոփոխիցես, զմտածութիւն բանիդ ըստ իրացն, այս տեղի աստուածաբանութեան զմիայնակութիւն առանձնականացն ցուցանէ: Վասն զի նշմարիտ աստուածաբանութիւն անտարանական հոգին ուսուցանէ, զի միոսմբնութեան աստուածութեանն երիս դէմն և երիս անձնատրոսութիւնս աներկբայաբար և առանց յապաղանաց քարոզէ գոյ, և երեք են զորոց թիւն է, զորս յատկապէս և ոչ հասարակաբար ունին:

Քանզի յորժամ ասես Հայր և անսկիզբն և անծին և անպատճառ և ծնաւոր և պատճառ և յառաջաբերաւոր, այսոքիկ դիմաց առանձնատրոսութիւնմբ ի հար<sup>40</sup> ենթակայութեան ասին գոյ և ոչ յարմարին սոքա ոչ Որդայ և ոչ Հոգայն սրբոյ, զի մի գղէմսն խառնակիցեմք, վասն զի յաւերժականացն առանձնատրոսութիւնմ անշարժք, անփոփոխելիք և անխառնակելիք յաւերժաբար յիրաբանչիրս գոն: Իսկ եթէ ասես Որդի և բան և միածին և ծնեալ, յայտնապէս այսոքիկ յորդայ ենթակայութեանն ենթակայանան, և ոչ փոփոխին Հար և ի Հոգայն սրբոյ ենթակայութիւնս, որպէս յառաջաբերին և անծնելաբար բխումն ի Հարէ, և Հոգի սուրբ գոյ և միսիթարիչ ի սորին ենթակայութեան տեսանի անկարափոխելի գոյ ի Հարէ<sup>41</sup> և ի յՈրդայ ենթակայութիւնս: Զի թէպէտ ծնեալն զբնութիւն ունի ծնաւորին իւրոյ, զի նոյն է բնութեամբ, այլ դէմն ոչ ունի զիւրոյ ծնաւորին, այլ զիւրն ըստ իւրոց առանձնական յատկութեանցն, նոյնպէս յառաջաբերեալն զյառաջաբերաւորին իւրոյ ունի նոյն գոյով ըստ բնութեանն, այլ իւրով<sup>42</sup> առանձնայատկութեամբքն<sup>43</sup> դէմ զիւր և ոչ զյառաջաբերաւորին իւրոյ: Իսկ որ յերկուցն հանգիտաբար տեղի է աստուածաբանութեան, որ ի հասարակութենէ բնութեանն և միայնակութենէ առանձնութեանն, այսպէս և ըստ այսմ արիւնակի մակացուցանելի է դնել զմիայնակն և զհասարակն ի վերայ անեցուցանել, որպէս թէ ասես Հայր ըստ առանձնատրոսութեան իւրոյ, ի վերայ բերես զհասարակն, ասելով ամենակալ, ամմահ և անապական: Արդ որպէս հայրութիւն միայնոյ, անմահութիւնն և անեղութիւնն և նմանաբար<sup>44</sup> ասիցեալն<sup>45</sup> հասարակաց, նոյնպէս ծնիցելոյն ըստ միայնակութեան ծնանիլն: Իսկ անմահութիւն և անեղութիւն և նմանաբար ասիցեալն ըստ հասարակութեան բնութեանն զնոյն իմասցիս և ի վերայ հոգայն սրբոյ, յառաջաբերին առանձնութեանն իւրոյ և նոյն<sup>46</sup> հասարակութիւն ըստ նորին բնութեան:

Այսոքիկ են տեղի աստուածաբանութեան և զառաջարկութիւն<sup>47</sup> բռնահարութեանդ առնիցես ըստ իւրաբանչիրոց տեղեացս այսոցիկ: Իսկ թափառական ձայնիք հանդերձ մտաւ իւրով հայեցուցանել ի նշմարտութիւնն, զի եթէ յըստութեանն հայելանայ աստուածաբանականն առաջարկութիւնն անհանդէս և մերձ ի նզովս:

**Ա.3 ԲՆՈՒԹԻՒՆ Է**, որ ի գոյացողականաց ոմանց բաղկանայ, և է ինֆ-նունակութինն ճանապարհորդեալ առանց երևակայութեան եւ ունի սկիզբն շարժման եւ դադարման<sup>a</sup>:

